խելամուտ եղիցես յայնմանէ · քանզի ինքն տ՟ր մեր յ՟ս ք՟ս 'ի պատկեր և օրինակ մարմնով տնօրէնութ՟են՝ զօձն ընդունի զպղնձի · զոր բարձրացոյց մովսէս · զի զօձիցն ապականեսցէ ըզխածանմունս ։ * Քանզի ասէ՝ թէ ո՟պ մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, այսպէս պա՛րտէ բարձրանալ որդւոյ մարդւոյ · զի ա՟մ որ հաւատասցէ 'ի նա՝ մի՛ կորիցէ · այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս ։ * Քանզի զոր օրինակ պղնձոյն եղեալ օձ՝ փրկութ՟են պատճառ էր վտանգեցելոցն, քանզի ապրէին հայեցեալքն 'ի նա, այսպէս և տ՟ր մեր յ՟ս ք՟ս · որք տեսանեն զնա՛ նմանութ՟ե չարացն՝ ըստ որում եղև մարդ · այլ ո՛չ անգիտանան թէ ա՟ծ է կենդանարար առիթ գոլ կենաց, և կարօղ ապաւէն լինել 'ի

դառն և 'ի թունաբեր գազանացն · ասեմ 'ի հակառակ զօրութեանցն · * Եւ այսէ ուրեմն օրինակ ուտելոյն գաւազանին մովսէսի զայլոցն գաւազանս՝ զորս ընկեցին իգետին կախարդքըն ։ ապա ուրեմն ընկեցաւ գաւազանն յերկիր, այլ ո՛չ եկաց ձևաց օձ · զի համբարձեալ դրձ՟լ եղև որ ինչ էրն · զի թէ եղև ո՟պ ասացին նմանութ՟ե ըստ մեզ՝ գաւազանն հօր, այսինքն որդի, որով տիրէ՛ բոլորից · այլ կատարեալ բարւոք զանօրէնութ՟ին՝ համբարձաւ յերկինս ։ և եղև դարձեալ 'ի ձեռն հօր ո՟պ գաւազան ուղղութ՟ե և թագաւորութ՟ե · քանզի նստաւ ընդաջմէ ծնողին, և եղև յիւրում գերունակութ՟ե · ունելով զվերինան աթոռս և մարմնով ։

⁂

⁂

Այլ 'ի նոյն խորհուրդ.

⁂

Գլուխ · ԺՕ ·

ԱՍԷ ՏԷՐՆ դարձեալ՝ մխեա զձեռն քո 'ի ծոց քո. և մխեաց ըզձեռն իւր 'ի ծոց իւր. և եղև ձեռն նր որպէս զձիւն. և ասէ ցնա դարձեալ՝ մխեա զձեռն քո 'ի ծոց քո. և մխեաց զձեռն իւր 'ի ծոց իւր. և եհան զնա 'ի ծոցոյ իւրմէ. և դարձաւ անդրէն 'ի գոյն մարմնոյ իւրոյ. *Ձեռն և աջ այ և հօր՝ զոր 'ի նըմանէ ըստ բնութե որդին անճանէ ածայինն գիր՝ եմոյծ զնա հաստատեալ ասելով՝ ես ձեռամբ իմով հաստատեցի զերկինս. զոր և երանելին Դաւիթ ասէ. բանիւ տն երկինք հաստատեցան. *Արդ տես՝ զի 'ի ծոցն մովսէսի թաքուցեալ ձեռինն իւրոյ՝ և չև ևս կրեալ զբորոտութին, արտաքս հանեալ անդրէն բորոտեալ. և դարձեալ 'ի ներքս մտեալ. սակայն և անդրէն արտաքս ելեալ և ոչ ևս երեւեալ բորոտեալ. քանզի դարձաւ ասէ անդրէն 'ի գոյն մարմնոյ իւրոյ. *Ապաւորեան մինչ դեռ էր 'ի ծոց հօր որ 'ի նմանէ բանն՝ ածութեն մաքրութբ վայելուչ երևէր. իսկ վս զի ող արտաքոյ եղև՝ ըստ մարմնաւորեն ասեմ. այսինքն մարդանալն. եղև նմանութի մարմնոյ մեղաց, և ընդ աննմանսն համարեցաւ. զոր ասաց երանելին պօղոս. թէ ոչ գիտողն մեղաց՝ վս մերմեղս արար. զի մեք եղիցուք արդարութիւն այ նովաւ.

Օ այս վարկանիմ յայտնել զբորութին. քանզի պիղծ էր ըստ օրինացն բորոտ. բայց զի դրձլ

Գ.   խը   եղև

՚Ի նոյն խորհուրդ.

Եղև ՚ի ծոց հօր, քանզի համբարձաւ յետ ՚ի մեռելոց յարութեն, որ տաքս եղեալ դարձեալ ձեռն երևեսցի մարդոյ. քանզի եկեսցէ իսկ. եկեսցէ ըստ ժամանակս տր՟ մեր յս՟ քս՟ ած՟ութե փառօք՝ և մարդկութե. որ և զգողն ըստ մեզ առանց ՚ի բաց դնելոյ ունելով. *Բաւէ ուրեմն և երանելին Պօղոս յաղագրուքն. եթէ միանգամ մեռեալն ՚ի բառնալ ըզ մեղս բազմաց, յերկրորդումն առանց մեղաց յայտնեսցի, որոց ակն ունին նմա ՚ի փրկութի. ապաուրեմն յորժամ սըրբազանն գիր անուանէ յս՟ քս՟ մի՝ մարդ առանձինն իմասցի ոչ միաւորեալ ըստ ճշմարտութե բանին. այլ այսպէս յաւէտ կացցուք. զի նա ինքն յա՟յ հօրէ բանն յս՟ քս՟.

* * *

Ո՛չ իբր ած՟ազգեստ մարդ էր ած՟. Նա ոչ ՚ի մարդ բնակեցաւ բանն ած՟. այլ յաւէտ զի եղև մարմին, այսինքն հաստատեալ Սարդ ըստ գրոյ.

Գլուխ. ԺԱ.

ՈՐՔ ԶԱՆբիծ հաւատս ունին ՚ի քս՟. և յամենեցունց ոչ դուզնաքեօք վկայեալ յուղղութի. ասեն եթէ ինքն որ յա՟յ հօրէ բանն՝ էջ յունայնութի, կերպարանս ծառայի առեալ՝ և իւր մարմին արարեալ. ՚ի կուսէն Մարիամայ ծնեալ եղև ըստ մեզ. երևեցաւ և որդի մարդոյ. է ած՟ ը՟ հոգւոյ, և ըստ մարմնոյ՝ մարդ նոյն ինքն. զոր և ած՟այինն պօղոս. հրէից ժողովրդենն գոչէր ասելով. *Բազում մասամբք և բազումօրինակօք կանխաւ խօսեցաւ ած ընդ հարսն մեր մարգարէիւք՝ իսկ 'ի վախճան աւուրցս՝ խօսեցաւ ընդ մեզ որդւովն. և զի որդ իմացի խօսեալ ած և հայր 'ի վախճան աւուրցս որդւովն. քզի խօսեցաւ առաջնոցն զօրէնսն նովաւ. զայս և ինքն որդի յիւր բանս ասէ գոլ զորս 'ի ձեռս իմաստնոյն մովսիսի. քզի ասէ մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ լնուլ՝ բայց ասեմ ձեզ. յովտ մի՝ որ նշանախեց մի է. ոչ անցցէ յօրինաց և 'ի մարգարէից մինչև ամ եղիցի. երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն. * Իսկ առայս 'ի ձեռն մարգարէին ձայնի. ես որ խօսիմ՝ մե՛րձ եմ. ապա ուրեմն յորժամ եղև 'ի մարմնի՝ յայնժամ խօսեցաւ ընդ մեզ հայր նովաւ. ո՞պ ասէ երանելին Պօղոս. 'ի վախճան աւուրցս այսոցիկ. և զի մի՛ անհաւատք լիցուք եթէ նախնիքն է որ և նախ քան զյաւիտեանս որդի, 'ի վր է ած անդէն՝ զորով և զյաւիտեանս արար. ճառագայթ փառաց՝ և նրկարագիր էութե նր գոլ ասէ հօր. * Արդ եղև ճշմարտապէս նա. որով և զյաւիտեանս արար ած և հայր. և ո՛չ ոպ վարկանին ոմանք 'ի մարդ ումեմն եղև. զի ոպ զմարդ իմացի 'ի մէնջ ած. ունելով 'ի նիւթի բնակեալ. քանզի թէ ասեն աստ զայս ունիլ և հաւատասցեն ճշմարտապէս. աւելո՛րդ երևեսցի ասելովն՝ երանելի աւետարանիչն Յովհաննէս, թէ բանն մարմին եղև. * Քանզի զի՞նչ պէտք էն մարդանալոյն և մարմնանալ ասելոյն զառ 'ի յայս բանն. եթէ ոչ եղև մարմին. զորմեզն յայտնէ լինել. և մարմնանալոյ զօրութ͞ն՝ մարդ եղեալ ըստ մեզ ցուցանէ զնա. Մնալով և գերագոյն քան զմեզ յաւէտ. զի և քան զա͞մ ստացուածս. * Աւ պիտոյ է ո͞չ վարկանիմ զորս 'ի բարւոք մտածութեան առընթեր բերել ո͞չ ասացին. և հաւանեցուցանել թէ եղև մարդ միածինն. և է ա͞ծ և մարմնով. և ո՛չ բնակեալ 'ի մարդում. և ա͞ծազգեստ զնա՛ կատարեալ, ո͞չ զայլն որք եղեն հաղորդ ա͞ծութ͞ե ն͞ր.

⁂

Խորհրդածութիւն վասն այսր.

⁂

* Գլուխ. ԺԲ. *

ԽՈՍՏԱՑԱՒ ա͞ծ վ͞ս մեր. թէ բնակեցայց 'ի նոսա և գնացից 'ի նոսա. և եղէց ն͞ց ա͞ծ, և նոքա՛ եղիցին իմ ժողովուրդ. և տ͞ր մեր յ͞ս. ք͞ս՝ ահա ես եկից. եթէ ոք բացցէ ինձ՝ մտցուք ես և հայր իմ, և օթևանս առ նմա արասցուք. անուանիմք և տաճար ա͞յ. քանզի մեք ասէ տաճար ա͞յ կենդանւոյ եմք. և դարձեալ՝ ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր տաճար են հոգւոյն ս͞բյ որ 'ի ձեզ. զոր ունիմք յա͞յ. * Արդ՝ թէ այսպէս ասեն, և զնա՛ դող զԷմմանուէլ, ո͞չ զմիոք 'ի մենջ՝ բնակեալ ունելով զա͞ծ յինքեանս, յայտնապէս խոստովանեցին. զի յորժամ զնա երկրպագեալ տեսանիցեն առ 'ի մենջ և 'ի հրեշտակաց, և յերկինս և յերկրի. յամօթ լիցին ո͞չ օտարախոհք. և զորը բաղանից գրոց դիտումընն ո՛չ գիտօղք. այլ և ո՛չ ունելով հաւաստ յինքեանս զոր աւանդե-

ծ͞ն ցին

մեզ· որ 'ի սկզբանէ ինքնատեսք և սպասաւորք եղեն բանին· *Իսկ թէ ասիցեն թէ ա՟ծ է և ո՟պ զա՟ծ փառաւորի վ՟ն 'ի նմա բնակելոյն· միայն զառ 'ի յա՟յ հօրէ ծընեալն բան· և ոչ զի եղև մարդ· լուիցեն առ 'ի մենջ՝ եթէ որք ունին յինքեանս զա՟ծ՝ բաւական իցէ լինել ա՟ծ ճըշմարտապէս· և երկրպագել յամենեցունց, ամենեքին եղիցին ա՟ծք, և երկրպագելիք· *Քանզի բնակի և 'ի ս՟բս և 'ի հրեշտակս· ունիմք և մեք զնա բնակեալ 'ի մեզ յինքեանս 'ի ձեռն հոգւոյն· այլ ոչ է պարտ ասել առայս ա՟ծս և երկրպագելիս զոր ունին զնա յինքեանս· *Ո՛չ վ՟ն այսորիկ է ա՟ծ և երկրպագելի Էմմանուէլ, զի բնակեցաւ 'ի նմա ո՟պ 'ի հասարակ մարդում, և ը՟դ մեզ իմացելոյ և առանձին գոլով և ըստ մասին բանին ա՟ծ, այլ զի եղև մարմին, այսինքն մարդ։ քանզի եկաց մնաց, վ՟ն այսորիկ ա՟ծ և երկրպագելի·

⁂

ԲԱՆՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆՔ· ՈՐՈՎ
ԼՃ ԱՆՈՒԱՆԻ ՔՆԱ·

⁂

Գլուխ · ԺԹ ։

ՅԱՂԱԳՍ խորհրդոյն ամելով որ ըստ Ք՟ի· այլոց ազգաց ոչ ծանուցաւ որդւոց մարդկան· ո՟պ այժմ յայտնեցաւ սըրբոց իւրոց· որոց կամեցաւ ա՟ծ ցուցանել՝ զինչ է մեծութի՟ փառաց խորհրդոյս այսորիկ 'ի հեթանոսս, որ է Ք՟ս 'ի ձեզ յոյսն փառաց, զոր մեք քարոզեմք։ Արդ՝ եթէ է ա՟ծազգեստ, և ոչ ա՟ծ ճշմարիտ, զի՛ արդ է նա հարստութի՟ փառաց խոր հրդոյն պատմեցելոյ 'ի հեթանոսս․ զի՞ արդ բընաւին և ա͞ծ քարոզի․

Այլ

Կամիմ զի գիտիցէք թէ որ չափ ջան ունիմ վ͞ս ձեր՝ և վասն լաւոդիկեցւոցն․ և որոց ոչն տեսին զերեսս իմ մ͞րմնով․ զի մխիթ͞րեսցին սիրտք նոցա, տեղեկացեալք սիրով․ և յա͞մ մեծութի͞ հաւանութե͞ հանճարոյ 'ի գիտութի͞ խորհրդոյն ա͞յ և քի͞․ *Ահա խորհուրդ ա͞յ՝ զՔ͞ի խորհուրդն անուանէ․ և հաւանեցուցանել կամի զոմանս հանճարով առ 'ի գիտութի͞ նր͞․ *Ա՛րդ՝ որո՞յ հանճարոյ պէտքէին որոց կամէին ուսանիլ զխորհուրդն քի͞՝ եթէ էին հանդերձեալ լսել թէ 'ի մարդ բնակեաց ա͞ծ․ այլ կարօտ է հանճարոյ, և ոչ փոքու՝ գիտելն զԷմմանուէլն՝

Ք

եթէ ա͞ծ գոլով բանն եղև մարդ․

Այլ

Քանզի 'ի ձէնջ հնչեաց բանն տ͞ն ոչ միայն 'ի մակեդոնիայ, այլ և յաքայիայ՝ և յա͞մ տեղիս հաւատքն ձեր որ առ ա͞ծ՝ պատմին․ *Ահա դրձ͞լ յա͞ծ լինիլ ասէ ըզ հաւատս․ վ͞ս որոյ ասէ ք͞ս․ որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս․ և բան տ͞ն՝ զնր͞ քարոզութի͞ն՝ ասէ․

Այլ

Քանզի դուք իսկ գիտէք զմուտն մեր առ ձեզ․ զի և ոչ ըստ միոյ ինչ եղև․ այլ յառաջագոյն չարչարեալք և թըշնամանեալք․ ո͞պ և գիտէք իսկ 'ի մէջ փիլիպպեցւոց համարձակեցաք ա͞վ մերով․ խօսիլ ձեզ զաւետարանն ա͞յ․ *Ահա խօսելով ա͞վ զա͞յ աւետարանն

րանն · խօսեցաւ քարոզել հեթանոսաց զք̅ս·

Առ․

Յիշեցէք եղբարք զաշխատութ̅ի մեր· 'ի տուէ և'ի գիշերի գործելով առ 'ի չծանրանալոյ ումեք 'ի ձէնջ, քարոզեցաք ձեզ զաւետարանն ա̅յ· և դարձեալ՝ վ̅ս այսորիկ գոհանամ զա̅յ անպակաս, զի առեալ զլուր բանին ա̅յ առ 'ի մէնջ ընկալայք ոչ ո̅պ զբան մարդկան, այլ ո̅պ և է իսկ ճշմարիտ բանն ա̅յ· որ ներգործէ 'ի ձեզ հաւատացելոց· *Արդեօք ոչ յայտնապէս աւետարանն ա̅յ, և ա̅յ բան ասէ զյաղագս ք̅ի քարոզութ̅ին· որ և զի ա̅րդ ոչ է ամենեցուն յայտնի·

Առ․

Քանզի երևեցաւ շնորհն ա̅յ փրկիչ ա̅մ մարդկան · որ խրատէ՝

զմեզ՝ զի ուրացուք զամպարշտութ̅ի և զաշխարհական ըղ ցանկութ̅իս· զգաստութ̅բ և պարկեշտութ̅բ և ա̅ծպաշտութ̅բ կեցցուք յա̅խ յայսմիկ· և ակն կալցուք երանելի՝ յուսոյն, և յայտնութ̅ե փառաց մեծին ա̅յ և փրկչին մերոյ յ̅ի ք̅ի· *Ահա ա̅ծ և մեծ անուանի հաւաստեաւ ա̅ր մեր յ̅ս ք̅ս· քանզի նախինքն է՝ որում յայտնութ̅ե փառացն սպասեմք· 'ի ձեռն ուղղակի վարուց և անբծութ̅բ փութացեալք· այլ թէ է ա̅ծազգեստ մարդ· զի ա̅րդ իցէ և մեծ ա̅ծ՝ կամ երանելի իցէ՝ որոյ իցէ յոյս 'ի նմա· *Եթէ ճշմարիտ մարգարէն երեմիաս զոր ասէն · անիծեալ որ դիցէ յոյս իւր 'ի մարդ· քանզի և ոչ ա̅ծ ուրեք անուանէր զնա ո̅պ ասացի ա̅ծազգեստ ուսուցողացն· և զի՞նչ է որ արդելու և զայլն ա մնևին գոլ ածս և երկրպագելիս՝ որք զած ունէին յինքեանս. բայց ած մեծ և երանելի ունելով զյայտնութին՝ անուանէ զքս երանելին Պօղոս. որ և գտանի առեալ յաղագս հրէից և Էմմանուէլի. որոց հալածքն և կապանքն. և աւետիքն յորոց և քս ըստ մարմնոյ. որ է ՚ի վրյ ամենեցուն ած օրհնեալ յաւիտեանս ամէն. *Նա և զի ըստ ածայնոյն յայտնութեն առնէր զքարոզութի, հաւատալի եղիցի յասացելոյն իւրոյ. ապա յետ ամաց չորեքտասանից՝ դարձեալ ելի յերուսաղէմ ընդ բառնաբայ. առեալ և ընդ իս զտիտոս, և ելի ըստ յայտնութեն. և զեկուցի նոցա զաւետարանն՝ զոր քարոզէի առանձին թուեցելոցն. զի մի՛ գուցէ ՚ի զուր ինչ ընթանայցեմ, կամ ընթացայ՝ քարոզել հեթանոսաց ոպ զած. *Յամուրեք ածային անուանելով զոր ՚ի վրն նր խորհուրդն, ել յետէմ ըստ յայտնութեն. և հաւոր դիւր թուեցելոց. այսինքըն ընդ որբոց առաքելոցն. զի մի գուցէ ՚ի զուր ընթանայցէ՝ կամ ընթացաւ, արդեօք լշեալ յերուսաղէմ. և դրձել ՚ի ժողովս հեթանոսաց մտեալ ուղղեաց ինչ յառաջնոցն. և ոչ եկաց մինաց ած խոստովանելով զքս. *Որ և գրէ՝ առ ոմանս, զարմանամ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք ՚ի կոչողէն զձեզ՝ յայլ աւետարան՝ որ ո՛չ է այլ. բայց եթէ իցեն ոմանք որք խռովեցուցանեն զձեզ. և կամիցին շրջել զաւետրանն քի. *Նա և թէ մե՛ք կամ հրեշտակ յերկնից աւետրանից է ձեզ աւելի՛ քան զոր առիքն՝ նզովեալ լիցի. և

Օր ա̅ծ ուի Տ̅ն։

Թողեալ զայլն ամենե
սին զա̅ծ բնակեալս ու
նովին յինքեանս, միայն
քարոզէր զյս̅ ոգ̅ զա̅ծ։

* * *

Աշ՛ ՀԻ ա̅ծ է Տ̅ն։

* * *

*Գլուխ. Ի. *

ՔՐԻՍՏՈՍ
զադս՝ԲԻ՛ յոր
ժամ էրն յերու
սաղէմ ի տօնին բզատկ
հաւատացին յանուն նր̅․
տեսեալ զնշանսն զոր
առնէր․ բայց ինքն յս̅
ոչ հաւատայր զինքն նց̅
վս̅ գիտելոյն իւրոյ զամե
նեսեան․ եւ զի ոչ ինչ էր
պիտոյ եթէ ոք վկայես
ցէ վս̅ նր̅․ զի ինքն իսկ
գիտէր զինչ էր ի մար
դն։ Եթէ ա̅ծազգեստ
մարդ․ զիա̊րդ ոչ պատ
րէին հաւատացեալքն
յանուն նր̅ յերուսաղէմ
բազումքն․ վասն էր եւ
միայն գիտէր զոր ինչ

Օր ա̅ծ է Տ̅ն։

Ի մարդն՝ զոր ոչ ուրուք
եւ այլոց գիտացեալ․ քան
զի սատեղծանել ասի ա̅յ
միայնոյ զսիրտս մր̅․
Վս̅ էր եւ միայն թողու
զմեղս․ քանզի ասէ թէ
իշխանութի՛ ունի որդի
մարդոյ յերկրի թողուլ
զմեղս․ էր աղագաւ քան
զայլսն աթոռակից է ա̅յ
եւ հօր․ հիմ միայնում ըս
պասաւորէին հրեշտակք․
*Նու մեզ ուսոյց․ հաստ
բակաց համարէր հայր
զոր ի յերկինսն․ քանզի
իւր միայն էր․ այլ ասի
ցես եթէ զայսոսիկ ըղ
ձայնս՝ գնելիէ բնակելոյն
բանի․ եւ զիա̊րդ ոչ էր
վայելուչ ըստ մարդա
րէիցն չփուցասել եւ նմ
այսպէս ասէ ա̅յ․ այլ յոր
ժամ զգերագոյն օրինա
դրել կամէր՝ զօրինադրի
վայելուչ պատիւն եդել
իւր՝ ասէր․ ես ասեմ ձեզ
Օ խա̊րդ զինքն աղա
գաւ ասէ զոր ինչ պարտն
է ա̅յ վս̅ գոլոյն ը̅ ծըշ

ծ զ̃ մար

մարտուե̃ն որդի · որ և զի ա̃րդ թէ ա̃ծազգեստ էր՝ էր ազատ ըստ բնութե̃ · քանզի միայն ա̃ծութի̃ն է ազատ · և ոչ ընդ ուրուք իշխանութե̃ · քանզի ոչ միայն յանձն առեալ զամենեցունց գովութի̃ն, այլ ոչ̃ պարտուց օրինակա̃ն ընդունէր զպաշտօնն · *Իսկ եթէ կատարումն օրինաց և մարգարէից է ք̃ս · և է ա̃ծազգեստ մարդ , զի արդ ոչ է ճշմարիտ ասել եթէ մարգարէականացն քարոզութեանցն կատարումն՝ մարդապաշտութե̃ խոստումն 'ի մեզ ենույծ · ապա քարոզէին օրէնքն՝ տ̃ն ա̃յ քում երկիր պ̃գցես · և զնա միայն պաշտեսցես · դաստիարակեաց մեզ 'ի ք̃ս · ո̃լ 'ի գիտութի̃ վերաբերելով զորս 'ի ստուերին՝ յառաջագոյն արդեօք 'ի բաց մերժեալ զերկրպագելն ա̃յ , երկրպագեցաք զա̃ծ ունողի՞ նիւթի *Բ̃ան զի ուր էր յառաջագոյն իմանալ ասա ինձ · յերկինս թէ 'ի մր̃դում, 'ի սերովբէս թէ 'ի հողեղինի մարմնի · եթէ ա̃ծազգեստ մր̃դ էր · զի ա̃րդ մերձաւորութ̃ հաղորդեաւ մեզ մարմնոյ և արեան · եթէ բաւական էր բնակիլն առ 'ի հաղորդութի̃ մերձաւորութե̃ մեզ 'ի նոյնս · իսկ եթէ հաղորդիլն նորա և մարդանալ էր՝ 'ի բազումս բնակեցաւ 'ի սրբոցն և մարդացաւ · և ոչ միանգամ · այլ յոլովակի · *Եւ զի ա̃րդ միանգամ 'ի վախճան աւիտեանցն յանարգութիւն մեղաց իւրով պատարագաւն յայտնեալ ասի · և զի ա̃րդ մի' գալուստ մեզ քարոզեն բանին՝ աստուածաշունչ գիրք ·

եթէ ա̅ծազգեստ մարդ էր՝ տաճար ուրեմն եղեւ նա ա̅յ. եւ զի մարդ է 'ի մեղ ք̅ս արդեօք. ոչ տաճար 'ի տաճարս. թէ ոչ ա̅ծ 'ի տաճարս հոգւոյն. եթէ ա̅ծազգեստ մարդ էր՝ զի մարդ է կենդանարար մարմին նր միայնոյ. քանզի պարտ էր գոլ այսպիսի եւ այլոցն՝ յորս բնակեաց բոլորեցն ա̅ծ. *Գ.րէ՛ ուրեմն եւ ա̅ծային Պօղոս. արհամարհեալ ուրուք զօրէնսն մովսէսի առանց գթութե երկուք կամ երիւք վկայիւք մեռանէր. իսկ որ չափ եւս առաւել պատժոց արժանի համարիջիք զայն՝ որ զորդին ա̅յ առ ոտն եհար եւ զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ. որ եւ ա̅ծային պատուիրան էին օրէնքն խօսեցեալ 'ի ձեռն հրեշտակաց. *Ա.րդ՝ զի մարդ վատթար պատժոց համարեսցի որ խառնակ համարեցաւ զարիւնն ք̅ի. եւ զի մարդ վեհագոյն է քան զօրինացն պաշտօն հաւատոն որ 'ի ք̅ս. այլ ոչ առաջի ոչ ոք ոչ մի 'ի սրբոցն ա̅ծազգեստ մարդ. այլ ա̅ծ ըստ ճշմարտութե. եւ գերազար դապէս ունի զփառսն. զի ա̅ծ գոլով բնութե՛ եղեւ մարմին. այսինքն մարդ կատարեալ բանն ա̅յ. քանզի մտաւոր եւ անձնաւոր զմիաւորէլն ընդ նմա մարմինն գոլ հաստատեմք. եւ ճշմարիտ է ամենայն իրօք միաւորութիւն.

⁂

Օ. ԻԱ՛ ԻՏ ՊԱՐՏ Է ԻՄԱՆԱԼ ԶԻ ԲԱՆՆ ՄԱՐՄԻՆ ԵՂԵՒ ԵՒ ԲՆԱԿԵՑԱՒ 'Ի ՄԵԶ.

⁂

Գլուխ. ԽԱ.

Օ. Ա. Ի. Ա. կէն աբրահամու բուսն հար ծ̅ր̅ կա կանել առ Պօղոս միածին բանին ա՟յ. այլ և մերձաւորութ՟ե կցորդ մեր արեան և մարմնոյ. *Ցուցեմք և զյովհաննու բանն զոր ասաց. Թէ բանն մարմին եղև և բնակեցաւ 'ի մեզ. արդեօք եղև գիտումն հոգեկրիցն զայն ուսուցանել, եթէ փոփոխման անընդունակ էր բանն ա՟յ. զոր ստացուածոցսէ վայելուչ կրել այլայլումն. ո՟պ զի և զոր ինչ ոչն էր լինել. Թերևս կամ անհարկութ՟ե իւրով ածել առայս. այսինքն յորմէ յառաջն գայր, նմա՛ թէ եցեալ մղել յայլայլութ՟ի բնաւորական. մի՛ լիցի. *Բանզի միայն ինքն՝ ոչ ընդունելով յիւր բնութ՟ին այլայլութ՟ի և փոփոխման բաւծեր կրել ոչ գիտելով. ք՟զի հաստատուն է վերինն բնութ՟ի՝ յորս էրն միշտ. *Ոչ խառն եղև մարմին բանն, կարևոր է տեսանել. արդ նախ ա՟ծայինն գիր յոլովակի մարմին անուանէ զմարդ. և ո՟պ 'իմանէ առեալ՝ ա՟մ կենդանւոյն առնէ յայտնումն. ոչ ինչ պակաս և 'ի հոգւոյ միայնոյ է երբեք զի առնէ. արդ՝ գրեալ է թէ տեսցէ ա՟մ մարմին զփրկութ՟ի ա՟յ. զոր և ինքն ա՟ծայինն պօղոս՝ ոչ ինչ զդացուցի մարմնոյ և արեան. գոչէ՛ առ իսրայէլ և ա՟ծայինն մովսէս. եօթանասուն և հինգ հոգի իջին հարքն քո յեգիպտոս. և ո՛չ ոք ուրեք արդեօք, թէ մերկք և առանց մարմնոյ հոգիքն առնէին զիջանելն յեգիպտոս. այլ և ոչ առանց հոգւոյ մարմնոյն բաշխէր ա՟ծ առատապէս զփրկութ՟ին. *Արդ՝ յորժամ լինիցեմք 'ի մարմին լինել զբանն. մարդ իմասցուք 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ. և ա՟ծ գոլով բանն եղև կատարեալ մարդ. մարմին առեալ անձնաւոր և մտաւոր. և միացուցեալ զայն ըստ ճշմարտութե՟ ընդ իւր. ըստ որում եղանակի գիտէ ինքն. քանզի մերոց մտաց անհասանելի՛ է ամենեւիմբ այսպիսեաց տեսութի՟. *Նուաստացաւ որդի մարդոյ. և թէ պիտոյ է որպ՟ ընդհայելի տեսեալ ասել ինչ. նշանակեն մրդ՟կային միտք. միաւորել ըզ բանն ը՟ մարմնոյն անձնաւորի բանական. որպ՟ մինչ զմարդոյ անձն ը՟ իւրոյ մարմնոյ այլաբուն գոլով. այսպէս վիճակել յառ նա կցորդութի՟ն և միաւորութի՟. որպ՟ զի թուիլ ոչ գոլ այլ քան զնա վ՟ ըստ շարադրութե՟ մի յերկոցունց կատարմանն կենդանւոյն.

*Սակայն որպ՟ ասացի, մնացեալ նր՟ յիւրում բնութեն. ապա ուրեմն

ոչ ըստ փոխադրութե՟ կամ ըստ յեղման ասեմք լինել բանն այ՟. այլ և ոչ ՚ի գոլոյն ած՟՝ նուաղել ուսանեք. զի մարմին առեալ ՚ի կնոջէ, և միաւորեալ յարգանդէ, ընդ նմա եկն մարդ յառաջ. մարդ՝ նոյն ինքն և ած՟ գոլով. *Քանզի ոչ առ ՚ի յայ՟ հօրէ անճառելի ծննդեան ՚ի բաց ընկեցեալ՝ որպ՟ ըսկիզբն գոլոյն կոչեցեալ կրեաց զոր ՚ի կնոջէն. այլ յաւէտ թոյլ տայր իւրում մարմնոյ ըստ իւրումն բնութե՟ օրինի կոչիլ ՚ի գոյութի՟. ըստ ծննդեան օրինակի ասեմ. բայց սակայն ունի ինչ և այլանըման մարդկային բնութի՟ ՚ի նմա. քանզի ծնաւ ՚ի կուսէ միայն. և ունի մայր զանփորձն ամուսնութե՟. եղեալ մարմին և բնակեալ ՚ի մեզ ասէ. զի երկոքումբք ցուցցէ. եղեալ մարդ, և ոչ փո փոխեալ յիւրոյն. քանզի եկաց մնաց որ ինչ էր և՛ ի մարմնի ած խօսք, ոպ այլ յայլում բնակեալ իմեք. այսինքն ածային բնութն 'ի մարդկութեն. ոչ կրեալ շփոթումն և կամ խառնակումն ինչ. կամ փոխադրութի՝ յոր ինչ ոչն էր. քանզի բնակեալ յայլումն ասացել ոչ նոյն եղև այն՝ որ ինչ էն. որ յորում բնակին. այլ իմանի յաւէտ այլ յայլում. բայց բանին բնութն՝ կամ մարդկութն միայն նշանակէ ըղ տարբերութի այլայլութեն յայսոսիկ. քանզի մի՛ յերկոցունց իմանի քս. *Ապա ուրեմն զանշփոթութին ոպ ասացի բարւոք պահեալ՝ բնակեալ ասէ 'ի մեզ զբանն. քանզի մի որդի գիտէ մարմին եղել զմիածինն և մարդացել. և տես ինձ զածայինն աւետարանիչ՝ բարւոք եղանակաւ պատկել կամեցեալ զօրըր բնութի մարդոյս. քանզի ասաց 'ի մեզ բնակիլ բանին՝ ոչ այլ իրիք աղագաւ ոպ համարիմ լինիլ անցել զբանին մրդ նոյն այլ զի մեք 'ի նմա ոպ հաղորդուէ հարստացեալ՝ հոգւով սրբով զորդեգրութեան շահեալ իր. որդ՝ զմիաւորութին 'ի վր քի ծայրագոյն և ճշմարիտ լինիլ հաւատամք. *Իսկ թէ և ասի բնակիլ 'ի մեզ. ոչ կալմամբ արասցէ ինքն ըղ բնակիլն 'ի մարմնին իրում. զի բնակեցաւ 'ի նմա ամ լրումն ածութեն մարմնապէս. այսինքն ոչ ըստ հաղորդութե՝ կամ կալման. ոպ զի մեզ պարզաբար ոպ լուսոյ փայլատակեա. և կամ հրոյ զբնաւորեալն ջերմութի՝ յորս մերձն են աւեալ. *Այլ զի այսպէս ասացուք նորին ածայնոյ և անմահ բնութեն. այն

կա որ

որ ինչ էին իմացելս բնակութիւն արարեալ ըստ ճշմարիտ միաւորութեն՝ ո՟չ ասացի իսկ զոր ՚ի կուսէն տաճար. քանզի մի այնպէս իմանի. և է յա՟ քա՟. բայց նուաղիմք. զի յոյժ սաստիկ պատմութեն է բանս. ոչ ուրացայց. և ոչ արդեօք իրաւամբ անհաւատալի լիցի այսր պատճառոյ աղագաւ ք՟ի խորհուրդն. այլ և ս առաւել հրշ՟ալի լիցի վայելչաբար. * Քանզի որչափ վեհագոյն է ըստ մտաց և բանի, այնքան յաւէտ է և անդր քան զա՟մ սքանչելիս. արդ մարմին եղեալ զբանն. այսինքն մարդ կատարեալ. և ոչ ուրեք ա՟մ իրօք մարմնոյ ծանրութե՟ ըմբռնեալ ասեմք. քանզի անխրատաբար է այսպէս իմանալ. քանզի լինուլ և այսպէս հաւատամք ըստ սովորութե՟ նմա զերկինս և զերկիր, և զևսն խո

նարհագոյնսն. զի ամենաբաւական է ա՟ծութին. և ա՟մ՝ փոքունք են նըմա. * Իսկ թէ զիա՛րդ և ըստ միոյ և յամենեսեն է ո՟չ բոլոր. դժուարին է ասել և իմանալ. ոչ թեթև, այլ յաւէտ և անհասանելի՛ ամենևիմբ. * Բայց տրուեալ լինի որպէս վարկանիմ և այս նմա անմարմինն գոլ, և զբաժանումն ոչ առնուլ յանձն. և իւր բանին ասի առ ՚ի մէնջն մարմին. ոչ ո՟չ մարդոյ ի՛ւր ծիծաղականն. և կամ ձիոյ իւր խինջականն. այլ զի եղև ն՟ր ըստ ճշմարիտ միաւորութեն զգործաւորականն նորապետան. առ որ բնաւորեցաւն ներգործել բայց միայն որոց ՚ի մեզս. * Իսկ թէ և ասի և առաքիլ դէպ եղեալ ա՟ծ գոլով բանն. մի՛ ոք ամբոխեսցի զայն զմտաւ ածել թէ ո՞ւր գնայցէ անմարմինն. քանզի տա բեալ լինի որ զա՟մ լնու. և գիտելի է յաւէտ՝ զի է եղանակ առաքելութե՟ն ոչ տեղի ՚ի տեղւոջէ փոփոխմամբ առաքելոյն։ այլ պաշտօն առեալ զքահանայականն· զոր և սրբոց առաքելոցն ասեմք տուեալ առ ՚ի յամենեցունց մեր փրկչէն ք՟է։ * Ոպ՟ զի՝ եղբարք ս՟բք երկնաւոր կոչմանն բաժանորդք· հայեցարուք յառաքեալն, և ՚ի քահանայապետ խոստովանութ՟ես մերոյ յ՟ս· ք՟ զի տես թէ զիա՛րդ յորժամ էցոյցն քահնայագործօղ մարդկօրէն · որ և ա՟ծ գոլով ըստ բնութե՟ · յայնժամ և զիւր առաքելութե՟ն հետևեցոյց նմա· ևանտեղի ոչ ինչ է ո՟պ ասացի. եթէ և առաքե՟լ ասի առ ՚ի յա՟յ հօրէ բանն. * Բանզի խոստովանելի է եթէ լնու զա՟մ · և ոչ հեռանայ յէիցս յումեքէ · բայց մեք մարդկայնովք ձայնիւք մեկնեալ զա՟ծայինսն· որով ըստ մարմնոյ ձևի զանմահ բնութե՟ն իմանալ սովորեալք զանօրէնութ՟ին. * Որ և հոգւոյն սրբոյ լնուլ զա՟մ գրէ երանելին պօղոս · և զի էք որդիք՝ առաքեաց ա՟ծ զհոգի որդւոյն իւրոյ ՚ի սիրտս ձեր աղաղակելով աբբա՛ հայր. ասէ ուրեմ՟ն և ինքն փրկիչն · լա՛ւ է ձեզ զի ես երթայց · զի թէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. իսկ յորժամ երթայց՝ առաքեցից զնա՛ առ ձեզ. արդ՝ պարտ է յա՟մէ ՚ի բաց դառնալ. և ՚ի բարեպաշտիկն և ՚ի ստոյգ ընթանալ գիտութ՟ի · քանզի զայս արարեալ՝ զանձինս մեր օգտեցուսցուք.

⁂

Աւր՝ չորրորդ խորհրդոյ ծննդեան՝ Տեառն.

Գլուխ. ԻԲ.

ԾՆԱՒ անճառաւէր յայ հօրէ բանն, քանզի անդր է քան զամ միտս ծնունդն. եւ անմարմնոյ վայելուչ բնութ. *Սակայն իւր ծնունդն իմանալի ծնողին ծնեալն եւ համագոյն. վայսորիկ անուանի եւ որդի՝ յայտնելով մեզ անուանն, որպէս մինչ երկանց եւ ծննդեան՝ ըստ բնութեն. քանզի կենդանի գոլով միշտ եւ առընթեր հօր, հարկ է ամենայնիւ գոյակից եւ էակից գոլ նմա մշտնջենաւորապէս որէն հայր՝ էր ուրեմն բանն իսկզբանէ. եւ առ ած, որպէս ասէ ի մաստունն աւետարանիչ:

Օ խորհուրդ ածածին՝ Տեառն.

*Իսկ յետին յաւիտենիս ժամանակս վասն մեր մարդկան՝ եւ վասն մերոյ փրկութե մարմնացաւ եւ մարդացաւ եւ ոչ ինչ ուրեք որով որ ինչ էրն նուազեաց. այլ ունելով անփոփոխելի զիւրն բնութի. եւ յածութեն գերունակութիս գոլով միշտ. խոնարհեալ վասն մեր անօրինաբար յունայնութի եւ յաղքատութի. ոչ անպատուեալ զմարդկայնոցս չափու վայելուչն. քանզի հարուստ գոլով աղքատացաւ վասն մեր ըստ գրեցելումն. զի մեք նորա աղքատութեն հարստասցուք *Արդ՝ եղե մարդ եւ ծնունդ մարմնական զոր 'ի կնոջէ կրեալ ասի. վասն որոյ զոր 'ի կուսէն առեալ զմիացեալն ընդ նմա ըստ ճշմարտութե մարմնն. ուստի եւ ածածին գոլ ասեմք զսբ կոյսն որպէս մարգարէն. այսինքն ընդ

կտ մար

մարմնոյ ծնեալ զնա. որ և ծնունդ ունէր որ զոր նախ քան զյաւիտեանս ՚ի հօրէ։ Եւ կարծեաւն սմանց յայնժամ կոչել սկիզբն գոլոյ բանին յոր ժամ եղև մարդ։ ան սուրբ է ամենևին և յոյժ անտեղի. քանզի վըճիռ հաստանէ ՚ի վ՟ը նց՟ ինքն փըրկիչն՝ անհանճարս գոլ՝ ասելով յաղագս իւր. ամէն ասեմ ձեզ. յառաջ քան զլինելն աբրահամու եմ ես։ *Եւ զի մ՟րդ էր յառաջ քան զաբրահամ. որ ՚ի բազում յետոյն ժամանակս ծընաւ ըստ մարմնոյ. բաւական է ոչ վարկանիմ ա- ՚ի յանդիմանութի՟ նց՟. և ա՟ծայինն յովհաննէս ասելով. սա է վ՟որոյ եսն ասացի զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղև, զի նախ քան զիս էր. արդ ՚ի բաց թողեալ զաւելորդ յորձակումն՝ յայսոսիկ ոչ ՚ի յոյժ բարեդիր. *Ներ

Ե

յաւէտ ըստ այն գնասցուք՝ զոր և օգտակար գոլ ասեմք. մի՛ դժուարեսցին սմանք յորժամ ա՟ծածին լուիցեն զն՟ր կոյսն. և մի՛ անհաւատութե՟ հրէականաւ լցցեն զանձինս իւրեանց. յաւէտ՝ զի և հեթանոսականաւ անպարշտութե՟. *Քանզի հրէայքն ՚ի վ՟ը յառնէին Քի՟ ասելով. վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ, այլ վ՟ը հայհոյութե՟. զի դու մարդ գոլով՝ առնես զքեզ ա՟ծ։ *Իսկ հեթանոսացն մանկունք՝ այպն առնեն զեկեղեցական կրօնիւք. լսելով թէ ծնաւ ա՟ծ ՚ի կնոջէ. այլ նոքա՛ զիւրեանց ամպարշտութե՟ն կրիցեն պտուղս. Քանզի լուիցեն ՚ի մէնջ թէ՝ յիմարն անմտութե՟ խօսեսցի. և սիրտ նր՟ զնանրութ՟ խոկասցի. *Բայց է մեզ խորհրդոյս բան.

Կէ Թէ

Թէպէտ և հրեից գայթ՟կղութի՟ և հեթանոսաց յիմարութի՟, այլ մեզ որոց գիտեմքս զնա՝ արժանի սքանչանալոյ. ճշմարիտ փրկութի. և հեռի յանհաւատութե՟.

* ՝Քանզի թէ էր ոք բընաւին որ ասել յանդըգնէր զմարխամն զայն զոր 'ի յերկրէ՝ մերկ ա՟ծութե՟ն լինիլ մայր. և ծնանիլ 'ի նմանէ զէութիւնն որ անդրն է ջ՟ զա՟մ ըստ եղծածս. մոլորութիւն և յիմարութի՟ էր իրն. և այլ ինչ ոչ. * ՝Քանզի ոչ յերկրէ եղև ա՟ծայինն բնութի՟. և ոչ արդեօք լինէր արմատ անապականութե՟. որ ընդ ապականութե՟ն. և ոչ ծընանէր մահկանացուն ըղբոլորից կենդանութի՟. և ոչ լինէր պտուղ ըղգայականիս մարմնոյ՝ անմարմինն՝ որ 'ի վերն է քան զլինելութիւն. որ ը՟ լինելութե՟ն է անսկըզբաննն. որ ընդ ժամանակա՛ն և սկզբանն. Բայց վ՟ս զի զբանն ա՟յ հաստատեմք լինիլ ընդ մեզ. և մերոց մարմնոց նման առնուլ մարմին. և միացուցանել զայս ըստ ճշմարտութե՟ ընդ իւր, յայտ է թէ ը՟ եղանակի իրիք՝ զի զոր 'ի վերն է քան զմիտս և զբան՝ ծնանիլ. և այսպէս ըստ մարմնոյ եղեալ մարդ. զի՞նչ է անտեղի և անհաւատալի լինելոյ վայելուչ. որ և մարդոյ հոգւոյ ո՟պ յոլովակի իսկ ասացուք այլաբուն գոլով 'ի մարմնոյ. Բայց եղեալ հանդերձ նովա՛ւ. ո՟պ ընդ նմա միանալ ասեմք. և ոչ ոք ո՟պ վարկնիմ ստերիւրեսցի. եթէ զմարմնոյ բնութի ունի սկիզբն իւրոյ գոութե՟ն հոգի, այլ արկանէ՝ զնա անճառապէս 'ի մարմինն ա՟ծ և ծնանի հանդերձ նովա՛ւ. բայց յերկոցունց ս՟հմանեմք

կ՟ զկեն

Թուէ ա̃ծածին է մարիամ. զկենդանին. յայտ է ըզ մարդն. ապաուրեմն ա̃ծ էր բանն եւ եղեւ մարդ. եւ վ̃ս զի ծնաւ ըն̃ մարմնոյ վ̃ս մարդկութեան՝ ա̃ծածի՛ն է հարկաւորապէս ծնօղ նր̃. քանզի թէ ոչ ծնաւ զա̃ծ՝ եւ ոչ ասացի ա̃ծ 'ի նըմանէ ծնեալն. * Իսկ եթէ ա̃ծ անուանեն զնա՛ ա̃ծաշունչ գիրք. եւ ա̃ծ մարմնացեալ եւ մարդացեալ. մարդանալ ոչ էր այլազգ բայց միայն զի 'ի ձեռն ծննդեանն՝ որ 'ի կընոջէն. զի մարդ ոչ է ա̃ծածին որ ծնաւն. եւ զի ա̃ծ ճշմարտապէս է ծընեալ. եւ յա̃ծաշունչ գրոց գիտացուք.

* * *

Վ̃ն յայտնութեան յաղագս Քրիստոսի.

* Գլուխ. ԻԳ. *

ԱՀԱ ԿՈՅՍՆ յըղասցի եւ ծնցի որդի. եւ կոչեսցեն զանուն նր̃ Էմմանուէլ. արդ՝ զի՛արդ ա՛ղէ ասա՛ ինձ. որ 'ի սըրբոյ կուսէն ծընեալ է՝ Էմմանուէլ անուանի. Էմմանուէլին ոչ ասացի, եւ անդէն նշանակեցելոյ զըստ մեր բնութեա ըլինիլն՝ վ̃ս մարմնոյն ա̃ծ գոլով ըստ ճշմարտութե̃ զոր յա̃յ բանն. այլ Էմմանուէլ. * Քանզի Թափեաց զինքն ծնունդ կըրեալ որ ըն̃ մեզ. այսպէս եղեալ ընդ մեզ. ա̃ծ ուրեմն է 'ի մարմնի. եւ ա̃ծածին է ճշմարտապէս որ ծնաւն մարմնապէս. այսինքն ըստ մարմնոյ

Ր.ժլ.

Ր.ժլ նաքամ կամեցին զի հրաշիւք լեալ էին, զի մանուկ ծնաւ մեզ որդի եւ տուաւ մեզ. որոյ իշխանութիւն իւր ՚ի վերայ ուսոց իւրոց. եւ կոչի անուն նորա Հրեշտակ մեծի խորհրդոյ. ըստ որս զի մանուկ անճանի ծնունդ կրեալ ը՟ մեզ * Ր.ժլ այս մանուկ աստեղբ երեւեցաւ զոր գուշակեց երկին. մոգք երկրպագին եկեալ ՚ի ծագաց երկրի. Հրեշտակք հովուաց աւետարանէին փրկիչ ծնեալ ասելով. խաղաղութի՟ անուանեալ զնա. եւ հօր հաճութի՟. եւ Հրեշտակ մեծի խորհրդոյ. ք՟ զի յայտնեաց մեզ զկամս հօրն, որ հաճեցաւ նորա ապրեցուցանել զորըս ՚ի ներքոյ երկնից. եւ ՚ի ձեռն նորա. եւ նովաւ զաշխարհ հաշտեցուցանել ընդ իւր. * Բան

զի ընդ Բ՟ի հաշտեալք հաշտեցաք ընդ այ. զի ած է ճշմարտապէս ը՟ այ եւ հօր. մի՟ արդեօք է ՚ի խորհուրդ հօր. որով եւ ՚ի մեզ եղեւ հրեշտակ. ինքն ուսուցէ զմեզ ասելովն. թէ այսպէս սիրեաց ած զաշխ՟ զորդին իւր միածին ետ. զի ամ՟ որ հաւատասցէ ՚ի նա՝ մի՝ կորիցէ. այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս. Որդի միածին ուրեմն է ՚ի սրբոյ կուսէն ծնեալն. քանզի նա է մարդացեալ բանն եւ ած մարմնացեալ. եւ այսպէս երեւեալ որոց ՚ի յերկրիս. որ եւ ասէ. որ հաւատայ յիս՝ ընկալցի զկեանսն յաւիտենականս. եւ զի ՚ի ձեռն նորա եւ նովաւ հաւատացաք ՚ի հայր, հաւատէ՝ ասելով, թէ որ հաւատայ յիս՝ ոչ հաւատայ յիս. այլ յառաքիչն իմ.

կր Ր.ժլ

* Ա․ Ղ․ *

Լուարուք ինձ կղզիք և զգուշացարուք հեթանոսք․ յետ բազում ժամանակաց հաստատեսցի ասէ տր̄․ յորովայնէ մօր իմոյ կոչեաց զանուն իմ․ Աստուած գոյով բանն՝ ոչ անդփոխացաւ թէ ծնունդ կրեսցէ․ զոր ՚ի կնոջէ մարմնացեալ վս̄ մեր․ և զփոխանէր թէ կոչեսցի քս̄ յս̄ յամենեցունց որ ՚ի ներքոյ երկնից․ ա̄յ և հօր ըզնր̄ անուանն որ դեռ պատմելով որ է օրհնեալ ՚ի վր̄ երկրի․ * Դու տես թէ զիա՛րդ անուանէ մայր իւր ըզծնօղն ա̄ծ մարմնացելոյ․ ապա ուրեմն թէ գիտէ զինքն ա̄ծ գոլ ըստ ճշմարտութե̄ որ ծնաւն մարմնապէս, ա̄ծածին կոչեսցի և քաջ վայելչաբար․ իսկ եթէ ոչէ ա̄ծ և վտանգաւորս յաւէտ և անդէպս զայս խորհես

Ա․

ցին ոմանք, ՚ի բաց մերժեսցեն և զնոյն զսուրբ կոյսն ՚ի լինելոյ ա̄ծածին․

* * *

Որ ա̄ծ անուանի Եմմանուէլ երևեալ մանկինն․

* * *

* Գլուխ․ ԻԳ․ *

ՍՈՂՈՄՈՆ ասէ ՚ի կլ̄ն յաղօթս՝ և այժմ Տր̄ Ա̄ծ Իղ̄ի՝ հաւատարիմ եղիցի բանն զոր խօսեցար ծառայի քում դաւթի․ ե՜թէ ճշմարտապէս բնակեսցի ա̄ծ ը̄ն մարդկան յերկրի․ * Արդ տես զիա՛րդ սքանչանայր ընդ բանին մարդանալն․ ք̄ զի անհաւատալի՛ թուէր իրն․ իսկ բնակեցաւ ա̄ծ յերկրի ընդ մարդկան՝ յորժամ եղև մարդ․ ապա թէ ո՛չ զիա՛րդ իցէ հրաշափառ․ զիա՛րդ և սքանչանալոյ արժանի․

կ̄թ եթէ

եթէ ոչ յիւրում բնաց հանէր նորաստացեալ ա՟ծ. զի յայտէ զի պարունակելով զնա՟ և միահամուռ ունելով ՚ի գոլ զարարեալսն ածելով յէութ, և զչեւ եղեալսն *Իսկ զարմացումն ճշմարտապէս և հիացումն. զի բնակեցաւ յերկրի ը՟դ մարդկան մարդ եղեալ բոլորից ա՟ծ. ըստ որ՟եցելոցն խոստմանց ա՟ծ այնոյն դաւթի. ք՟զի գրեալ է թէ երդուաւ տ՟ր դաւթի ճշմարտութե՟՝ և ոչ ստեաց նմա. և զի՞նչ երդուաւ. ՚ի պտղոյ որովայնէ քումմէ եդից յաթոռ քո. որ և հաստատեալ է թէ ոչ սրբեսցէ զխոստումն բոլորից ա՟ծ. *Քննել փութայր և զնոյն ծնընդեանն աւրզի. որ և ասէր խոկ՝ թէ ելից յանկողինս մահճաց իմոց. թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտեւանաց իմոց.

և հանդերձ իւրանց իմոց. մինչև գտից զտեղի յարկի տ՟ն ա՟յ յակոբայ. ապա՛ և յետ այսորիկ խելամուտ եղեալ հոգւովն և ը՟ մարգարէից ծնընդեանն միածնին ըզտեղին գտեալ. աւետարանէ՛ և ասէ. ահա՛ լուաք զնմանէ յեփրաթայ. այսինքն ՚ի բեթղեհէմ. նշանակէ. *Հաւատարմացուցէ ասելովն մարգարէն. և դու բեթղեհէմ տուն եփրաթայ. և տես թէ զի՛ արդ զոր հաւատացն յերկնից՝ ծընանիլ ըստ ձեզ յեփրաթայ, ա՟ծ յակոբայ ա՟նհանէ. որոյ եղև յարկ թեվանի. քանզի ծնաւ անդ զյ՟ս ք՟ս կոյսն. *Լու անհանէ զնա՛ յայլուր՝ ա՟ծ աբրահամու, այսպէս ասելով. իշխանք ժողովրդոց ժողովեցան առ ա՟ծն աբրահամու. քանզի միայն մաց աչօք և հոգւոյն լուսաւորու

Հ թե՟.

Թէ, առ որս լինելոյն էին գոլով գիտութիւն զժողովրդոցն իշխանս. այսինքն ըզմովսէսն հրեշտակին՝ շուրջ կալով տեսանէր զտէրամբ մերով յի՟ւ քի՟ւ. * Մ՟րդ՝ յոր ժամ ա՟ծ աբրահամու և ա՟ծ իսահակայ, և ա՟ծ յակոբայ անուանի՝ որ 'ի կընոջէն. զի մ՟րդ ոչ է ա՟ծածին ս՟բ կոյսն.

* Մ՟ծ. *

Մարգ՟րէն ամբակում. տ՟ր զլուր քո լուայ և երկեայ. 'ի մէջ երկուց կենդանութ՟եց յայտնեցիս. 'ի մերձենալ ժամանակի ցուցցիս. 'ի խռովիլ անձին իմոյ բարկութ՟բ՝ զողորմութի յիշեսցես. ա՟ծ 'ի թեմանայ եկեսցէ, և ս՟բն 'ի փառան լեռնէ. զի մ՟րդ ծանիցի 'ի մէջ երկուց կենդանութ՟եց. քանզի ծնեալ 'ի կնոջէ. և ապա կեցեալ մինչև ցժամա

նախս պատուականն ս՟բ խաչին շնորհիւ ա՟յ. * Ո՟վ ասէ երանելին պօղոս. իւրովն մարմնով վ՟ս ամենեցուն զմահ ճաշակեաց. և վասն զի ա՟ծ էր ըստ բնութ՟ե՝ համբառնայր դրձել 'ի յաւիտենականն կեանս. արդ՝ ծանուցաւ որ պատուական խաչին համբերեաց վ՟ս մեր՝ 'ի մէջ երկուց կենդանութ՟եցն. և ինքն ուրեմն ասէ առ հրէայսն * Յորժամ բարձրացուցանիցէք զորդի մարդոյ, յայնժամ գիտասջիք թէ ես եմ. * Վ՟ս զի մ՟րդ և ա՟ծ անուանէ ըզնա. 'ի թեմանայ և 'ի փառան լեռնէ մարգարէանայ գալ. և թարգմանի թեման՝ հարաւ. զի երևեցաւ 'ի հարաւոյ ք՟ս. և ոչ 'ի հիւսիսոյ կողմանէ. այլ 'ի հարաւոյ հրէաստանի. յորում և բեթղեհէմ է. * Մ՟րդ՝ յորժամ տ՟ր և ա՟ծ անուա
ն՟ա նեալ

նեալ ՚ի հրեշտականէ գայ ՚ի Հարանայ · քանզի ծընաւ ՚ի բեթղեհէմ · զի մարդ ոչ էածածին մեկայն.

* Լ. ԶԼ. *

Գրեալէ ՚ի ծննունդս. եւ մնաց յակոբ միայն. եւ մարտեաւ այր մի ընդ նմա մինչեւ ցառաւօտն. եւ տեսեալ թէ ոչ կարէ զօրել առնա · եւ բուռն եհար զամոլաջլէ զըստ նր ՚ի մարտնչելն նր ընդ նմա · եւ ասէ ցնա արձակեա զիս. զի առաւօտ է. * Եւ ասէ՝ ոչ արձակեցից զքեզ եթէ ոչ օրհնեսցես զիս · եւ յետ սակաւուց ասէ՝ օրհնեաց զնա անդ. * Եւ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ տեսիլ այ. է զի տեսի զած ասէ դէմ յանդիման, եւ ապրեցաւ անձն իմ. եւ ծագեցաւ նմա արեգակն յորժամ էանց տեսիլն այ · եւ նա կաղայր ՚ի զըստէն իւրմէ. * Խորհրդաբար են գրեալ ՚ի մացեալքս. * Քանզի նշանակէ՝ որպէս նմանէ՝ զհրեշտակն է դիմանայն · զորառնէին ՚ի վր Իէ. մարտնչելով առնա. սակայն պարտեալք · քանզի հանդերձեալ էին նոքա հանդիպիլ օրհնութեն որ առ ՚ի նմանէ, արարել հաւատալք ՚ի յետին ժամանակս զառնա դարձումն. սակայն զայն տես՝ մարդէր որ մարտնչէրն, եւ զտեսիլն նր՝ այ անուանէ յակոբ. * Եւ ոչ այս միայն. այլ եւ դիտէր ած գոլ ըստ ճշմարտութե. քանզի տեսի ասէ զած դէմ յանդիման եւ ապրեցաւ անձն իմ. ասէ ըստ բնութե Էմմանուէլ. ասի եւ տեսիլ այ. քանզի է նկարագիր էութեն հօր. այսպէս կոչեալ զինքն է հրեշտայն խօսելով յաղագս այ հօր. ոչ զտեսիլն նր տեսիք · եւ

աՀ

ՀԷ ոչ

ոչ զբան նր ունիք 'ի ձեզ բնակելոյ. զի զոր առաքեացն նա՝ դուք ոչ հաւատայք 'ի նմա։ * Եւ զի ած ըստ ճշմարտութե էր որ մարտնչէրն մարդ ընդ յակոբայ՝ և հաւատարմացուցէ ասելով սրբազանն գիր. քանզի ասաց ասէ տր ցյակոբ. յարուցեալ անցցես 'ի բեթէլ, և բնակեսցիս անդ. և արասցես անդ սեղան այ. որ երևեցաւն քեզ 'ի փախչելն քո յերեսաց էսաւայ եղբօր քո. * Քանզի դարձել 'ի միջագետաց, և երկուցեալ յէսաւայ՝ անցոյց յակոբ զմանկունս իւր, և զամ ինչս իւր. և մնաց նա միայն. և մարտընչէր այր ընդ նմա։

* Ա. Ռ. *

Երանելին դանիէլ զսոսկալի տեսիլն պատմելով մեզ, տեսանէի ասէ 'ի տեսլեան գիշերոյ.

և ահա ընդ ամպս երկնից որպէս որդի մարդոյ գայր՝ և մինչև ցհին աւուրցն հասանէր. և առաջի նր ածաւ, և նմա տուաւ իշխանութի և պատիւ և թագաւորութի. և ամենայն ժողովուրդք և ցեղք և լեզուք՝ նմա ծառայեսցեն. իշխանութիւն նր իշխանութիւն յաւիտենից որ ոչ անցանէ. և թագաւորութի նորա ոչ ապականեսցի.

* Ասես թէ ոչ մարդ՝ պարզաբար տեսանել ասելով. զի մի՛ զմի ոք յորոց ըստ մեզս իմասցուք զԷմմանուէլ. այլ որպէս որդի մարդոյ. քանզի ած գոլով ըստ բնութե բանն՝ 'ի նմանութիւն մարդկան եղև, և գտաւ ձևով

Ա՟ծ և մարդ Միածինն:

ոչ մարդ· զի գոլով 'ի նմանութեան իմացի երկբանչիւրովքն՝ ոչ սոսկ միտ· և ոչ առանց մարդկութեան և անմարմին բանն: *Սակայն զի նմա տուաւ է· և այսպէս ունողի և երևեցելոյ զիշխանութիւն և զպատիւ՝ և զթագաւորութիւն, և ասաց թէ ա՟մ ժողովուրդք և ազինք և լեզուք նմա ծառայեսցեն:* Արդ յոր ժամ և 'ի մարդկութեան որ ըստ մեզ գոլով միածինն ա՟յ բանն՝ ծառայս ունի ստածուածս՝ և զՀօր իշխանութիւն ոչ զիւր: և ծնեալ ը՟ մարմնոյ զնմա սուրբ կոյսն, զի արդեօք ոչ իմացի ա՟ծածին:

* * *

Յաղագս չարչարանացն Քի

Նա ըէ՝ պիտոյ է այլ նոյն
'ի վերայ Քոյ առնել և նո-
րին. և ոչ անձնատէլ
յերկնաւ:

* Գլուխ · ԻԱ · *

ԵՐԱՆԵԼԻՆ Պօղոս զփրկական չարչարանսն պատմելով մեզ, որ ասէ զՅի՟ շնորհիւն ա՟յ յաղագս մեր ամենեցուն ճաշակել զմահ · և թէ աւանդեաց մեզ նախկին զոր և ընկալաւ: և թէ Ք՟ս մեռաւ վ՟ս մեղաց մերոց ըստ գրոց: և զի թաղեցաւ և յարեաւ յաւուր երրորդի· առ այսոքիկ և իմաստունն պետրոս· Ք՟ի չարչարելոյ մարմնով վ՟ս մեր· Արդ՝ մի՛ հաւատացեալ զՏ՟ր մեր յ՟ս Ք՟ս 'ի մարդկային կերպի երևել· այսինքն եղեալ մարդ ըստ մեզ միածինն ա՟յ բանին. զի մարդ արդեօք եւ զչարչարանսն նմա հետեւեցուսցուք, եւ անչարչարելի պահեսցուք զա՟ծ. ապա ուրեմն չարչարանքն եղիցին ըստ անօրէնութեան իւրացեալ բանին. եւ յինքն առեալ զորս իւրոյն մարմնոյ. վ՟ն անպատմելի միաւորութեանն: եւ մնացելոյ անչարչարելի յիւր բնութին: քանզի անչարչարելի է ա՟ծութին *Իսկ ոչ ինչ է հրաշափառ. յորժամ եւ զնոյն զմարդոյս հոգի տեսցուք թէպէտ եւ կրեսցէ ինչ մարմինն՝ յիւր բնութին ոչ ինչ կրեալ. սակայն ոչ է արտաքոյ կրիցն իմացեալ: զի որ կրէն՝ ն՟ր իւր է. թէպէտ եւ ըստ բնութե՟ է անշօշափելի եւ աննիւթ. այլ զի որ կրէն՝ ոչ է օտար ՚ի նըմանէ: այսպէս իմասցիս եւ ՚ի վ՟ր ամենեցունց մեր փրկչին ք՟ի: *Իսկ հպե

ցոյց յարացոյց օրինակօք. զի կցորդ եղեւ մեզ չարչարանաց միածինն, զհոգեղէնն յիւր ընտանութի՟ առեալ մարմինն եւ մնաց անընդունակ չարչարանաց ըստ իւրում բնութե՟ն ո՟պ զա՟ծ՝ որ եւ բոլորից ա՟ծ նշանագործել հրամայէր ՚ի մատանոյն մովսէսի. զի հաւատասցեն քեզ որք յիւրոյ էին. որպէս առաքեցելոյ առ ՚ի յա՟յ. որք ՚ի զըրկողացն ձեռաց ազատեսցին: *Իսկ ասէ այսպէս. եւ առցես ՚ի ջրոյ գետոյն, եւ հեղցես ՚ի ցամաքի: եւ եղիցի ջուրն զոր առնուցուս ՚ի գետոյն՝ արիւն ՚ի ցամաքի. եւ ասեմ զի կենաց օրինակ է ջուրն. եւ է կեանք ըստ բնութե՟ որդի. ո՟պ ՚ի գետոյ ելեալ ՚ի հօրէ ըստ համագոյութեն բանի. եւ այսպէս զա՟մ կենդանացուցեալ. այլ յորժամ հեղցես զնա ասէ ՚ի ցամա մաքի՝ եղիցի արիւն. ապա ուրեմն յորժամ եղեւն մարմին. այսինքն զոր 'ի յերկրէ զգեցաւ մարմին, յայնժամ և այս է զոր ըստ մեզ մահ կըրել ասի. որ և ըստ բընութեն գոլով կեանք. * Իսկ 'ի ղևտականին՝ պիղծ և անմաքուր ասէր զբորոտն՝ օրէնքն, այլ և 'ի բաց հանել զնա 'ի բանակէն հրամայէր. * Եւ յայանէր թէ զիարդ մարթ էր մաքրել ախտին ն՟ր. * Առցեն ասէ մաքրեցելոյն երկուս հաւս կենդանիս. և փայտ նոճի. և կարմիր մանեալ. և զոպայ. և հրամայեսցէ քահանայն և զենցեն զհաւն մի՝ յաման խեցեղէն 'ի վ՟ր ջրոյ կենդանւոյ. և զհաւն կենդանին առցէ և մկըրտեսցէ յարեան հաւուն սպանելոյ 'ի վ՟ր ջրոյն կենդանւոյ, և սրսկեսցէ 'ի վ՟ր սրբեցելոյն 'ի բորոտութենէն եօթն անգամ. և եղիցի մաքուր. * Արդ ասէ զմեզ մաքուրս. և լուանայ ըզշաղախեալս և 'ի մարմնական խորհըրդոյ 'ի բաց առեալ է զմեռելութին պատուական արիւնքն. և 'ի ձեռն սրբոյ մկրտութեն՝ մաքրուի սակայն զայն տես, քանզի փոխեալ 'ի նըրբագոյնն. որ ունի զառաջի եդեալս զօրութի խորհըրդոյն պիտանին, ասասցուք առ այժմ.

* Հաւուցն երկուց նըմանեցուցանէ զք՟ս. ոչ ո՟պ երկուց գոլով որդւոց. այլ ո՟պ միոյ յերկուց՝ յա՟ծութէ և 'ի մարդկութէ եկելոց 'ի միութի. * Եւ մաքուր հաւքըն. զի ոչ արար մեղս տ՟ր մեր յ՟ս ք՟ս. այլ է բանն ս՟բ ա՟ծութբ և մարդկութբն. սակայն և թէպէտ նմանեցուցանէ. վ՟ս 'ի բարձանց գոլոյն 'ի յերկիր. և 'ի վերուստ

րուստ· քանզի յերկնից մարդ քս՟՝ որ և ծնեալ զմարմին՝ սրբոյ կուսին *Արդ՝ զի որդ 'ի վերուստ 'ի յերկնից· քանզի 'ի վերուստ և 'ի հօրէ բանն ա՟ծ առ 'ի սրբոյ կուսէն առեալ մարմին, և իւր զնա ասացեալ ո՟պ 'ի վերուստ և յերկնից իջուցեալ ասէր·*Եւ՛ ոչ ոք ել յերկինս եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ· քանզի հետևեցուցանէ միշտ զիւրուն իւրոյն մարմնոյ միացեալ միանգամ· ո՟պ մի՛ համարեալ լինի առնա·*Սակայն տես՝ զենեալ զմիհա՛ն և մկրտեալ զմիւսն յարեան նորա այլ ոչ զենեալ· և զի՞նչէ այս· ք՟ զի կենդանի էր բանն և 'ի մեռանիլ մարմնոյն իւրոյ· և կցորդէր չարչարանացն վասն իւրութե՟ն և միաւորութե՟ն առնա· ապա ուրեմն նոյն ինքն կենդանի է որպէս զա՟ծ· և ո՟պ իւրն արարեալ զմինն·*Այսպէս 'ի յինքն ընդունէր ըստ իւրութե՟ն և զմարմնոյն չարչարանս· չարչարելով ոչ ինչ ինքն յիւր բնութի՟ն· պիտանի ուրեմն և կարևոր յօգտակարութի· եթէ 'ի վր՟ ք՟ն առցի առ 'ի մէնջ ըստ այլ և այլ՝ դասեալ 'ի վր՟ միոյ և նորին· բաժանել 'ի յերկուս ոչ տալ թոյլ· թէպէտ և ասիցի գործել ինչ 'ի մեզ· թերևս ոչ երբէք միմեանց՝ որպէս մինչ ասացից, ծնանիլ ասեմք ըստ մարմնոյ 'ի կընոջէ զմիածին բանն ա՟յ· որ և ոչ էիցն՝ նր՟ տուե՛լ զգոյն· և կոչել 'ի լինելութի զոչ գոյսն բնաւին·*Արդ զիա՞րդ նոյն ինքն և ծնունդ կրէ, և կոչէ 'ի գոյութի ըստ այլ և այլ· քանզի ծնաւ ըստ որում 'ի մարմնի ը՟ մեզ մարդ· և կոչէ 'ի գոյութի զոչէսն, ըստ որում է բնութբ՟ ած՟ ․ *Գըրեա՛լ է վասն նր՟ թէ՝ մանուկն աճէր և զօրանայր՝ լցեալ ՚ի իմաստութբ՟ և շնորհիւ, որ ըստ բնութն՟ է ամենակատար ոպ՟ ած՟ ․ և յիւրոյ լրմանէ բաշխէ սրբոցն զհոգեւորականսն ․ և ի՛նքն իմաստութի՟ ․ և շնորհի տըւօղ ․ Որդ՝ զի մրդ աճէ մանուկն և լնու իմաստութբ՟ և շնորհիւ ըստ այլայլութն ․ քանզի նոյն ինքն ոպ՟ մարդ, համանգամայն և ած՟, իւրացուցանէ զմրդկօրէնսն վս՟ միաւորութնն ․ և է՛ ամենակատար՝ և իմաստութն և շնորհի տըւօղ՝ ոպ՟ զած՟ ․ *Նա՛ եղև անդրանիկ ոպ՟ միածին ․ այլ եթէ ոք կամիցի զբանիցն քննել զօրութի՟, անդր՟նիկն իցէ արդեօք բազում եղբարց անդրանիկ ․ իսկ միածինն որպէս միայն՝ ոչ ևս անդրանիկ ․ բազում եղբ՟րց ․ այլ է նոյնն և այս և այն ․ որդ՝ զի մրդ ըստ այլևայլ ․ ք՟զի անդրանիկ ոպ՟ ՚ի բազում եղբարս վս՟ մրդկութն ․ իսկ միածին դարձեալ նոյն ինքն ․ ոպ՟ միայն ՚ի միայնոյ ծնեալ՝ յա՟յ և ՚ի հօրէ ․

*Սրբիլ ասի հոգւովն՝ որ սրբէ զորս մերձենան առնա՛ ․ մկրտեցա՛ւ ըն՟ մարմնոյ, և մկրտէր հոգւով սրբով ․ որդ՝ զի մրդ նոյն ինքն սրբէ և սրբի ․ մկրտէ և մկրտի, դարձեալ ըստ այլևայլ ․ քանզի մարդկօրէն ․ և այսպէս մկրտի ․ իսկ սրբէ ածաբար, մկրտէ և հոգւով սրբով ․

*Ինքն յարուցանելով զմեռեալս՝ ՚ի մեռելոց յարեաւ ․ և կեանք ըստ բնութն՟ գոլով՝ կենդանանալ ասի ․ և զի մրդ այս դարձեալ ըստ այլևայլ իրի ․ քանզի նոյն ինքն յարեաւ ՚ի մեռելոց, և կենդանանալ ասի ըստ մարմնոյ ․ *Իսկ կենդանա նացուցանէ և յարուցանէ զմեռեալս ո՟պ զա՟ծ։ *Զարչարի՝ և ո՛չ չարչարի ըստ այլևայլ՝ քանզի չարչարի մարդկօրէն ը՟ն որում է մարդ. անչարչարելի է ա՟ծաբար՝ որպէս զա՟ծ։ *Երկիր եպագ ը՟ն մեզ. քանզի դուք երկիրպագանէք ասէ՝ որում ո՛չն գիտէք. մեք երկիրպ՟գանեմք որում գիտեմքն։ այլ և երկրպագի։ քանզի կրկնի նմա ա՟մ ծունր։ և այս դրձ՟լ ըստ այլ և այլ. քանզի երկրպագէ՝ ո՟պ յերկրպագու բնութե՟ն առեալ. իսկ երկրպագի դարձե՟լ նոյն ինքն՝ ո՟պ ա՛նդր գոլով ք՟ զերկրպագու բնութիս. ըստ որում իմանի ա՟ծ։ *Իսկ զերկրպագութի՟ն ո՛չ է անջատել՝ 'ի մարդ և յա՟ծ յատկապէս։ այլ և ո՛չ ընդ ա՟յ համանգ՟մայն գոլով՝ ո՟պ 'ի հաւասարուե՟ պատճոյ՝ անջատեցելոյ դոյացուե՟ցն՝ երկրպագակից ասեմք լինել մարդոյ ը՟ն նմա։ քանզի ամպարշտու՟ է լի՛ է իրն։ *Ո ի մի՛ է երկրպագելին մարդացեալ և մարմնացեալ բանն ա՟յ. ըստ հաւատոյ միաւորեալն ընդ մարմնի ըստ մեզ հոգւով բանականաւ։ քանզի ո՛չ ուրեք եդ երկուս անդրանիկս առ 'ի պարտ գոլ երկրպագիլ առ 'ի մէնջ՝ և 'ի մերոյն հրեշտակաց՝ բոլորից ա՟ծ։ Ո ի մի է մուծեալն յաշխարհ. և զմուծանելոյն քննել եղանակ՝ զմարմնով տնօրէնութե՟ն իմացուք խորհուրդ։ քանզի մուծանի յաշխարհ՝ յորժամ եղեն մարդ։ որ և ըստ իւրում բնութե՟ հեռի է յաշխարհէ, և յա՟ծութե՟ն գերունակութի՟ս էապէս հաւատացեալ. զի այլ է քան զամենայնան՝ որպէս արարչագործ նց՟։ ապա ուրեմն արտաքոյ է նովաւ եղելոցն ըստ բնութեան. զի և բնութեամբ է՛ ա՟ծ. *Այլ է որ ասացի երկրպագելին. եւ յորժամ եղեն 'ի բազում եղբարս. քանզի առի յայն ժամ եւ մ՟ր այսօրիկ անդրանիկ. *Այլոյ երկրպագեաց որդւոյ՝ 'ի ծնէ կոյրն. հրաշափառապէս բժշկեալ. ք՟ զի գտեալ զնա ա՟յ 'ի տաճարին՝ ասէ. դու հաւատաս յորդին ա՟յ. եւ նա ասէ՝ ո՞վ է տ՟ր զի հաւատացից 'ի նա. *Իսկ յ՟ս ցուցանէ՛ նմա զինքն մարմնով. եւ տեսեր զնա. եւ որ խօսիդ ընդ քեզ՝ նա է. *Տեսանես զի ըստ միոյ հպի 'ի թիւն, ոչ ասաց ըստ մասնիմանալ ա՟ծ եւ մարդ. այլ յայտ է եթէ ոք բընաւէին մ՟րդ անուանեսցէ զԷմմանուէլ՝ ոչ սոսկ մարդ նշանակեսցէ. այլ յոյժ վերադոյն. քանզի միաւորեալ ընդ մերում բնութեան բանին ա՟յ.

*Որպէս միոյ երկրպագեցին աշակերտքն՝ յոր ժամ 'ի վ՟ր ջուրցն գնայր հրաշափ՟առապէս. տեսեալ զնա երկրպագեցին ասելով. արդարեւ որդի ա՟յ ես. *Նաեւ յորժամ մարդ ընդ ա՟յ երկրպագակից ասեմք լինել, թանձրադոյն ածեմք 'ի վ՟ր զհաստումն. քանզի որ զոյգն է միշտ՝ եթէ ոչ 'ի վ՟ր միոյ դասեսցի՝ յորոյ ՟բ շարադրութեան՝ երկուս ա՟մ լիօք հաւանեցուսցէ իմանալ:

*Քանզի որպէս ոչ ոք զինքն ինքեան կենակից ասիցէ. եւ ոչ կերակրիչ, եւ ոչ աղօթակից, կ՟մ գնացակից. քանզի երկուց դիմաց կանգնումն բերէ բաժանութեան իր. *Նոյնպէս թէ ոք ասիցէ երկրպագակից ա՟յ ընդ մարդն, երկուս ասէ որ դիս առանց երկբայութեան անջատեալս 'ի միմեանց քանզի միաւորութեան բան

Թէ դոյեն՝ չարչարանքն , եթէ միայն իմասցի. հաւասարութիւն պատճառոյ, այսինքն իշխանութեան ոչ գոլով ճշմարիտ՝ յանդիմանեսցի. և այս 'ի ձեռն երկայն բանից մեղցուցցի.

Առ այնոսիկ որք ասեն՝ թէ դոյն վերաբերութեամբ վայելեն Աստուածոյ Մարդ չորքէնքն ,

Գլուխ. ԻԶ .

ՈՄԱՆՔ շատախօսութեամբ զմարմնով տնօրէնութեան միածնին դանդաչեալք , զբարեպաշտիկ և ըղ մեծ , և զնոցունց վերնոցն զօրութեանց ճըշմարտապէս երեքփափագեանն խորհուրդ՝ որով և ապրեցաքն , առ խախուտ մտածութիս քարշեալ, ճշմարտութեան գեղեցկութեան շահավաճառք

Զ.

Թէ՝ ոչ վերաբերութեամբ , եղեալք. *Որ և պարտ էր նոցա ոչ զխուրեանց այնոցն , և զոր միայն ինքեանցն բարձուք թըլեցեալ՝ զօրծուցանել ձեռնարկել. այլ յանէտ նուրբ և սուտ մտածմուակամբ՝ զորբաղանից դիտումն. և այսպէս գնալ ընդուղիղ և անազարտաբար քննեալն սրբոց մերոց հարց. *Որք սրբոյ հոգւոյն լուսաւորութեամբ պայծառացեալք՝ զհաւատոյս մերոյ օրինադրեցին նշանակ. *Զնոյն ինքն ասելով զոր 'ի հօր էութեան անձառաբար ծընեալն ած յայս բանն. զոր որով ամենայնն յերկինս և յերկիր, վն մեր մարդկան և յաղագս մերոյ փրկութեան իջանել՝ մարմնանալ և մարդնալ. չարչարել և յառնել՝ և ելանել յերկինս. գալ ընդ ժամանակս՝ զի դատեսցէ զկենդանիս և զմեռեալս. *Այլ են ո-

ձա մանք

մանք յոյժ պանծայցեմք ՚ի հանճար. որք վս զի զայսպիսիս լսեն բանս՝ այսպն առնեն, և զառ յանցանս զոլ վարկինին զայսպէս ուղղակի ասացեալս. որ և սրբոյ հոգւոյն ոչ հաւատացաք իսկ՝ փայլատակեալ ՚ի խորհուրդս սրբոյ հարցն զճշմարտութեն գիտութի. *Ոչ զի և ՚ի նմա գոլով ՚ի վեհագոյնան խորհիլ, այլ և կարօղս առնել իմանալ, ոչ զնոյն ինքն վարկինին զմիածին որդին այ զոր յէութէ հօր բանն, չարչարեալ վս մեր իւրով մարմնովն մարդկօրէն. որ և ըստ որում իմանի ած. ունելով զանչարչարութի յիւրում բնութեանն, այլ մարդ միայն և ըը մասին եղեալ զոր ՚ի սրբոյ կուսէն ծընեալն. և ապա փառաց հետևեցուցեալ նմա չափ ըստ որում իւրեանցն թերի բարւոք գոլ: *Յարակից լինիլ ասեն յայ հօրէ բանին. և ըղ յարակցութեն եղանակ պատմելով՝ պարգևեալ նմա ասեն առ ՚ի նմանէ զհաւասարութի պատուոյն. այսինքն իշխանութեն և զհամանունաբար ասին և քս և որդի և տր. *Իսկ թէ ի՞նչ ասիցի չարչարիլ նմա՝ որ ՚ի նմանէ առեալն մրդ, պարտ ասեն ՚ի նմա վերաբերիլ որ յայ բանն. վս ՚ի նմա յարելոյն ըստ հաւասարութե պատւոյն և բնութեց անջատեցելոց. և իւրաքանչիւր ումեք գոլով այն՝ որ ինչ էն առանձին: *Իւ զի յատկագոյնս ասացից ոչ էն զմտածութեցն զօրութի. զօրս յածայնոց գրոց եդեալ առաջի, քաղցեալ քս աշխատեցաւ ՚ի ճանապարհին ննջեր մտեալ ՚ի նաւին. ապտակեցաւ ՚ի սպասաւորացն՝ գան հարաւ ՚ի պիղատոսէ. թքին ՚ի նա և զօրականքն. և տիգաւ խոցեցին զկողն. քացախ ընդ լեղի խառնել արբուցին նմա. ճաշակեաց և զմահ՝ խաչի համբերեալ. եւ զայլն արբեցութիս 'ի հրէիցն կրեալ. զայս ա՟մ պատահել ասեն մ՟րդոյն. բայց վերաբերիլ 'ի դէմս ըստ ճշմարտութեան որդւոյ. *Իսկ մեք հաւատամք որպէս՝ 'ի մի՛ ա՟ծ հայր ամենակալ, ա՟մ երևելեաց և աներևութից արարիչ, այսպէս 'ի մի տ՟ր յ՟ս ք՟ս յորդին ն՟ր. 'ի բաց հրաժարեմք յանջատելոյ 'ի մարդ առանձին և'ի բանն առանձին զէմմանուէլն. *Գիտելով զի եղև ըստ մեզ բանն և մարդ ճշմարտապէս՝ ըստ նոյն գոլ ասեմք ա՟ծ ո՟պ յ՟այ. և ըստ մեզ մարդկօրէն մարդ 'ի կնոջէ. *Ասեմք դարձել կրել ըստ իւրութեան մարդկօրէն նմա զմ՟րմնոյն կիրս. սակայն ամբողջ պահեալ իւրոյն բնութե՟ զանչարչարութի՟. զի ո՛չ միայն մարդ էր, այլ էր նոյն ինքըն ա՟ծ այսու՝ և բնութ՟ ա՟ծ, և ո՟չ էր իւր մարմինն ն՟ր, այսպէս դրձ՟լ նորա են՝ որ ինչ մարմնոյն ճշմարտապէս և անմեղադրելի կիրք. *Նոյն և արտաքուստ՝ որ ձեռն ոմանց ապարասանուե՟ 'ի վ՟ր եկեալքն կրեալ անչարչարաբար. ինքն կամաւորութե՟. և ո՛չ միայն ըստ գոլոյն ա՟ծ մեզ. այլ պահեալ որպէս ասացի իւրոյն բնութեան. և զաւանելութին քան զամենեսեան. *Քանզի թէ ասէաք թէ ըստ փոխադրութե՟ կամ յեղման յիւրմն բնութ՟՝ 'ի մարմնոյն բնութի՟ տարեալ եղև, էր ուրեք արդեօք հարկ ամենայնիւ և ակմայ խոստովանիլ զանճառելի և զա՟ծայինն բնութի՟՝ լինիլ չարչարելի. իսկ եթէ եկաց մնաց առանց փոխադրութե՟, որ եղև ըստ մեզ մարդ, և է առանձ նաւորութի՟ բնութե՟ն վերնոյ՝ անչարչարութի՟, և այս ըստ միաւորութե՟ն ը՟ նմա եղև չարչարեալ, չարչարեցաւ ուրեմն չարչարելեաւն մարմնով. ըստորում և ասի նորա իւր. և մնաց ինքն անչարչարելի. զի դարձել իւր է նր՟ անչարչարութի՟ն. *Եւ եթէ փառաւորի չարչարիլովն էմմանուէլին, քանզի ասաց ինքն յորժամ հանդերձեալն էր համբերել վս՟ մեր՝ պատուական խաչին, այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ. զի՞նչ է 'ի չարչարելոյն փառաւորութիւնն մարդոյն հետևեալ, միայն ունելով ըզ յարակցութի՟ն առնա. զոր ոչ՟ 'ի հաւասարութե՟ պատուոյ. *Ո՛չ ամաչեն ոմանք. քանզի թէ ոչ՟ վարկանին՝ յարէց յինքն ըստ հաճութե՟ և կամաց մարդ պարզաբար, և հաւասարափառ ասացեալ

զնա ինքեան՝ թողեալ համանունաբար անուանիլքն՝ և որդի՝ և ա՟ծ՝ և տ՟ր, ոչ մարմնացաւ ը՟ ճշմարտութե՟ բանն և ոչ մարդ՟ցաւ բնաւին. և ապա ուրեմն ստաբանս ասել զորս ընդ արեգակամբս խորհրդածուսն, և ոչ մի ինչ վնաս բերէ. *Քանզի ասասցեն յաւէտ և ածցեն 'ի մէջ պատրաստեալքն հաւանեցուցանել. եթէ ըստ առ 'ի նոցանէ իմացելոյն յարակցութե՟ եղանակ զմարմնաւորութե՟ զօրութի՟ս ունի. և այս է մարդանալն բանին. *Քանզի թէ ոչ այսպէս զայսոսիկ դոլ կարծեցին, հի՞մ անյարակցին յարակցութե՟ եղանակ իմանան, թողել զճշմարտութի՟ն. որ և պարտէր միանալ ասել ընդ մ՟րումն մարդկութեան զառ 'ի յոյ՟ հօրէ բանն. *Քանզի այսպէս մարմնով՝ ի՛ւր իմանիւր կը

ձդ՟ ըեալ

ըեալ փայել չոքէր զմարդկայինսն. որև յա͞ծուեն բնութ͞ի կրել ինչ՝ յորոց ըստ տրտմու͞ե սովորութե՝ անբաժ է որ͞պ ա͞ծ.

*Այց զի ո՛չ գիտեմ թէ զի մ͡րդ գտեալ ն͞ց զանձ՛անձնեն վերաբերութիւն, քարշեն յանփառութ͞ի զԷմմանուէլ. հազի՛ւ ՚ի միոջ ՚ի սրբոցն մարգարէից նմանեցուցանեն. և հաւասար չափու եղեալ բազմաց. այլ զի հաւասարեցից դարձեալ՝ զորս և ա͞ծայնոց գրոց բերից յառաջ.

*Տրամջէին երբեմն յանապատին զմովսէս և զահարոնէ որ յիւրայինէն ևասէին. օ՛չ թէ մեռել էաք հարեալք ՚ի տ͞նէ յեգիպտոս. յորժամ նստէաք առ կաթսայս մսոյն և ուտէաք հաց առ յագուրդ. եւ ապա ասէ ա͞ծայինն մովսէս. զի՞նչ եմք մեք. ո՛չ զմէնջ տրտնջէք. այլ զա͞յ. *Ինքն

իսկ Թագաւորք էր ընդ ժամանակն Է̃ այնուքիկ բողոքեցս ա͞ծ ՚ի վ͞ր ի͞լի ՚ի ձեռն սրբոց մար͞գրէիցն. և նոքա ասայս կարծամնեալք՝ մատեան առ ա͞ծայինն սամուէլ և ասեն. ահա՛ւադիկ դու ծերացեալես. և որդիք քո ո՛չ գնան զճանապարհ քո. և այժմ կարգեա ՚ի վ͞ր մեր Թագաւոր՝ դատ͞ել զմեզ որ͞պ զայլ ազգս. և դառնանայր ՚ի վ͞ր ն͞ց մարգարէն, ասէ ցնա ա͞ծ. լո՛ւր ձայնի ժողովրդեանդ զոր ինչ և խօսեսցին առ քեզ. զի ո՛չ եթէ զքեզ արհամարհեցին, այլ զիս՝ առիչթագաւորել ՚ի վ͞ր ն͞ց. Ասէ ուրեմն և ք͞ս առ ս͞բ առաքեալսն. որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի. այլ և առ գթասէրսն առաջի ա͞ծայնոյ բեմին՝ ձայն արկել խոստանայր. եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զպատ րաստեալ ձեզ զարքայութ՟ին իսկզբանէ Տէր. *Ի՛ւր համարեալ զաւ'ինոցանէ զբարեպաշտութեան եղանակ։ առ որս զբարին ասէ. որովհետև արարէք միում 'ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ արարէք. և ահա՛ հաւաստեաւ այսոքիւք վերաբերութ՟ն եղանակ որպիսի ինչ լիցի՝ բարւոք ճանաչելի. տրտնջէին զմովսիսէ և զահարոնէ որք յիսրայէլէն. և ունի իրն ըզ վերաբերութ՟ին առ ա՟ծ. էր մարդ ո՟պ զմեզ մովսէս՝ այլ և ահարոն. ըստ հաւասար օրինակի և'ի վ՟ր այլոցն իմացիս. զորոց այժմ զյիշումն արարաք. այլ էին ո՟պ ասացի ս՟բք և արժանիք պաշտանալոյ՝ սակայն ըստ մեզ մարդիկ. *Ա՞րդեօք ա՟ծ այսմ օրինակի ա՛ղէ ասացեն ինձ. յարակից մարդն բանին ա՟յ ո՟պ ասեն նոքա՝ զիւրոցն ախտին վերա՛բերութիւնն ունէր առնա՝ և ապա՛ զի մ՟րդ ոչէ ո՟պ զն՟ս մարդկայնէ զի սոսկ և միայն և այլ ինչ ոչ։ ապա՛ ուրեմն ոչ ա՟ծ ճշմարիտ Էմմանուէլ. ոչ միածին և ոչ որդի. և ոչ տ՟ր ըստ բնութե. *Եւ ապա՛ վ՟ս զի՞նչ պատճառի յայլոցն ոչ ոք պատուի առ 'ի յա՟յ բանէն հաւասարութ՟բ պատուոյ այսինքն իշխանութ՟ն. այլ միայն զա՛ 'ի հաւասարիցն՝ անվըրէպ նմանութ՟բ յարձակեցուցանեն վիճակիլ։ *Որ և ամենեցունց փըրկիչն՝ ա՟յ առ աչս ոչ դատել. այլ արդար դատաստան դատել, ո՟պ ասէ ինքն. զի մ՟րդ միայն նըստի յատենի. զի մ՟րդ եկեսցէ դատել ընծայաբերելով հրեշտակաց։ վ՟ս էր միայն երկրպագի առ 'ի մէնջ և 'ի վերնոցն զօրութեց։ *Ն՟մ այո՛ ասեն, և զքեզ զայս գոր-

ձ՟զ ծեալ

տեսանեմք . չարչարեալ զնա խոստովանիմ՝ հետևեցուցանելով մարմնոյն ն՟ր զչարչարանսն . և անչարչարելի պահեալ ո՟պ ա՟ծ . *Նա և մեք ով վեհքդ՝ ասասցուք արդեօք նախ միաւորեալ ը՟ բանին զմարդկայինսն՝ մարմնոյն զկիրսն հետևեցուցաք . և անչարչարելի պահեցաք ո՟պ զա՟ծ . զի թէ եղև ը՟ մեզ . այլ և գիտակ եմք դարձեալ ա՟ծավայելուչ գերունակութ՟ն ն՟ր . և գերագունիցն պատւոյ . ապա ուրեմն խոստովանելք հաւատով զմիաւորութ՟ին ո՟պ զհիմն ինչ՝ մարմնովն չարչ՛րեալ խոստովանիմք զնա . և անդր քան զչարչարանսն դարձել մնալ . ո՟պ ունելով զանչարչարութ՟ի յիւրում բնութ՟ն . *Իսկ թէ ը՟ մասին փութամք գնել յա՟ծ և 'ի մարդ՝ անջատեալ զբնութիւն 'ի միմեանց . և ապա միայն զվերաբերութ՟ին ա՟յ բանին իւր համարեն՝ ասեմք զպատահեալն մարմնոյն , զմովսիսի ուրեմն և զահարօնի զչափն է զգեցեալ 'ի սրբոյ կուսէն ծնեալն Եմմանուէլ , որ թարգմանի ը՟ մեզ ա՟ծ , *Ո՟պ զի թէպէտ և ասիցի 'ի ձեռն սրբոց մարգարէից . զթիկունս իմ ետու 'ի հարուածս . և զծնօտս իմ յապտակս . և զերեսս իմ ոչ դարձուցից յամօթոյ ը՟ երեսս թքանելոյ , և դարձեալ , ծակեցին զձեռս իմ և զոտս իմ . և թուեցին զա՟մ ոսկերս իմ . և դարձեալ , ետուն 'ի կերակուր ինձ լեղի . և 'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ . նմա զայս ա՟մ հետևեցուցանեմք միածնին՝ չարչարեցելոյ վ՟ն մեր անօրինաբար մարմնով . քանզի ն՟ր վիրօքն բժշկեցաք մեք . և վիրաւորեցաւ վ՟ն մեղաց մե-
ձէ րոց .

րոդ։ *Եւ անչարչարելի զող գիտեմք զնա ըստ բնութեն։ քանզի թէ ած ասացի այժմ․ նոյն ինքն մարդ՝ համանգամայն և ած, և են վայելչաբար մարդկութեն նր չարչարանքն․ և ի՛ւր դարձել է ող այ՝ ղանդրքան ըղ չարչարանսն մնալն․

Զայսոսիկ խորհելով բարեպաշտք եղիցուք՝ և այսպէս ընդ ուղիղ մտածութեանս գնալով՝ յաղթանակի վերինն կոչման հանդիպեսցուք քսիւ յսիւ տր մերով․ որով և ընդ որում այ և հօր փառք հնդերձ հոգւովն սրբով յաւիտեանս յաւիտենից ամէն։

*Յաստուածաբանութեն [illegible]
[illegible] · մարդեղութեն [illegible] այ՝
Սրբոյ Կիւրղի աղեքսանդրա-
ցւոյ․ ի Տիեզերական ժողո-
վոյն և յեփեսոսոյ։

Գլուխ․ ԽԱ․

անուն ժառանգեաց։ *Որ և դող և անուանիլ տր՟ փառաց. զիա՞րդ ո՞չ է ՚ի վեր քան զմ՟. եղականս և զեկեալս ՚ի լինելութի. և Թողից զմարդկայինս. զի նորա ազգեն յոյժ։ *Բայց ասացից Թէպէտ հրեշտակս անուանել, և Թէ պետութիս և տրութիս որք Թրոնեսցէ, և Թէ զևս վեհագոյնս որք յիշեսցէ զսերովբէս. և խոնարհ Թողեալ զայսքանս ըզգերագունին խոստովանեսցի փառաւորութի. Թէ միտս ունիցի սրընթացս և իմաստունս։ *Քանզի լաւագոյն դող ասեմք ըզպատիւն, և պարտ լինիլ վերագրիլ միայնոյ ամենեցունց Թագաւորականին բնութե. զիա՞րդ արդեօք լինիցի տր՟ փառաց խաչեցեալն. և ճառագայթ հօր. որ բերէն զմ՟ բանիւ զօրութե իւրոյ. լաւագոյն քան ըզհրեշտակս լինիլ ասի. *Ապա ուրեմն զնորա աստագոյնն ասեմք առեալ՝ յորժամ երևեցաւ մարդ. քանզի դրեալ է փոքր ինչ խոնարհ քան զհրեշտակս տեսանեմք զյս՟ վս՟ չարչարանաց մահուն՝ փառօք և պատուով պսակեալ։ *Արդ՝ ՚ի բաց մերժեսցուք զառ ՚ի յայ՟ հօրէ երևեալն բան ՚ի նմա վայելչապէս գերունակութէն, և յառնա ըստոյգ նմանութէն. և ք՟ զհրեշտակաց փառաւորութին խոնարհագոյնս տեսցուք վս՟ տնօրէնութեն փոքրավայելչութե. *Այլ ո՞չ ուրեք վարկանիմ պարտ դող. ո՞չ ՚ի մարդկայնոցն ՚ի բաց վըճարել ամենևին զառ ՚ի յայ՟ բանն յետ ՚ի մարմին ժողովմանն. այլ և ո՛չ յա՟ծավայելուչ փառաց զրկել զմարդկայինն որ ՚ի քս՟ իմանի և ասի. *Սակայն զհարցանելն

է ճծդ ոմանց

ոմանց ոչ անգիտացայ՝ թէ ո՞վ արդեօք իցէ յա՟. ճշմարտապէս յո՟քն. որ ՚ի կնոջէ մարդն, թէ ՚ր ա՟յ բանն։ *Մեծ յիմարութի է ամենևին յարձակիլ յանեղորդս, և անմտաբար առասպելաբանութք ընդ դիմանալ. բայց ասացից՝ զի բարերար է և ոչ անձեռս բաժանել յերկուս. և ըստ մասին կացուցանել ՚ի մդ և՚ի բան. և ոչ յանձըն առնլով տնօրէնութեն. և մի քո կոչելով ածաշունչ գրոց.

*Քանզի պարտ գ՟ղ ասեմ եմ՝ ոչ զաւ ՚ի յայ բանն առանց մարդկութեն, և ոչ զոր ՚ի կնոջէ ծնեալն ոչ միացեալ ընդ բանին՝ քո անուանել. *Քանզի մարդկութն ըստ միաւորութե տնօրինականի՝ անճառապէս ժողովեալ որ յայ բանն՝ իմանի քո. վերագոյն է զմարդկութի ոչ բնութէ ած և ոգի. *Ո՛չ անպատուելով զոր ՚ի նը հաստութեն լինիլ թըհեցեալ վո մարդկութեն. որև երբեմն ասէր. որ եսես զիս՝ եսես զհայր. և երբեմն, ես և հայր մի՛ եմք. իսկ երբեմըն դարձեալ, հայր իմ մեծ է քան զիս. ոչ նը հաղեցուցեալ ՚ի հօր էութեն նոյնութէ՝ ըստ ածի որ ինչ և իցէ զհահաստութի. ՚ինքնատութե ասել վո մարդկութեն. *Քարոզի և ՚ի ձեռն սրբազանից. երբեմն ոչ բոլոր գոլով մարդ՝ լուեալ ածութենր տնօրինաբար. *Իսկ երբեմն դարձել ոչ ած՝ լուեալ ՚ի մարդկութենր. և վնասի և ոչ ըստ իւրեք եղանակի վո երկոցունցն ՚ի միուն տեսութե. զոր և ածային Պօղոս՝ եբրայեցին եբրայեցւոց. ՚ի ցեղէ բենիամենի՝ կոչեցեալն առաքել.

ԵՃԾԵ գրէ՛

գրեք՝ առ որս հաւատովքն արդարացեալս. և սպանեալ զանդամս մարմնոյ. զպոռնկութի՟ ասեմ և զախտ և զցանկութի՟ չարեաց և զագահութի՟. քանզի մեռայք և կեանքն ձեր ծածկեալ են ընդ քի՟ առ ած՟, այլ և ինքն ասէր յաղագս իւրոյ աշակերտացն. *Հայր, ս՟բ պահեա՛ զնոսա՛ յանուն քո՝ զորս ետուրն ինձ. զի եղիցին մի. ոպ՟ և մեք մի եմք. յորժամ էի ընդ նս՟՝ ես պահէի զնս՟ յանուն քո. և ոչ ոք կորեա՟ 'ի նոցանէ, բայց միայն որդին կորստե՟ն. զի գիրն լցցի. բայց այժմ առ քեզ գամ և զայս խօսիմ յաշխարհի. զի ունիցին զուրախութի՟ն իմ լցեալ յինքեանս. 'Իմաստ առ. զի թէ և 'ի միայնոյ մարդկութենէն յայտնի նշանակեալ թէ՟ի, ոչ ուրեք համարեսցուք թաքուցեալ և 'ի բաց գնա

ցեալ յաշխարհէ, որ և ասէր յայտնապէս. ամէն ամէն ասեմ ձեզ. զի ուր իցեն ժողովեալ երկու կամ երեք յանուն իմ՝ անդ եմ ես 'ի մէջ նց՟. և դարձեալ, ահա ես ընդ ձեզ եմ զա՟մ աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի. *Գիտիցե՞ս արդեօք և զնոյն որբազանն Պօղոս. ապացուցեալ յոլովակի մարդ քարոզէ զնա և ասէ. պօղոս առաքեալ՝ ոչ 'ի մարդկանէ, և ոչ 'ի ձեռն մարդոյ, այլ 'ի ձեռն յի՟ քի՟. *Յա՟ առայսուքիւք՝ ծանուցանեմ ասէ ձեզ զաւետարանն իմ զոր աւետարանեցի ձեզ. զի ոչ է ըստ մարդոյ. քանզի և ոչ ես 'ի մարդոյ առի. և ոչ ուսայ յումեքէ. այլ 'ի յայտնութենէն յի՟ քի՟. զոր և յայլ ուրասէ. զի թէ և գիտացաք ըստ մարմնոյ զքս՟. այլ արդ ոչ ևս նոյնպէս գիտեմք.

ԲԺԾԳ Մարդ՝

*Արդ՝ ո՛վ է յո̄ քա̄ն որ զայսպիսի անճառելի և անմոլոր և զա̄ծային յայտնութի՛ իւրոյն ճառագայթեաց նմա։ *Ո՞չ ապաքէն եղեալն մարմին բանն, և զոր ՚ի կնոջէ վ̄ս մեր ոչ անպատուեաց ծընունդ. որև զիմարդ ոչէ ճշմարիտ զոր ասացի. քանզի յիշեմք զասելն երանելոյն Գաբրիէլի առ կոյսն ս̄բ. մի՛ երկընչիր մարիամ. զի աՀա յըղասցիս և ծնցես որդի. և կոչեսցես զանուն ն̄ր Յ̄ս։ *Նո՛ր Համարիմ զանունս զայս առ ՚ի Հօրէ տըւեալ բանին՝ ձայնիւ Հրեշտակին. քանզի յառաջագոյն աղաղակէր զայն յայտնութիւն մարգարէական. կոչեսցեն ասէ զանուն ն̄ր ըզնո՛ր՝ զոր տ̄ր անուանեսցէ նըմա. *Արդ՝ յորժամ մըշտընջենաւորակիցն Հօր՝ և նախ քան զա̄մ յաւիտեանս որդի և միածին, և ՚ի յետին յաւիտենի ժամանակս եղև և ծնաւ ՚ի կնոջէ, և սաՀմանեցաւ որդի. և երևեցաւ և անդրանիկ եղև ՚ի բազում եղբարս. *Յայնժամ և բնութ̄բ Հայրն. զի այսպէս ասացից, սաՀման է՛ անուն Հայրութ̄ե օրինաց Հետևել. նոյն ինքն երբեմն է և միածին և անդրանիկ. քանզի միածին ո̄պ ա̄ծ. և անդրանիկ ՚ի մեզ՝ ը̄ս միաւորութ̄ե տնօրինականի. և ՚ի բազ̄մ եղբարս ո̄պ մարդ. Զի և մեք ո̄պ նորա և ՚ի ձեռն ն̄ր որդիք ա̄յ՝ բընաւորապէս և ըստ շնորՀի. բնաւորապէս՝ ո̄պ նորա և միայնով. իսկ Հաղորդութ̄բ և ըստ շնորՀի՝ մեք ՚ի ձեռն ն̄ր Հոգւով. *Արդ՝ ո̄պ եղև մարդկութ̄ե իւրոյ ք̄ի միաւորութիւն. վ̄ս միաւորելոյն ընդ նմա բանին. ը̄ս տեսչութ̄ե տնօրինականի. այսպէս իւր է բա

ըձծէ նրն

նին ՚ի բզմ եղբարս. և անդրանկութի վս միանալոյն ընդ մարմնոյն։ *Մարդ՝ հաստատուն ունելով զգոյն ած և ՚ի վեր քան զփոփոխումն. եկաց մնաց միշտ՝ որ ինչ էրն. և յորժամ եղև մարդ՝ է զամենեսեան գերունակութե վերնոց փառօք պըսակեալ *Որ և հրամայեցաւ է մեզ վերնոցն զօրութեց սբ և երանելի բազմութեն երկրպագել նմա։ *Քանզի էր ուրեք և յոյժ ՚ի դէպ ուրանալ զերկրպագութին և հեղգանալ ՚ի պատուելոյ զմարդկութեն փոքրավայելչուի տեսեալ. և զի վս մերն եղեալ ըստ մեզ՝ ոչ արժանաւորել փառբանութե. ՚ի բաց հեռացել մոլորիլ թլեցեալ. *Քանզի ծածուկէր և նց տակաւին քի խորհուրդն, այլ յայտնէր նց հոգին, և ոչ տայր ամպարշտիլ որբոյն. զոր

Եւ ասէ ածային Պօղոս յորժամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ՛ երկիր պագցեն նմա ամ հրեշտակք այ. *Քանզի իւրովն բնութե ՚ի վեր է զորեզերս ամ՝ արտաքոյ գոլ իմանի ած. եմուտ ՚ի նա մասն ինչ ծի. երևեալ ով մարդ. սակայն ոչ անկաւ վասնայնորիկ յածայնոցն փառաց. *Քանզի երկրպգի ով միածին. թէ և կոչի անդրանիկ. որէ յայտնապէս մարդկութեաս չափուց մանաւանդ վայելուչ. *Մարդեօք ով մարդոյ երկրպգեմք էմմանուէլի. մի՛ լիցի. քանզի զառանցանք են այս, և պարանք մոլորութե. և ոչ ը երբէք գտանիմք լաւագոյն քան որք զարարածսն պաշտեն, և ոչ զարարիչն. Որք փոխանակեցին ըզճշմարտութին այ ընդ ստութե. ծառայեցան և պաշտեցին զարարածս է ձծը և ոչ եւ ո՛չ զարարիչն ըստ գրեցելումն. որոց թէ հաւասարախոհք եղիցուք, ընդ նոցունց լըլիցուք ամ իրօք. *Զանձինս տուիմաստունս ունէին՝ յիմարեցան. և փոխեցին զփառս անեղծին այ՝ ՚ի նմանութի պատկերի եղծանելի մարդոյ՝ և թռչնոց և չորքոտանեաց և սողնոց. եթէ եղիցուք և մեք հաւասարագործք և համախոհք նց զորս յիշեցաքն, զայ փառսն ըն ստութն փոխանակելք. նմանութն պատկերի ապականացուի մարդոյ. թէ ո՞չ սոսկ մարդոյ և միոյ ումեք ըստ մեզ մատուսցուք զերկրպագութն Էմմանուէլի. Զինչ. ո՛չ և նոյն հըրեշտակացն վերին բազմութին յայս մոլորութի եկեալ դատեսցի. այլ անհնարին համարիմ մոլորութի գրել և հեթանոսաց նմանիլ և դժուարաւ մաքրելի քան զառաջ նոյն յանցանաց վնաս. *Քան զի մոլորեալ էին եւ այժմ ո՛չ ինչ պակասք զառաջինն, զուղիղ ճանապարհն անգիտացեալ. և ո՞չ նման է. աւելորդ էր աղաղակելն երանելոյն Պօղոսի և ասելն. այլ յայնժմ ո՛չ գիտէիք զած. և ծառայէիք որոց ո՛չն էին բնութբ ածք. բայց այժմ ծանեայք զած. յա՛ւէտ զի ծանուցեալ եղէք յայ. զիա՞րդ դառնայք դարձեալ ՚ի տկարս և յաղքատ տարերս. որոց դըձլ վերըստին ծառայել կամիք. *Քան զի զո՞ր ես ած ծանեան եթէ ո՛չ է բնութբ ած Քն՝ յոր հաւատացինն. և եթէ զմարդպաշտեցին՝ ՚ի յառաջին մոլորութեցն են անկեալ հաղբս. *Արդեօք ո՞չ է ճշմարիտ զոր ասեմս.

այլ ճշմարիտ է.

Այլ տես ո՞վ բան ասէր

ը ճծթ թա

Թագաւոր. թէ զիարդ ՚ի հարկաւոր խորհրդոյ գրեաց թէ՝ յառաջ մղիմք առ ՚ի պարտ գոլ. խոհականապէս ոպ̃ ա̃յ ըստ բընութե երկրպագել ոպ̃ յա̃յ հօրէ ծնիցելոյն բանի. և ըստ մերոյս կերպի երևեցելոյն երկուցն ՚ի միաւորութի ընթացման ոչ էր անհ̃րթ ՚ի բաց բառնալ զմարդկութե̃ն կարծիս. և ոչ ինչ էր որ արգելոյր: *Քանզի առեալ բանին բնութե̃ զմարդկայինն. ոչ մարդկութի եղեցի սոսկ. այլ յաղթեալ յաւէտ. զի յիւր փառս առեալ անշարժ յարակցութեամբ ա̃ծավայելուչ գերունակութին ամբողջ պահի. այսուիկ իմացուածով երկրպ̃գէին աշակերտքն ասելով. Ճշմարտապէս որդի ա̃յ ես. որ և ըղձնալն տեսանէին մարմնով ըստ մեզ. քանզի ի վերայ ծայրից ալեացն

գնայր հրաշափառապէս ոպ̃ ա̃ծ. *Ասիցէ՝ դք թերևս այսպիսեօք կարծեօք մարտնչելով. և զի՞ էր որ ասէր առ կինն սամարացի. դուք երկիրպագանէք որում ոչն գիտէք. մեք երկիրպագանեմք որում գիտեմք. և ապա զիարդ եղեցի երկրպագելի որ ընդ երկրպագուս է շարադասեալ: *Այդ ես ասեմ. զի ո՞վ էրն ասել բնաւին ՚ի վերայ Բ̃նի անմըտութի և անուսումնութիւն է. ոչ ուրեք բաժանի. և որ ընդ կընոջն խօսէր՝ մի և նոյն էր Տ̃ր Յ̃ս Ք̃ս յերկրըպագուէս մարդկութե̃ և յերկրպագելոյն ա̃ծութէ գոլ և անուանիլ ա̃ծ, համանգամայն և մարդ՝ Ճշմարտապէս ունելով ՚ի վերայ ինքեան *Որպէս մինչ դք ասիցէ և այլ ազգ վ̃ն Ն̃ր. ք̃ զի որովէն ա̃ծ իմանի գոլ

ք̃ Ճ̃կ   և ո̃ր

և տր՟ փառաց. իսկ որով եղեն մարդ ըստ հաղորդութե՟ն նր՟ որ յա՟յ փառաւորեալ. կարօտ էր և փառաց՝ ասելով. Հայր փառաւորեա՛ զորդի քո: Այլ մի տր՟. մի հաւատ. մի մկրտութի՟ ըստ գրեցելումս: * Որդ՚ոց մի է հաւատ որ ՚ի քս՟. և մի ճշմարտապէս մկրտութի՟. որ և ՚ի մկրտելն մեր ՚ի հայր ՚ի յորդի և ՚ի սբ՟ հոգին. ըն՟ նոյն օրինակի բանի համարիմ մի երկրպագութի՟ հօր և մարդացելոյն որդւոյ և հոգւոյն սրբոյ: * Քանզի ո՛չ ուրեք ՚ի բաց մերժեսցի ՚ի պարտդոլոյն երկրպագելն առ ՚ի մէնջ և ՚ի սրբոց հրեշտա՟կց միածինն թէ և եղև մարմին և բնակեցաւ ՚ի մեզ երևեցաւ և անդրանիկ ՚ի բզմ՟ եղբարս: * Ապա թէ ոչ, զի՞նչ իցէ դարձեալ ՚ինա հաւատոյն բան. զիա՞րդ ոչ է արժանի գիտելոյ. քանզի ոչ վարկանիմ թէ կամեցին ուղղակի խորհիլ՝ եթէ միայն հաւատացաք ՚ի յա՟յ հօրէ ծնեալն բան. ՚ի բաց մերկացուցեալ ըղնա ՚ի մարմնոյն

Եւ ոչ զայն թողլ տացուք ասել. քանզի ասի՝ ոչ որպէս մի ոք ըստ մեզ. և ոչ ոպ՟ ՚ի մարդ հաւատս. այլ ոպ՟ յա՟ծ լինիլ վայելուչ որ բնութե՟ և ճշմարտապէս ՚ի դէմս քի՟. * Բուռն հարցէ զբանէս և ՚ի մաստունն Պօղոս գրելով. քանզի ոչ զանձինս քարոզեմք. այլ զքս՟ յս՟ տր՟. և զմեզ ծառայս ձեզ քի՟ յի՟. զի ա՟ծ որ ասաց ՚ի խաւարի լոյս ծագել. որ և ծագեաց իսկ ՚ի սիրտս մեր առ ՚ի լուսաւորութի՟ գիտութե՟ ա՟յ և հօր՝ ՚ի դէմս քի՟ ծագե՟ց. որ և ասէր. որ ետես զիս՝ ետես զհայր. և ես և հայր իմ մի եմք. * Իսկ նկարագիր է՟ ճկի՟ ա՟ծայի ա͞ծային ոչ մ͞րմնականէ, այլ զօրութ͞բ եւ ա͞ծավայելուչ փառօք. *Ո՜, այս էր ստու͞գպէս 'ի ք͞ս ճանաչել. եւ այսոքիւք եւ գործոցն գերազանցութ͞բ 'ի մտածութ͞ի ածել կամէր յորս 'ի նմ՛ զլսօղսն՝ առ սակաւ սակաւ 'ի ն͞րաստացուցանելոյն զնա անհանճարեցն 'ի յերեւելոյն մարմնոյ. քանզի թէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ ասէ՝ մի՛ հաւատայք յիս. *Իսկ եթէ գործեմ թէ եւ ինձ ոչ հաւատայք՝ գործոց իմոց հաւատացէք. *Այլ վարկանիմ զայս. զի ոչ տեսանէր յանկատար օգուտ զիւրն ք͞ս. վ͞ս զի համարէին ա͞ծ ոչ գոլ ըստ բնութ͞ն զվ͞ս մեր մարդացեալն. այլ սոսկ մարդ ո͞պ զմեզ. *Վասն այնորիկ ոչ ընդունէին ոմանք ըզհաւատն որ 'ի նա. կարեւորապէս զերկնչին եւ ըզ

դանդաղելն 'ի բա՛ց հատեալ, ա͞ծութ͞ն բնութ͞բ վերադրէ՛ր ըզհաւատն որ 'ի դէմս Հօր, եւ ոչ ը͞ն մերոյս փոքրավայելչութ͞ն հետեւեցուցեալ. ասէր որ հաւատայ յիս՝ ոչ յիս հաւատայ, այլ յառաքիչն իմ. *Արդեօք ո՞չ իցէ հաւասար ասելոյ թէ որ զբանս իմ լսեն՝ մի՛ փոքունս եւ ը͞ն երկիր քարշեալս զորս 'ի յիս փառաւորեսցէ, այլ գիտասցէ թէ որք յիս յերեւեալս մարմնով մատուցանեն հաւատ՝ ոչ 'ի մարդ պարզաբար եղիցին հաւատացեալ. այլ 'ի յինքն Հայր ինեւ. ըստ ա͞մի հաւասար եւ անվըրէպ նմանութ͞բ որդւովս մարմնացելոյս վ͞ս ձեր. եւ զգեստափոքրավայելուչ իւրացուցեալ զմարդկութ͞իս. *Իսկ զհաւա͞րութ͞ի բնութ͞ն եւ զհաւասարութ͞ի եւ զնոյնութ͞ի փառաց անն͞րաղ ունե

ե͞ ձկ͞ե ըով

լով ամենեւիմբ առ նա։ *Ուսցիս և այլազգ ՚ի նմանէ զհաւատն · ոչ ՚ի բաց մերժել · այլ առանց հատման և տարբերութե ընկալեալ զնա · ոպ̅ յիւր դէմս թէ եղև մերդ · վ̅ս զի որ զ՚ի ծնէ կոյրն բըժշկեաց · և զքաղցր և զանսովորն տնկեաց ՚ի նըմա լոյս · վայելչաբար յամենեցունց զարմացեալ լինէր · այլ բժշկեալն յախտէն՝ ՚ի հրէիցն դատիւր և խոստովանէր ըզբժիշկն · *Իսկ Յս̅ պատահեալ նմա · դու հաւատա՞ս ասէ յորդի այ̅ ։ իսկ նր̅ զո՞վն է տր̅ աղաղակեալ՝ զի հաւատացից ՚ի նա · պ̅տսխանի տայր ասելով · և տեսեր զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ նա՛ է ։ իսկ նա ասէ՝ հաւատամ տր̅, և երկիր եպագ նմա ։ *Արև զի ո՛րդ ոչ է ամենեցունց յայտնի թէ աներևոյթ է ամենևին ա̅ծութիւն · քանզի զա̅ծ ոչ ոք երբեք ետես ըստ գրեցելումն ։ *Արդ թէ ի բաց մեկուսեալ յինքենէ զմարդկութին, ոպ̅ զայն զնոյն երևեալ յայ̅ հօրէ բանն՝ մերկ և միայն արժանաւորէր, հի՞մ յաւէտ զա̅յ բնութին ածել զմտաւ՝ պ̅րտ գոլ · թէ էր ոմն որ բժշկերոյն հըրամայէրն այլ եցոյց մարմնապէս · ոպ̅ և նշ̅ աչօք տեսանել առընթեր ։ ք̅ զի ասաց թէ և տեսեր զնա և որ խօսիդ ը̅ քեզ նա՛ է ։ ոչ ապաքէն զմարմինն ցուցեալ ասեմք ։ *Եւ ապա զիա՞րդ իցէ ինքն մարմին · եթէ ոչ իմասցի ը̅ միաւորութեն ոպ̅ և ինքն գոլով իւրնր̅ ։ ոպ̅ մինչև ՚ի վ̅ր մեր եղիցի ։ ցուցցէ ոք արդեօք ոչ բաժանաբ̅ր և ոչ անկատար զմարդ որ ըստ մեզ · զոր ՚ի հոգւոյ ասեմ և ՚ի մարմնոյ · և ՚ի միայնոյ ՚ի մարմնոյն ։ *Քանզի գրէ՛ ուրեմն

ե̅ ձկ̅գ ևի

և իմաստունն յօհաննէս թէ բ̃ղ̃մ և այլ նշանս արար յս̃ առաջի աշակերտացն իւրոց որք ոչ են գրեալ 'ի գիրս յայսմիկ. բայց այս չափ գրեցաւ զի հաւատայցէք թէ յս̃ քս̃ է որդի ա̃յ. և զի հաւատայցէք՝ և զկեանսն յաւիտենականս ընդունիցիք յանուն նր̃. Ասէ և ա̃ծայինն Պետրոս աղաղակելով առ հրէիցն ժողովուրդ. հաւատացէ՛ և յայտնապէս. իշխա՛նք ժողովրդեն և քհ̃նյպ̃տք. եթէ արժա՞ն իցէ դ̃տել զմեզ այսօր 'ի վ̃ր երախտեաց առն տկարի որով սա՛ բժշկեցաւ. յայտնի լիցի ամենեցուն ձեզ, և ա̃մ ժղ̃վրդենդ իղ̃ի. զի յանուն յի̃ քի̃ նազովրացւոյ՝ զոր դուքն խաչեցիք, զոր ա̃ծ յարոյց 'ի մեռելոց, նովաւ սա կայ առ̃ջի ձեր ողջացե̃լ. Աւ̂ յետ փոքու ինչ. և ոչ է փրկութի̃ 'ի ձեռն այլս

ուրուք. զի և ո՛չ անուն այլ է՝ 'ի ներքոյ երկնից տուեալ 'ի մարդիկ որով պ̃րտէ ապրիլ ձեզ. Արդ ո՞ արդեօք իցէ որ և ըղ մահն կրեաց և յարեա̂ն փառօք. ինազարեթէ՝ եթէ ոչ յս̃ քս̃. այսինքն որ նախ քան զա̃մ յաւիտեանս անճառաբար 'ի հօրէ ծնեալ. իսկ 'ի վախճան յաւիտենից և մարմնապէս 'ի կնոջէ. Արդ որ զհաւատն որ 'ի նա՛ մատուցեալ՝ ընկալցի ըղ վերագոյն պատի՛ւ. ք̃ զի կոչեսցի որդի ա̃յ. զի որք ընկալանն զնա՝ ետ նց̃ իշխանութի̃ որդիս ա̃յ լինել որք հաւատացին յանուն նր̃. որք ոչ յարենէ և ոչ 'ի կամաց մարմնոյ, և ոչ 'ի կմ̃ց առն՝ այլ յա̃յ ծնան զի եղիցի յառաջացեալ յամենեսեան ինքն ո̃պ գրեալ է, ծնաւ̂ 'ի կընոջէ. *Իսկ վս̃ զի է պըտուղ վերստին կերպ̃ցելոյ արարածոյս 'ի ձեռն սրբութե առ ած, եւ յառաջ ք̅ զայլսն ինքն ցուցանէ ծնունդ հոգեւորական, ո՛չ անսացեալ առն եւ կնոջ մերձաւորութե. ո՛չ զխանդպաւուք եւ արատով դատապարտեցէ ըզբնութիս. զի պտուականէ ամուսնութի. եւ որ ստեղծ իսզբանէ արու եւէգ արար զնս. այլ վեհգունի եւ անհամեմատելոյ գերակատարութե հետեւեցուցեալ զմարդկութեա բնութիւն. * Քանզի ծնունդ հոգւոյ եւ ո՛չ արանց տակաւին առնել զմեզ կամեցեալ. որ եւ հայր ասէ մի՛ կոչէք ձեզ յերկրի. ք̅ զի ձեր մի է հայր որ յերկինս է. իսկ ամենեքեան դուք եղբարք էք. * Ապա ուրեմն անբիծ է ամն հաւատալն ՚ի նմա. յաւէտ, զի եւ մեղաց անյիշութե պատուեալ. * Գրէ՛ դարձեալ մեծն Պօղոս. տեսեալ թէ ո՛չ արդարանայ մարդ ՚ի գործոց օրինացն՝ եթէ ո՛չ ՚ի հաւատոցն որ ՚ի Քս Յս. եւ մեք ՚ի Քս Յս հաւատացաք զի արդարասցուք նովաւ. * Իսկ ո՛չ ուրեք դանդաղեցայց. յոր հասեալ՝ տացի անդրէն զնոյն ասել. թէ Յս Քս ո՛չ մերկ եւ ըստ ինքեան յայ բան իմանի. այլ յորժամ էառ զմարդկութի եւ միաւորեցաւ ընդ մարմնի, այսպէս ունելով տեսեալ եղեւ ըստ մարմնոյս տեսակի. եւ սրբոց առաքելոցն եցոյց հայր ՚ի վերուստ ձայնիւ՝ այսպէս. դա՛ է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա՛ լուարուք. * Արդ՝ զի ոչ ՚ի դմա է ասէ որդի իմ. զի մի՛ ըստ մասին, եւ այլ յայլում թերեւս. այլ միմասցի նոյն ինքն ը̅ միաւորութե անօրինականի

ը̅ձկե եւան

և անզգամութիւն՝ է ընդդէմ ինչ ասել և յոյժ սըխալանաց։ *Բանզի հաւանեցուսցէ գրելովն Յօհաննէս այսպէս. թէ այս է վկայութիւն այ՟ զոր վկայեաց վս՟ որդւոյ իւրոյ. որ հաւատայ յորդին այ՟՝ ունի զվկայութիւն այ՟ յինքեան. և որ ոչ հաւատայ յորդի՝ սուտ առնէ զնա. զի ոչ հաւատաց վկայութեանն զոր վկայեաց ած՟ վս՟ որդւոյ իւրոյ. *Եւ վկայեաց թէ սա՛ է որ մարմնով եւ ՚ի ծառայի կերպի ոչ մի՟ և յատկապէս իմ ճշմարտապէս որդի. և զնոյն որ ի ձեռն սրբոյ մկրտութ՟են զփառաւորն շնորհ. և զնովաւ կենդանագործութիւն և ընդ այ՟ հօր հաղորդութի՟ սրբու՟ հոգւոյն քի՟ յի՟ եղել տացուք կարեւորապէս. *Բանզի յիշեմք զասացեալսն յովհաննու. թէ որ զկնի իմ գալոցն է՝ հզօրագոյն է քան զիս որում չեմ բաւական բառնալ զկօշիկս ոտից նր՟. նա մկրտեսցէ զձեզ հոգւովն սրբով և հրով։ *Արդեօք ը՟ մեզ մարդկութե՟նս գործ լինել ասիցեմք զկարօղն գոլ մկրտել հոգւով սրբով և հրով. և զի՞արդ եղիցի այս. որ և ասաց զայս. որ ոչ երբեք երեւեալ յայտնեալ. Նմա ասաց մկրտել հոգւով սրբով և հրով։ *Ո՛չ զայլոյ հոգի տըւեալ մկրտելոցն ծառայաբար, և ոչ պաշտօնեայ. այլ ոչ ած՟ ըստ բնութե՟ իշխանութբ՟ վերնով ինքն. և իւրովն. որով և ած՟ային նկարագիրն նշանակի մեզ։ *Բանզի վերստին կերպանամք ոչ ՚ի պատկեր ած՟ային ՚ի քս՟ յս՟. ոչ մարմնական կրեալ վերաստեղծութի՟ *Բանզի ամենեւին անմտութի՟ է այսպէս վարկանել. այլ հաղորդութբ՟ հոգւոյն

բ՟ձկլ՟ սըր

որբոյ. զնոյն քս՟ հաւատացաք 'ի մեզ ինքեանս. ոչ զի խնդրելով զայն աղաղակել. ցնծացէ անձն իմ 'ի տր՟. զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութե՟ և պատմուճան ուրախութե՟. *Բանզի որ միանգամ 'ի քս՟ մկրտեցայք՝ զքս՟ զգեցայք ասէ. *Իսկ եթէ դք յառաջ մատուցեալ ասիցէ որդեօք՝ 'ի մարդ մկրտեցաք. և զայս գոլ ասասցուք ճշմարտութե՟. և 'ի մէնջ պատասխանի լըւիցէ. բարւոք խօսեմ այր դու. զի՞նչ գործես ո՛վ այդպիսիդ. յերկի՞ր զյոյսն մեր 'ի ջուցանես. *Բանզի մկրտիմք՝ ո՛չ 'ի մարդ պարզաբար, այլ յած՟ մարդացեալ. և զերծուցեալ 'ի պատժէ և յառաջնոյն յանցանաց զորս 'ի նա́ ըզհաւատն ընկալեալս. *Ո՞ր և ածայինն պետրոս առ հրէայսն խօսելով ասէր. ապաշխարեցէք և մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ՝ յանուն յի՟ քի՟, 'ի թողութի՟ մեղաց ձերոց. և առնուցու ըզպարգևս հոգւոյն սրբոյ. *Բանզի լուծեալ 'ի մեղաց՝ զոր 'ի նա́յն յարե՝ իւրովն հոգւովն օծանէ. և զոր տայն ինքն ոչ յայ՟ հօրէ բան. և յիւրմէ բնութէ՟ աղբիւրացուցեալ մեզ. և ոչ հասարակաց եղեւ զիւրն, մարմնով տնօրէնութե՟ն վս՟ միաւորութե՟ն. և ոչ զմարդ փրկէր մարմնապէս. *Բանզի փչեաց 'ի սուրբ առաքեալսն և ասէ. առէք հոգի սբ՟. և ո՛չ չափով տայ զհոգին ըստ յովհաննու ձայնին. այլ ինքն մուծանէ յինքենէ ոչ և հայր. զոր ած՟այինն պօղոս զբոլորն 'ի ե՟ց եդեալ այսուիկ զկըրճիմ. երբեմն այ՟ և հօր հեռաւեցուցեալ երեւի.

ճշկէ և եր

և երբեմն որդւոյ. Բան զի գրէ՛ այսպէս. դուք ոչ էք մարմնով այլ հոգւով. եթէ է հոգին ա՟յ բնակեալ ՚ի ձեզ. իսկ եթէ ոք զհոգի ք՟ի ոչ ունի՝ սա չէ՛ ն՟ր. իսկ եթէ ք՟ս ՚ի ձեզ է՝ մարմին մեռեալ է վ՟ս մեղաց. և հոգին կենդանի՛ է վ՟ս արդարուե՟. *Արդ՝ յայտնեաց եթէ իւր է հոգին որդւոյ. և ոչ ուրեք միայն որ բանն է երևելն ՚ի հօրէ. այլ թէ և իմասցի ըստ մեզ մարդ եղե՟լ, իւր է ՚ի հօրէն ա՟յ համագոյի որդւոյ ՚ի նմանէ ծնիցելոյ բանի. թէ և առիցի առնուլ յորժամ եղևն մարդ. ոչ յա՟ծութե՟ն առանձնաւորութե՟ց ա՟յ իւրով բնութ՟է խոնարհե՟լ *Որ և ինքն գոլով ամենեցունց կե՟նք վ՟ս ի կենդանի հօրէ անճառաբար ծննդեանն՝ կենդանագործիլ ասի ըստ մեզ. *Սակայն մե՛րձ է տեսանել. զի շնորհե՟լ իւրոյն մարմնոյ զա՟ծավայելուչ ներգործուե՟ն փառս. և իւրացուցեալ զմարմնոյն. և ա՟յ մինչ ըստ միաւորութ՟ե տնօրինականի յիւր բնութ՟ի յարդարեալ. ոչ ապաքէն վայելչաբար ոք ասիցէ էին ըստ բնուե՟ յա՟յ հօրէ բանին ՚ի վերուստ գոլ ՚ի յերկնից. կենդանագործելն կարել որոց և կամիցի տալ զկեանսն. *Ասէ՛ զի՞նչ ասէ սա ինձ. զարարչագործելն ա՟ծաէր՝ մարդկութ՟ե՞ ոք տայցէ. ոչ երբեք. զի՞մարդ կենդանացուցանէ զմեզ ա՟յ ա՟ծ. *Սակայն ոչ միայն ընդունելով զհոգին ս՟բ, այլ և ուտելի եղեալ առաջի և զառեալն մարմին. քանզի ասաց. ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ ուտիցէք զմարմին որդւոյ մարդոյ՝ և ըմպիցէք զարիւն ն՟ր՝ ոչ ունիք

ե՟ ձկ ը՟ կեանս

կեանս յանձինս. բամբասեալ զնա հրէիցն երբեմ. և լա՛ւագունուե վճիռ տալ ձեռնարկէին ոչ գիտեմ զխո՟րդ՝ երանելոյն մովսիսի և ասէին. թէ հարքն մեր կերին զմանանայն յանապատին որպէս և գրեալ է՝ թէ հաց երկնից ետ նց՟ ուտել. զի՞նչ նշան առնես դու զի հաւատասցուք ՚ի քեզ. զի՞նչ գործես. ո՞չ ՚ի վերուստ և յերկնից ՚ի ջուցեալ ըզմարմինն՝ ասէ ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ մովսէս ետ ձեզ հաց յերկնից. այլ հայր իմ տայ ձեզ հաց յերկնից զճըշմարիտն. *Քանզի հաց յա՟յ է որ իջանէ յերկնից և տայ կեանս աշխարհի և առ այսոքիւք դարձեալ. գրեթէ՝ որպէս մատամբ ցուցանէ զինքն մարմնաւոր. *Ես եմ ասէ հացն կենդանի յերկնից իջել. եթէ ոք կերիցէ ՚ի հացէ յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան. և հացն զոր ես տաց՝ մարմին իմ է զոր ես տաց վասն կենաց աշ՟ի. որ ուտէ զմարմին իմ՝ և ըմպէ զարիւն իմ՝ յիս մնայ, և ես ՚ի նմա. ո՟պ առաքեաց զիս կենդանին հայր, և ես կենդանի եմ վ՟ս հօր. և որ ուտէ զիս՝ և նա կեցցէ վասն իմ. *Որև զխո՟րդ ոչէ ճըշմարիտ ասել, եթէ էջ ոչ յերկնից մարմինն, այլ ՚ի կուսէն ը՟ գրոց. և ոչ է ուտելի բանն, այլ ՚ի մի յ՚երկոցունց ժողովեալն՝ և ընդ միմեանս խառնեալն. *Ընդ միաւորութե՟ տնօրինականի բնութե՟ցն առանձնաւորութ՟ք՝ ՚ի ձեռն բիւրոց բանից տեսանի մեզ. ք՟ զի նիկոդիմոսի ոչ առեալ ՚ի միտ զխորհուրդն. և ապաղակեալ անուսումնաբար. զխո՟րդ և մարթ այդմ լինիլ *Ապա՛ ասէ՝ զերկրաւորս ասացի ձեզ

Եւ ոչ հաւատայք. զիա՞րդ թէ զերկնաւորսն ասացից հաւատայցէք. Եւ ոչ ոք ել յերկինս եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ. *Իսկ հրէիցն դարձեալ զհաւասարն ն̅ր իմացեալ անխրատութ̅ի. եւ ծաղր առնել ըզ նա՛ կամեցեալ. ոչ գիտեմ զիա՞րդ. վ̅ս զի ասաց կենդանարար եւ յերկնից զիւրն մարմին. այս ըզ ձեզ գայթագղեցուցանէ՞ ասէ. իսկ եթէ տեսանիցէք զորդի մարդոյ ելեալ ուր էրն յառաջագոյն. *Ո՛չ ապաքէն 'ի կնոջէ ասեմք ծնեալ զէմմանուէլ. եւ արդ ո՞ւր է յառաջագոյն էրն. եւ կամ զիա՞րդ ել ուրանոր զգոյն ասէ իւր. որ եւ ծնեալ 'ի սրբոյ կուսէն միաւորեալ 'ի մարմնի. եւ ոչ անգործ գոլ խոստովանեսցուք զոր 'ի յերկրէ մարմինն առ 'ի կարօղ լինիլ կենդանագործել. որով հետեւ եկն յիւր բնութիւնն. *Արդ զիա՞րդ ա՛ղէ ասա՛ ինձ կենդանագործէ մարմինն. կամ զիա՞րդ 'ի մասցի յերկնից՝ որ յերկրէն. յայտ է թէ ըստ միաւորութ̅ե̅ն՝ որ առ կենդանին ասեմ եւ յերկնուստ բանն. քանզի խորհիմք զոր պարտ է եւ ուղիղ. եւ սրբազանից հետեւեալ գրոց. *Բանն զի ոչ էր այլ ազգ արարչագործ ա̅ծաբար՝ եւ յոր ժամ առանց մարմնոյն 'ի մանիւր. եւ վկայ բանիս արարից դարձեալ զդըրեալն ա̅ծայնոյն պօղոսի. *Գոհանամ զա̅յ հօրէ. որ բաւականս արար ըզ մեզ 'ի մասն վիճակի սրբոցն 'ի լոյս. որ փրկեաց զմեզ յիշխանութ̅է խաւարի. եւ փոխեաց յարքայութիւն որդւոյ սիրելւոյ իւրոյ. որով ունիմք զփրկութ̅ի եւ զթողութ̅ի մեղաց. որ է պատ կեր աներևութին ա՟յ · անդրանիկ ա՟մ արարածոցս · զի նովաւ հաստատեցան ա՟մ, յերկինս և յերկրի · երևելիք և աներևոյթք · եթէ աթոռք եթէ տէրութի՟ք · եթէ պետութի՟ք եթէ իշխանութի՟ք · ա՟մ նովաւ, և ՚ի նմա ստացան · *Եւ նա՛ է նախ քան զա՟մ · և ա՟մ նովաւ հաստատեցան · և նա՛ է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ · որ է սկիզբն, անդրանիկ ՚ի մեռելոց · զի եղիցի յամենեսեան ինքն յառաջացեալ · զի ՚ի նմա հաճեցաւ ա՟մ լըրումն ա՟ծութ՟ն բնակել · և նովաւ հաշտեցուցանել զա՟մ ՚ի նա · արար խաղաղութի՟ արեամբ խաչին իւրոյ յերկինս և յերկրի · *Ահա դարձեալ յայտնապէս ասէ՝ նովաւ և ՚ի նա ստացեալ զա՟մ · այլ զի և նախ քան զա՟մէ · և թէ ա՟մ նովաւ հաստեցան և զնա գոլ ասէ անդրանիկ ՚ի մեռելոց · խաղաղացուցեալ ՚ի ձեռն ն՟ր արեան՝ զորս ՚ի յերկինս, և՛ զորս ՚ի յերկրի · *Ապա՛ ծնէ մեռելոց՝ անդրանիկն՝ թէ ոչ ք՟ս յ՟ս · այսինքն ՚ի մարմնի և մարմնով բանն · քանզի ոչ ուրեք մեռանէր յիւր բնութ՟ն ա՟ծ գոլով բանն · և ոչ ուրեք իմանիւր բոլորիցս արարչագործ ըստ մեզ գոլով մարդ · եթէ ոչ էր արարչագործեալ ո՟դ ա՟ծ · և եթէ ոչ առանց մարմնոյ իմացի յետ միաւորութ՟ն · իսկ անդրանիկ ՚ի մեռելոց՝ որ ըստ մերում երևեցաւն մարդ՝ ոչ ՚ի բաց դնելով զգոլն ա՟ծ վասն մարդանալոյն ·

*Տեսցես և այլ ուր ՚ի ձեռն նոցունց յառաջ բերեալ զբանս հոգեկրացն · ք՟ զի յօհաննէս ասէ · ՚իսկզբանէ էր բ՟նն · և բանն էր առ ա՟ծ · և ա՟ծ էր բանն · նա՛ էր ՚ի սկըզ բանէ՛ առ ած՟ ։ ամ՟ ինչ նովաւ եղև. և առանց նր՟ եղև և ո՛չ ինչ. իսկ պօղոս դարձեալ՝ մի է ած՟ հայր՝ յորմէ ամ՟. և մի տր՟ յս՟ քս՟՝ որով ամ՟։ *Այլ եթէ էր ինչ ՚ի միջի յետ միաւորելոյն ընդ մարմնոյ բանին, և յայլութի՟ բաժանէր, զոր ո՟չ որդւոյ երկնել ասեմ ըստ ոմանց կարծեաց. զիմարդ ստացանէ ամ՟՝ քի՟ յի՟։ այլ սակայն ամ՟ նովաւ ստացան։ *Քաջայայտէ թէ որ ինչ բնութ՟ և առանձնապէսն են յայ՟ հօրէ բանին՝ պահին դարձե՟լ նմա և յորժամ երևեցաւն մարդ. գայթագղութի՟ ուրեմնէ բաժանելն յանդգնել. ք՟զի մի է տր՟ յս՟ քս՟ որով ար՟չագործեաց հայր զամ՟. արդ՝ է ն՟ արարչագործ ած՟աբար. և կենդանացուցիչ ո՟չ կեանք մարդկայնովք և՚ի վեր քան զմարդ՝ իւրութե՟քն. ՚ի մի իմն մէջի շարակցե՟լ. *Քանզի միջնորդէ այ՟ և մարդկան ըստ գրոց. բնութբ՟ ած՟ գոլով. և ոչ առ՟նց մարմնոյ. իսկ մարդ ճշմարտապէս. և ո՛չ սոսկ ըստ մեզ. այլ մնաց որ ինչ էրն թէ և եղև մարմին. քանզի գրեա՛լ է՝ թէ յս՟ քս՟ երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեանս։ *Ոչ ապաքէն ՚ի սրբոյ ածածնէն ծնեալ հաւատամք ՚ի յետին ժամանակս զէմմանուէլ. *Ապա՛ զիմարդ ո՛չ է այս ճշմ՟րիտ. զի երէկն և այսօրն, ո՛վ քս՟ ասէր թագաւոր. ժամանակ նըշանակէ՝ մեզ զներկայս և զանցե՟լն. արդ՝ զիմարդ նոյն ինքն իցէ արդեօք յանցելու՟մն. որ և զծընունդն ըստ մարմնոյ չև ևս առեալ։ ապա ուրեմն էր բանն ՚ի սկըզբանէ. և ո՟չ ՚ի մշտնջենաւորէ և անփոփոխելւոյ երևե՟լ յայ՟ և՚ի հօրէ. ունի և ինքն յիւրում բըն նութեն ըզմշտնջենաւորութի և զանփոփոխութի ոչ ապաքէն նոր ամէնեւիմբ և մարդանալոյն ժամանակի եղև ընթացակից անուն բանին. յ͞ս ք͞ս որ և այս մեզ ՚ի ձեռն բազում բ̃նից ցուցաւ. *Արդ՝ ՚ի մի՛տ առնուս եթէ ք͞ս յ͞սն ոչ զմարդոյն բնութի և ոչ միայն զբանն տեսեալ երէկ և այսօր զնոյն գոլ ասէ և յաւիտեան. զի մրդ արդեօք ունիցի զանփոփոխութի ՚ի նոյնութեն զմնալն մարդոյն բնութի. որ և շարժութի կրել. և նախ քան զայսն յոչէիցն յէութի գոլ եւ կեանս, ստեաց արդեօք մեզ զճշմարտութին սրբազանն գիր: և զերէկ ոչ էն յառաջագոյն գոլ ասաց. *Ոչ արդեօք ասացից զայս ես. և կարի իսկ քաջ է զի երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեանս յ͞ս ք͞ս. իսկ զբանին զերիցագունութի և զանշեղութի՝ ոչ ուրեք ուրացայց թէ եղև մարմին. այլ համարիմ ըստ միաւորութեն ընդ իւրում մարմնոյ որպ̃ երէկն գոլ՝ և յառաջագոյն գոլ դարձեալ նշանակել զնա. *Որ և անգոսնէին զնա անզգամ հրէայքն և բամբասէին զի ըստ մեզ մարդ երևէր և ՚ի վեր ք̃ զմարդ սկըզբնագունութե իւրոյ երիցագունութեն վկայէր ասելով որպ̃ ա̃ծ. *Ամէն ամէն ասեմ ձեզ. յառաջ քան զլինելն աբրահամու եմ ես. յորժամ և առայս ասէին՝ յիսուն ամ չև ևս է քո, և զաբրահամ տեսե՞ր. *Ասաց և յովհաննէս. սա է վ͞ս որոյ եսն ասէի զկնի իմ գայ այր, որ առաջի իմ եղև. զի նախ քան զիս էր. Որ և զի մրդ այր տեսանելով և անուանելով զէմմանուէլ առաջի իւր և

Լ.— Թէոդոս.

Նախ քան զինքն լինիլ ասէր զանազանելն երգ յետ նորայն. *Լ. ժԼ ասիցէ ոք թերևս առաջի իւր և նախ քան զինքն լինիլ ասէ ըստ փառացն, արդ թէ և նշանակէ 'ի մանալ՝ բայց զի սուտ է և անուսումն այսպէս իմանալ. ո՛չ է մեզ հեռի բանս ցուցանել. *Բան զի ընկալեալ զառաջին իմ 'ի վեհագունութի փառացն ըստ հաւատար բանի. իսկ զկնի իմ ասացուք որպէս փառօք զերկրորդն նշանակել, պատահեսցի այժմ ո̃պ 'ի հարկէ մեզ ք̃ զյովհաննու զփառսն խոնարհագոյն ասել զքն̃. և զկնի իմանալ ընթանալ անհանձարաբար. քանզի ասաց թէ զկնի իմ գայ այր. *Ո՜վ անտեղութեա. քանզի համարեսցուք ո՛չ ուղղակի ունիլ. ածեալ զմտաւ ասա՛ զոր 'ի սաղմոսնէ գրեալ. թէ

*Թագաւորն.

ո՞վ է յամպս որ հաւասարէ քեզ տ̃ր. և ո՞վ նմանիցի ա̃ծ յորդիս ա̃յ. վերադրելի՛ է ուրեմն և մարմնով նմա զերիցութի̃ն ո̃պ ա̃յ ըստ բնութե̃ միաւորեցելոյ ընդ մարմնի. և զիւրն բարութի̃ս հասարակորդեալ իւրոյն մարմնոյ. *Օ այս ուսցիս աստանօր ունիլ և ուղղակի՛ ասել և յայլոց վկայութե̃ց թէ կամեսցիս. ք̃ զի ասաց ուրեմն ա̃ծ յաղագս որոյ 'ի զաւակէն Դաւ̃թի ը̃ մրմնոյ 'ի ձեռն միոյ 'ի սրբոց մր̃գրէիցն. և դու բեթլէհէմ տուն եփրաթայ. սակաւաւո՛րես 'ի գոլոյ 'ի հազարաւորս յուդայ. 'ի քէն ելցէ ինձ լինիլ իշխան իլ̃ի, և ելք նր̃ 'ի սկզբանէ աւուրց յաւիտենից. *Իսկ վս̃ որդւոցն իլ̃ի սրբզ̃նն ասէ Պօղոս թէ ամենեքին 'ի Մովսէս մկրտեցան յամպն և 'ի ծովն. և ամե

ՅՃՀԴ Նե

նեքին զնոյն հոգևոր կերակուրն կերին . և ամենեքին զնոյն հոգևոր ըմպելին արբին . ք̃զի ըմպէին 'ի հոգևոր վիմէն՝ որ երթայր ընդ հետ նց̃ . և վէմն էր ինքն Քս̃ . * Արդ տես 'ի քս̃ յս̃ ցուցեալ ըստ միաւորութ̃ե տնօրինականի զառանձնապէս բանին զերկցութ̃ի . եթէ ո՞չ է յայտնի բանս , քանզի բեթղեհէմացին ոչ̃ զմարդ և 'ի կնոջէ . և 'իսկզբանէ յաւիտենից զելն ասէ . ք̃զի 'իսկզբանէ՝ էր և նախ ք̃ զա̃մ յաւիտեանս մարդացեալ բանն . * Եւ նա էր վէմն որ զպապակեալն իւր անյուսաբար՝ յանակնկալուի աղբերցն արբուցանէր . * Որ և ծնել ըդ̃ մարմնոյ մարդկօրէն 'ի յետին յաւիտենիս . և օծեալ յայսմ ժ̃ի յառաքելութի յո̃յ և 'ի հօրէ . քանզի ոչ այլ իրիք աղագաւ անուանի քս̃ , այլ վս̃ այսորիկ՝ քս̃ . երբեմն ըդ̃ Պօղոսի հանդիսակից և ճգնակից լիցի բանին . * Եւ իմաստունն Յովհաննէս գրէ թէ ժողովել զբնութ̃ին և կապեալ 'ի միութ̃ զերկքանչիւրոցն առանձնաւորութ̃ցն զօրութ̃ի . և տես զոր ասէն . որ էրն 'իսկզբանէ՝ զորմէ լըւաքն և տեսաք աչօք մերովք . և ձեռք մեր շօշափեցին 'ի վ̃ր բանին կենաց . և կեանքն յայտնեցաւ . և տեսաք և վկայեմք և պատմեմք ձեզ ըզկեանսն յաւիտենական . որ էրն առ հօր և երևեցաւ մեզ : Ահա զոր էրն 'իսկզբանէ տեսանել ասէ յայտնապէս . կրել և զշօշափումն . գոչէր և Թովմաս տ̃ր իմ և ա̃ծ իմ . շօշափել մատամբ զկող մրմ̃նոյն և զտեղիս բևեռացն . լինիլ ասէ և զսբ̃ զառաքեալսն ա̃ծայինն Պօղոս ինքնատես և սպասաւորս բանին . Քանզի տեսանելի

ը̃ ձ̃հն̃ եղև

եղև անմարմինն' և շօշափելի անշօշափելին. ո՛չ օտար ունելով զդեստ զմարմինն, այլ իւր արարեալ զնա. և 'ի նմա և նովաւ ծանուցել ոմ ածետր. * Գրէ՛ և ուրեմն և սրբազանն Պօղոս. քանզի ո՛չ ոք 'ի մէնջ անձամբ կեայ, և ո՛չ անձամբ մեռանի: եթէ կեամք' տն կեամք. և եթէ մեռանիմք' տն մեռանիմք. * Քանզի յայս իսկ և քս մեռաւ և յարեաւ. զի մեռելոց և կենդանեաց տիրեսցէ, արդ' յայտնեաց թէ տիրեաց ճշմարտապէս մեռելոց և կենդանեաց. որ ո՛չ այլ իւրեք աղագաւ, բայց վս այսորիկ միայնոյ մեռեալ և յարուցեալ: * Արդ' զո՞ ոք արդեօք ասեմք. որ թէ և եմուտ ընդ մահուամբ, այլ յարեաւ դարձեալ յայտնէ թէ զորդի. զի և որդի ամ ոք ոմ վարկանիմ հաւանեսցի. * Արդ' զի՞նչ ասասցուք արդեօք. մահու և ապականութեան ընդունա՞կ որ յայս հօրէ բանն. թէ քան զմահ և զապականութիւն վերադո՛յնէ և կեանք. * Որ և զիա՞րդէ 'ի մեռեալս ազատ ըստ գրոց. քանզի մեռաւ. այլ ո՛չ ըստ իւրեան բանն, այլ ասեմք եթէ մեռեալ մարմնոյ նր. նա՛ ասի զայն կրել. ապա՛ ուրեմն ո՛չ առանց մարմնոյ. այլ 'ի նմա՛ յաւէտ և նովաւ զօրութեն զգեցեալ փառս որ. օրինօք մարմնոյ և բնութե ըստ մեզ մեռեալ և յարուցեալ. * Քանզի մարդկային աւետ մեռանիլն. իսկ ներգործութի ածային 'ի զյառնելն ցուցեալ. քանզի երկոքումբք ծանիցի ըստ մեզ համանգամայն և գերագոյն քան զմեզ ոմ զած, և բոլորիցս եղեալ երևելի տր. որ և նախ քան զմարմինն թագաւո́ր էր ընդ հօր իւրոյ. * Այսպէս գիտացեալ զնմ́ նաթանայէլ՝ աղաղակէր. վարդապետ դու ես որդի այ՟. դու ես թագաւորն իղի. * Նա́ ինքն առ իւր աշակերտսն ասէր. դուք կոչէք զիս տր՟ և վարդապետ, և բարւոք ասէք. զի ե՛մ իսկ. և գործով հաստատարմացուցեալ է հան 'ի մեռելոց. ետ իշխանութի՟ 'ի վր՟ այսոց պղծոց. ոչ՟ զի հանել զնս՟. և բժշկել զամ՟ ախտս և զամ հիւանդութիւնս 'ի ժողովրդեանն: Բան զի յանուն յի՟ քի՟ նա զօրացուոյ բժշկեցաւ կաղն յոտից. եդեալն առ գեղեցիկ դրանն. զայսպիսի հիւանդութիւնս երկայն և դժուարաբուժելի հալածեց յենայէ. առոր ածայինն ասաց պետրոս. ե՛նա բժշկէ՛ զքեզ քս՟ յս՟. * Ամենայն ուստեք ուրեմն մնեալք

Ա.

'ի ճշմարտութի́ն և սըր բազանից գրոց քննել զշաւիղս փութացեալք, և որբոցն՝ հարանց հետեւեալ ուղիղ հաւատոց: և զոր յարմարոյն յեսսեայ, զոր 'ի զաւակէն դաւթի՝ զորս ըստ մեզ ընդ օրինօք որպէս զմարդ. և 'ի վեր քան ըզ մեզ և զօրէնս ոչ՟ ած՟, զոր վս՟ մեր ասէ և ըստ մեզ 'ի մեռեալս: զոր 'ի վեր քէ՟ զմեզ, և ինքեամբ կենդանարար. որդի գոլով այ՟ հօր ըստ ճշմարտութեն հաւատամք. ոչ թափուր արարեալ յածութենէն ըզմարդկութին: ոչ 'ի մարդկութէն մերկացուցեալ ըզ բանն. յետ անպատմելւոյ և անճառելւոյ միաւորութեն: այլ մի՛ և զնոյն խոստովանիմք որդի. 'ի միութն յերկուց իրաց անճառապէս երևեալ ըստ միաւորութեն. ոչ յառաջագոյնն ասացաք. և

բ՟ ճհէ ոչ

առ 'ի բնութե՟նն յեղե՟լ:

*Արդ՝ որք այսպէս փառաւորեն զնա՛ եղիցի նց՟ շա՛հ. զոր հաստատէ՛ ասելովք՟ն աշակերտն. Թէ որ ոք խոստովանի եթէ յ՟ս է որդի ա՟յ՝ ա՟ծ 'ի նմա բնակի, և նա յա՟ծ.

*Եւ՛ զի յ՟ս ք՟ս որ 'ի դաւ՛թայ ըստ մարմնոյ. ըստ բնութե՟ն և ճշմարտապէս է որդի ա՟յ. ըստ որում եղև մարմին բ՟նն և բնակեցաւ 'ի մեզ. կնքէ՛ իմաստունն յօհաննէս՝ և գիտեմք զի որդին ա՟յ եկն և ետ մեզ միտս. զի ծանիցուք ըզճշմարիտն ա՟ծ. և եմք 'ի ճըշմարտի որդւոյ նորա յ՟ի ք՟ի, սա է ճշմարիտ ա՟ծ և կեանք յաւիտենից. և նովաւ և ընդ նմա ա՟յ և հօր փառք հանդերձ հոգւովն սրբով յաւիտեանս յաւիտենից. ամէն.

*Նորին Սրբոյն Կիւրղի, Եպիսկոպոսի. Աղէքսանդրացւոյն գրեալ յաղէքսանդրէ. *Առ բարեպաշտ *Թագաւորն Թէոդոս. Յետ դառնալոյն 'ի աքսորէ Ժողովոյն.

*Գլուխ · ԼԲ · *

ԱՈՅԻՆՆ և անմահ և բոլորեցս իշխեցօղն բնութե՟ի և 'ի լոյս անմատոյց բնակեալն. և աթոռ ունի զվերինն իւր միայնոյ վայելուչ. զորով շուրջ կան պետութիւնք և իշխանութիւնք. և նոյն ս՟բ սերովբէք և քերովբէք. և որպէս ասէ սրբազանն գիր. ա՟մ գործք ն՟ր 'ի նմանէ երկնչին և դողան *Ամ՟լ և այս փառաւորեալն և ա՟մ իւրի եկեալ յանդունդս՝ գիտութե՟ն գերունակութենն և ան ճառելոյն զօրութե՟ · հաստատարանման ունի զհեզութի՟ն · քանզի ոչ ուրեք կարէր բերել զեզականս անխառն ի ք՟ղցրութե՟ զայսպիսի հզօր և գերաբուն զօրութի՟ և իշխանութի՟ · * Ո՛ր և երանելի մարգարէն դաւիթ յաղագս իւրն և ամենեցունց որոց ՚ի յերկրի՛ս առնէր պաղատանս երբեմն ասելով· մինչեւ զի հո՛ղ եմք · իսկ երբեմն դարձեալ, թէ զանօրէնութի՟ս քննես տ՟ր տ՟ր · ո՛վ կարէ կալ առաջի քո · * Այլ և ամենահաճոյն յոբ · ՚ի փորձին ՚ի բանսարկուէն դաւն և անտանելի հարուածովք ըմբռնեալ՝ աղաղակէր առ ա՟ծ · ընդէ՞ր ոչ արարեր անօրէնութեանց իմոց մոռացումն և մաքրութի՟ մեղաց իմոց այլ կնքեցեր զանօրէնութի՟ս իմ ՚ի քըսակի · և նշանեցեր որ ինչ ակամայն յանցեայ · այլ վարկանիմ զի ասիցէ ոք արդեօք առայս վաղվաղակի · * Ասա՛ զի՞նչ ով քաջդ ՚ի նահատակաց · պարտաւորուե՟ զօրութի՟ համարիցիս ա՟յ ըզողորմին · զի յանցեար դո՛ւ· մեղադրե՞ս օրինադրին զի մինչ զմեղսն · * Այո՛ ասէ · քանզի որ զողորմինէ բնաւորեալ · և ո՛չ անզարմանալի ունի յայս զփառսն · ընդէ՞ր ոչ այդպէս երևի և յիս · քանզի ծնա՛րէ, և ո՛չ ա՟ծ իբրեւ եղանակի կրօղ գոլ գայ թագզիլ մարդկայնոցս մտաց · * Յոյժ ճշդեսցէ դատաւորն · կնքեսցէ զանօրէնութի՟ս ՚ի քսակի · հրաժարեսցի ՚ի մոռանալոյ զոր ՚ի վերոյ գթացելոյնէ երբեք · որք յոր ժամ ակն ունիցին·

* Իսկ եթէ բազում յանցանեմք ամենքեան և և ամենեւին անբծութի՟ նմա վայելէ · շնորհեսցէ

բ՟ ձ՟ ւթ՟ զան

Առ նոյն Թէոդորոս

զանյիշաչարութիւնն որով սովոր են տկարանալ. *Արդ՝ վայելէ յոյժ գերվերագունին գերունակութեանց. հեզ և հանդարտ խոնարհութեան, և է այս ըստ գերազանցեալ եղանակի աստուածայնոյ և առաւելագունի բնութեան. *Ըստ նմանութեան որ առ նա՝ և ձերումդ իշխանութեան Քրիստոսասէրքդ Թագաւորք. *Զի երկնից թագաւորութեան ոչ դըծագիր և նմանութիւն՝ որոց յերկիրս դուք էք միայն ըստ ամենայնի վիճակեալքդ յիշխանութիւն և երկիւղիւ և հանդարտութեամբ ամբողջ պահեալ զորս ընդ իշխանութեամբդ ձերով. և ոչ զպայծառ ինչ և զխաղաղ ջերմութիւն սփռել յամենեսեան որ ’ի ներքոյ երկնից. Այսուիկ և ես դիմեցի հարկաւորապէս վայելուչ աղերսաբանութեամբս զուարճացուցանել զորըստ

Յետ Ժողովոյն.

մեալ ձեր բարեպաշտութիւնդ. *Որպէս էր ինձ զայս գործել կամէին պիտանի և կարևոր, բայց զայն արարից՝ և ոչ ’ի կամաց վասն հնազանդութեան ձերոյդ իշխանութեան. որ է պարտ յամենեցունց. քանզի ասելն թէ ոչ էղէ այսպէս յանդուգն. կամ դժկամակ. կամ որ ինչ յոյժ վայելուչ էր. անփոյթ արարեալ ’ի մեղանչել ինչ. *Եւ ոչ այս է ’ի ձեզ անվնաս երբեք. քան զի երկեայ և յոյժ վայելչաբար ընդդիմանալ առ ’ի ձէնջդ խռովութեան. զի մի՛ կրեցից այսպիսի ինչ. զոր և ասի կրել ինէ. *Քանզի ոչ ամենևին մի էր երբեք վճարել ’ի մեղանչելոյ. զի բազում ինչ յանցանեմք ամենեքեան, և ախտանայ ըղձիւրագորն գոլ մարդկայինս բնութի. *Որպէս զատոյդ օրինապահ կարծէր ուրեմ և ո՛չ ըստ իրիք եղանակի գայթագղել յա̄ծ. այլ լսեր զասելն նորա՛ ահա՛ ես դատեցից ընդ քեզ յասելդ քո թէ ո՛չ մեղայ։ *Նուագոյն ուրեմն է և ՚իմաստուն որոց իշխանութ̄ին է հաւատացեալ, ներել. և յորոց վ̄ր տրտմեալ են՝ թողութ̄ի խնդրել. քանզի է ո̄ղ ասացի առ ա̄ծ նմանութ̄ն և ձերոյդ իշխանութ̄ն անյիշաչարութ̄ի. *Արդ՝ գրեցի առ ձեր բարեպաշտութ̄իդ. այլ և առ փառաւորեալ թագուհիդ. գործել զայս և յոյժ ուղղակի. ո՛չ զի ամբոխումն կամ երկպառակութիւն ՚ի սրբազանդ ձեր գաւիթս արկից. քանզի ո՛չ եմ այսքան արտաքոյ բարւոք իմացուածոց և վայելուչ խորհրդոց։

*Այլ զմտաւածեալ յաւէտ զի արթուն գոլ պարտէ որոց ՚ի քահանայագործելն են դասեալ սրբոյն ա̄յ. *Նա՛ ըզգուշութեամբ գործել զայս. երկնչիլ ՚ի պատժէն որ պատրաստեալ է նոցա՛. եթէ ըստ իրիք բնաւին անկանիցին ՚ի հեղգութիւն. *Քանզի պարտ է մեզ հաստատունս գործել ՚ի հաւատս որ ՚ի Տ̄ր մեր Յ̄ս Ք̄ս. զորս իւրով արեամբն ըստացաւ և մահիւն եցոյց երկրպագուս. և կոչեաց ցեղ ընտիր. Թագաւորութիւն. Քահանայութիւն. ազգ սուրբ. և ժողովուրդ սեպհական. զի զքաջութիւն պատմեսցեն զամենեսեան կոչողին ՚ի սքանչելին իւր լոյս։ *Որ ՚ի վ̄ր զքահանայականն վիճակեցելոցն օրինադրելով. առ երանելի Մարգարէն Եզեկիէլ այսպէս ասէ։

*Որդի մարդոյ. խօսեա՛ առ որդիս ժողովրդեան քոյ. և ասասցես ցնոսա, երկիր՝ յորոյ վերա՛յ ածիցեմ ես սուր. և առցեն ժողովուրդք երկրին այր մի յինքեանս. և կացուսցեն զնա՛ ՚ի մ̅ջ իւրեանց դէտ. և տեսցէ զսուրն եկեալ յերկիրն. և փող հարցէ և ազդ արասցէ ժողովրդեանն, և եղիցի որ լուիցէ զձայն փողոյն, և ո՛չ զգուշասցի. և եկեսցէ սուրն և հասցէ նմա՛. արիւն ն̅ր ՚ի գլուխ նորին եղիցի. զի լուաւ զձայն փողոյն, և ո՛չ ըզգուշացաւ, և նա՛ զի ըզգուշացոյց՝ զանձն իւր ապրեցոյց. *Իսկ դէտն թէ տեսանիցէ եկեալ զսուրն, և ո՛չ առնիցէ ազդ փողովն. և ժողովուրդն ոչ զգուշասցի. և եկեալ սուրն ըմբռնեսցէ անձն մի. նա վ̅ն անօրէնութ̅ե իւրոյ ըմբռնեցաւ. և զարիւն ն̅ր ՚ի ձեռաց դիտին խնդրեցից. *Պարտ դող վարկանիմ զասացելոցս զօրութ̅ի ո՛չ առանց խուզման Թողուլ. քանզի օգտեցուցանէ՝ և ևս մեծագոյնս ՚ի մ̅ջ այսօրիկ տեսութ̅ես քննութ̅ի ՚ի յայտնումն. *Ո՛չ ապաքէն յարձակման բարբարոսականի ակնկալութ̅ե եղելոյ ՚ի վերա՛յ քաղաքի. նորայք հոգաբարձուք և վերակացուք դէտս կացուցեալ ՚ի վերայ աշտարակաց բարձրաւանդակաց զօմանս. մինչ զակն ՚ի սահմանս երկրին կառուցեալ. ա՛յր և անդր շրջահայեց լինելով արթնաբար տեսութ̅բ. զի մի՛ գուցէ ՚ի պ̅տերզմողացն հասցէ ոք. և յառաջագոյն ազդ արարեալ քաղաքին զյարձկումն թըշնամւոյն՝ ո՛չ փոքու պատուոյ արժանաւորին.

*Իսկ եթէ ննջեսցեն և ո՛չ եղիցին արթունք առ այսպիսի եղե̅լ ըմբռնե լոյ և կրելոյ ինչ, նոքա յիւրեանց գլուխս ընկալեալ զյետինսն կրեսցեն պատիժս։ * Ըստ այսմիկ հաւասար օրինակի և ՚ի քահանայիցն իւրաքանչիւր ոք. վս՟ զի կացեալ է դէտ՝ առ ՚ի յայ՟. զի պատմեսցէ որոց ընդ ձեռամբ նորա ժողովրդոցն զընաւորեալն փասել. առիթ պակի իւր ա՟րացէ զիրն։ * Իսկ անկցի դարձել յա՟ծ այնոյն բարկութ՟է եկեալ չարիս ոչ փոքու ինչ վնասեալ լռութ՟էն որ առ ՚ի նմանէ ձայնիւն յուղղութ՟ կարդեալ. * Արդ պատերազմ է՝ ոչ ՚ի վր՟ միոյ ուրուք ըստ մեզ հաւասարակաց մարդոյ, այլ ՚ի վր՟ նորին ամենեց՟ունց փրկչին մերոյ Յ՟Ի՟. քանզի գրեալ է, թէ ոչ ոք ասէ նզովեալ զՅս՟, եթէ ոչ բէեղզեբուղաւ, այսինքն ոչ ոք ուրանայ զՔս՟, եթէ ոչ ունի առայս յորդորէ զսատանայ. և ճշմարիտ է. զի յասացելոց ոչ ոք երկբայեսցի Ապա ուրեմն զվիշապն ապըստամբ. այսինքն զսատանայ. առն քահանայի ոչ զգուշացելոյ. այլ յաւէտ զի մոլորեալ զխորհուրդն ապստամբին գտեալ։ և լեզու պատրաստագոյն զճշմարտութեանն թշնամանել հաւատ. և զփրկչին մերոյ նուաստացուցանել ըզփառս. ք՟ զի յանդուգն էր և աներասան յարձակմամբ. ա՟մ որ ինչ և իցէ ՚ի վատթարիցն մըտեալ ջերմեռանդն. ա՟մ խռովութ՟ ընոյր զեկեղեցի. և այս պատերազմի է ընդ ուղիղ հաւատոյս։ երկպառակութիք ամենայն ուրեք և բազումք բանք հայհոյականք առ ա՟ծ և առ ՚ի նոցունց իսկ հաւատացելոց էին. մի գուցէ մոորեալք իցեմք՝ ա՟ծ գո

է՟ ՃՁՓ՟ ըստ

ըստ ճշմարտութեան կարծելով ըղձ.քո։ *Աւ՜ զի՞նչ յայսմանէ։ *Ո՞չ ախտ ինչ կեղոյ, զոր 'ի ներքոյ երկնից ճրակէր․ արմատ ունելով տուէ եւ հայր՝ զսատանայ․ Իսկ վ՟ս զի կացեալ եմք դէ՛մ առ 'ի յոյս, եւ ժողովրդեան հոգաբարձուք, զիարդ ոչ էր պարտ եւ յոյժ յօժարամտաբար զսրբազանն եւ զեկեղեցականն առնուլ փող. բարեպաշտել կամելոցն զանսարկու՟ին որոց զի վ՟ր յարձակումն ազդ առնել, զի պատրաստեց լուեցելոցն պատիժս ա՟ծ. զարիւն նորա ա.է 'ի ձեռաց քոց խնդրեցից. *Ո՞չ էր ո՛վ ք՟ս ասէր Թագաւոր՝ հաստատուն եւ անշարժ քո սիրոյդ, այժ՛ ես խոստովանիմ յաւէտ. զի եւ այն նոյն աղաղակէ իրն. եւ առայս վ՟ը կայեսցէ երկայն ժամանակն. յորժամ առաքի

նի եղեալ 'ի բարեպաշտութ՟ի նախահարցն նըմանեալ հաւատոց եւ փառաց. *Աւ՜ վ՟ս զի ն՟ց փառաւորութ՟ին՝ քան զձեր հեզութ՟իդ խոնարհագոյն վայելչաբար ոք ասիցէ ոչ ինչ երկուցել. զի զլաւ եւ զվեհագոյնն պսակեցայք գաւառութ՟ի. գիտեմ զներգոյիդ 'ի ձեզ հաւատոյ անշարժութ՟ի. զառ 'ի ք՟ս սիրոյն հաստատութիւն. *Գրէի ըստ արժանն գոլոյ, զի եւ այլոց յաւէտ. զի եւ ա՟մ եկեղեցեաց ամբոխեցելոց խնամակալու լիցիս. զի ապրեցուցանելն է առողջութ՟ի ձեր 'ի բարբ՟րոսականացն յարձակմանց՝ ազդեցուցիչ փողով. զուժեղն եւ զքաջամարտիկն յորդորէ արւութիւն, որ նմայն է՝ վայելուչ. Իսկ զոր ոչ է ուժերագ՝ կմ փորձ պատերազմի՝ զգուշացուցանէ զի մի՛ գուցէ 'ի պատերազ մողացն հոգւոյ յանկարծօրէն ըմբռնեցեալ՝ նմայոցն համակերպութեանց լիցի որս։ *Արդ իմ բանս յաղագս քո՝ զձեռոյ բարեպաշտութեան խայթոցս շարժէ՝ ընդդէմ բանսարկուին որոգայթի. և զգուշացուցանէ՝ ՝ի հաւատս, զորս թեթևս և դիւրաւ ըմբռնելիս ունիցին միտս։ *Ոչ բաղմացէ և դիւր ըմբռնելի քո խորհուրդն։ այլ յոյժ խոր է բանն նր․ որ և մանաւանդ խոհեմագունից, և ածայնոց գրոց ստուգաբար գիտողաց՝ հազիւ, և ոչ օրինակաւ և հայելեաւ ծանօթ։ Եւ ոչ ասէ սրբազանն պօղոս առաքեալն զբարս քաղցունս՝ բանք չարք։ *Այլ և ըստ սողոմոնի բանին․ կաթիլ յաճախեալ՝ զվէմս թաւալեցուցանէ․ քանզի յաճախաբար ՝ի միտս մարդկայինս ըստ կաթլոյ օրինակի՝ զվնասելն բնաւորեալ կաթեցուցանելն բանս ոչ չափաւորս․ այլ յաւէտս՝ զի ամենևին վնաս գործէ։ *Կարևոր և օգտակար ուրեմն է զև առ յինէն յիշեցուցանել առնս զինքն․ որ պահպանեալ յամ յուսոյ՝ ընդ քո պատերազմէր․ և առ այս՝ որք զխորհրդոյն զօրութիւն ոչ յոյժ ստուգեալ՝ մոլորեցուցչին բանիւք՝ ոչ փոքունս ինչ ծփէին․ և զի գրէի կարևորապէս՝ նոյնինքն իրացն զօրութիւն հաւատարմացուցէ։ *Բանզի անդստին իսկ յանցելոցն ժամանակաց մեկուսեալ էր մարդկութիւն յայ․ և մոլորեալ ամ երկիր․ և ոչ ասէ երանելին դաւիթ․ ամենքն խոտորեցան ՝ի միասին և անպիտանացան․ ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն և ոչ ոք է մինչև ՝ի մի․ *Այլ այժ արար մեզ արեգակն 'ի բարձանց · երևեցաւ մեզ միածինն ա͞յ բանն · և շրջեցաւ ը͞ որոց յերկրի ըստ մեզ եղեալ · Ծայրով բնութե͞ ա͞ծ · նմա՛ զմեզ հպեցոյց ինքե͞մբ առ ա͞ծ և հայր · * Քակեալ զմիջնորմն, եան յիշաչարապէս 'ի մ͞ջ վճարեալ յանջատողէն զմեզ'այսինքն մեղաց · և արդարացուցեալ հաւատով · քանզի է ինքն մեր խաղաղութի͞ ըստ գրոց · * Հանդերձեալ էր և այժմ առ ա͞ծ խաղաղութեա մերոյ շաղկապ խորտակել 'ի քակտել հաւատոյս · * Հանդերձեալէր և արդարութեան ճանապարհ՝ ծածկել 'ի մերոյս խորհրդոց · զի մի՛ ասցէց ծանրագոյնս ինչ * Քանզի արդարանիմք 'ի ձեռն սրբոյ մկրտութեն զմահն ք͞ի պատմելով խոստովանեալ և զյարութի͞ նր͞ · * Սակայն՝ ո՛չ հասարակաց մարդոյ պատմեմք ըզ մահ՝ ո͞վ ը͞ն ասէր Թագաւոր · այլ մարդացելոյ ա͞յ և չարչարեցելոյ վ͞ս մեր մարմնով · ըստ որում և գըրեալ է · իսկ կենդանւոյ ո͞չ ա͞յ և իւրով բնութե͞ն Ծացելոյ անչարչարելի · * Արդ՝ վտանգել քրիստոնէից յուսոյն 'ի մոլորեցուցիչ բանս նորա · և զանարուեստ ե՛ւ զանդուռնլեզուն նրկեց͞ուցանել ն͞ր և ո՛ր էր և անհրժրելի ո՛վ Թ͞գւոր · զինակի՛ց ունելով մեզ զճշմարտութի͞ն · զուղիղն ունողաց զհաւատ որ մանաւանդ որէ՛ր զմեզ գալ առայս · * Քանզի երանելիքն մեր հարք քաջողերեալք առ 'ի յա͞յ քահանայու͞թ ընդդիմացեալ չարափառութե͞ քահանայից, որք ընդ ժամանակսն ը͞ այնոսիկ · մանաւանդ պըղծոցն արիանոսաց · որք և յայնմ ժամանակի որք զմարդկայնոցս իրաց ու նէին զիշխանութ՟ն. ոչ գիտէին զճշմարտութ՟ն. և յաւէտ զնոցայն խորհէին. և զատամունս կըրճտէին ՚ի վ՟ր վարդապետութե՟ եկեղեցւոյ. Այլ էին ն՟ք ՚ի վեր ք՟ զա՟մերկիւղ. զուղիղն և զանվընասն քարոզելոյ հաւատոյս բան. ք՟զի գիտէին զասելն տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի. մի՛ երկնչիք յայնցանէ՝ որք՝ սպանանեն զմարմին՝ և զոգին ոչ կարեն սպանանել. այլ երկերո՛ւք յայնմանէ՝ որ կարօղն է զոգի և զմարմին կորուսանել ՚ի գեհենի.

Արդ նոքա՛ որք զամենեցունց իշխեցօղն յայնմ ժամանակի պ՟տերազմիչս ունէին, ոչ լռեցին ՚ի հաւատն ՚ի զրկել ամենեցունց փրկչին մերոյ ք՟ի. զի՞արդ ոչ է հարկաւոր մեզ երթալ ը՟ շաւիղս նոցայն առաքինութե՟ց, և ՚ի քս՟ մտերմութե՟ն. զի՞արդ ոչ էր պարտ հայհոյչին ձայնից ընդդէմ բարբառիլ զճշմարտութ՟ին. *Գտէ՛ի ո՞ք ասացի՝ զբարեպաշտութե՟դ ձերոյ սերտութ՟ի. հըմուտ էի ստուգապէս՝ զի ոչ նա էր հաճոյ, այլ ես. *Ո՞ ինչ էր որ հաւանեցուցանէր զիս լըռել. փոքր միւս՝ և մեկուսեալ էր զիս յորմ՟է վայելուչն էր հեղգութե՟. և առ ա՟ծ ընդ հարկանիլ պատրաստեալ. *Այլ ասացի ես յանձն իմ, ոչ ինչ ունիս պատճառս դնել ո՛վ այդպիսիդ. ընդ լռութե՟դ չարաչա՛ր են ՚ի վ՟ր քո պարտաւորութ՟իք առ ՚ի յա՟յ և իմարդկանէ. *Բարեպաշտ և ք՟սասէ՛ր է թագաւորականօք փառօք պսակեալն առ ՚ի յա՟յ. այլ և նոյն փ՟առաւորացն թագուհե՟ց երկեակ հաւասար պարծանօք վայելչացեալ համակամութ՟ե. և նոյն պարկեշտ և արժա նի սքանչացման կուսութե շառաւիղք· որք կայսունին զաւրընթերն գոլ· և պատուոյն գերազանցութե պայծառացեալք· և ուղիղ և անխոտոր հաւատով վայելչացեալք. * Տրտմեալ են և նոքա ը̄ փրկչին փառացն արհամարհանս. * Այլ ապա զիա՞րդ ոչ է յոյժ արութե զայ̄ կամին լինել· և կամ ո՞չ է վատթարութե նաւ՝ յորժամ յետուստ կուսէ հեղեալ զնովաւ հողմ լցեալ զառագաստն՝ հրաժարեսցէ զնաւելն * Ո՞չ է տկար և պատերազմատեաց, յորժամ կարգեալ որ 'ի զինուորութի՝ յաղթելն յաջողիցի նմա արիագունից ձեռաց օգնական եղեալ նմա, և նա զէնընկեց լինիցի և լքեալ. * Այսպիսեօքս յանձն իմ և 'ի ձերդ բարեպաշտութի վստահացեալ անդանդաղաբար եկի յոր արժան էր.

քանզի ձեօք հանդերձ ասեմ ես 'ի վերայ բերել՝ որոց ասացիս և զայս ինչ.

Ընտրեցաւ Նեստոր ոպ̄ յառաքելականաց և աւետարանականաց քարոզութեանց հմուտ. ոպ̄ արուեստաւոր 'ի բարեպաշտութի. ոպ̄ ուղիղ ունելով հաւատ և անբիծ ամենևին. և այսպիսի գոլով զմարդն. և բարեպաշտ ձեր իշխանութիւնդ ցանկայր. և ամենեքեան որք սրբոց եկեղեցեաց են վերակացուք. և ես իսկ ինքն. Որ և յորժամ յաղագս ձեռնադրութե նր̄ 'ի յայս կոչողացն զնա բարեպաշտից եպիսկոպոսաց առ̄քեցն առ իս թուղթք և պատասխանիս գրել վաղվաղակի խնդութե. գովելով և աղօթս առնելով ոպ̄ եղբօր պաշտօնակցի. ամենայն առաւելագունից բարութեանց լինել

Է̄ Ձ̄ ձր̄ իմե

'ի վերուստ հրամանէն. *Այլ ո՛չ է մերոյս ընկերասիրութեան՝ յետ այսորիկ բամբասանս, այլ նորա՛ մոլորութեն. *Քանզի ընտրեցաւ որպէս ոչխար, և գտաւ գա՛յլ. *Եւ որպէս հաւատարիմ և մտերիմ ծառայ, այլ գտաւ սիրել զհակառակն. *Որպէս գեղեցկողկոյզ որթ, այլ ծնաւ փուշ՝ ըստ գրեցելումն. *Որպէս երկրագործ գեղեցկարւեստ. այլ դաւաճանեց անդաստանին. *Որպէս հովիւ բարի. այլ քան զգազանս վայրենիս եղև խստագոյն. և ապա՛ ախտացեալ ո՛չ գիտեմ թէ զիա՞րդ ըղձարափառութիւնն. *Խրատեցաւ ողոքանօք յոլովակի. և զայս առ 'ի բազմաց. *Մի թէ օգտեցա՞ւ ինչ 'ի բազում ողոքանաց միոջ նորա՛. յանդիմանեալ դարձա՞ւ 'ի խորհրդոյն. վեհագոյն ինչ խորհեցա՞ւ 'ի բարոյն. արդեօք ատեա՞ց ըզ ստութիւն, կամ սիրեա՞ց զճշմարտութիւն. հրաժարեցա՞ւ յուսումնութեն խաւարէ, և խնդրեա՞ց լոյս. դադարեցա՞ւ ընդդէմ Քի 'ի զրախօսութենէն. երկեա՞ւ 'ի բազմութէ, խընայեա՞ց՝ զ յոլովս և անթիւս տեսանելով դայթագղեալս. տրտմեցա՞յց զնա՛ տեսանելն զամբոխումն հաւատարմաց եկեղեցւոյ. *Եւ ո՛չ բընաւ. որպէս նոյն իսկ վախճան իրա՛ցն աղաղակէ՛.

Քանզի 'ի սուրբ ժողովն ըստ հրամանի ձերոյդ իշխանութեան եկեալք 'ի միասին ամենայն ուստեք յեփեսացւոց մայրաքաղաքին. Պա՛յր ևնա՛ յայնժամ որև պարտէր 'ի վր յանցելոցն լալ և ողբալ նմա. որ ոչ ինչ իրիք ցասման եղեւ բնաւին, յորոց վերայ յանդգնեցաւ ասել՝ մինչ դեռ տաճարին էր յայնմ մեծանուն քաղաքի. յաւելոյր զվատթարագոյնսն. և խօսէր զանդէպսն. և յանդգնէր ՚ի վերայ փրկչին մեր փառաց. փոքու ինչ ամենեւին արժանաւորեալ բանի. յաւէտ՝ զի և ո՛չ միոյ բնաւին ՚ի նա՛ հայհոյութեան պարտաւորութիւն: * Քանզի զոր ինչ յանդգնեցաւն ասել՝ լուեալ է լաւագոյն. * Նա զայս խօսեալ եպիսկոպոսացն սրբոց. և վայելուչ ունողաց ամենեւին զառաքինութիւն և զհաւատ. * Էին և աստուածայնոց գրոց փորձք և հմուտք. * Որ և բազում յոյժ ՚ի վերայ Քրիստոսի հայհոյութեան խօթացեալք. և զանկապն և զանդուռն նորա լեզուն առեալք, լուացեալ զձեռս իրեանց առաջի նորա:

* Զայսոսիկ սրբոյ ժողովոյն արտասուօք պատմէին. ոչ դաղտնի և զանխլաբար, այլ համարձակութեամբ ասել վասն նորին. և երդմամբ չափ. և պատրաստք առ ՚ի յանդիմանել զնա. * Որ և ո՛չ է պարտ ածել զմտաւ զասացեալսն զքէ. և արարեալ զայս՝ երկուցեալք յատենէն Քրիստոսի. քանզի ոչ էին անդթասէրք ոմանք. այլ աստուածասէրք յաւէտ. և Քրիստոսի սիրոյն մեծարիմ պահապանք. * Քանզի ոչ որք ընդ դաւաղանաւդ են ձերոյ բարեպաշտիկ թագաւորութեանդ՝ կամ քաջ զօրավարք, և կամ այլք ոմանք պատուոյ գերադանցութեամբ պայծառացեալս սիրօղս՝ ձեզ ցուցանէ իրաւամբք ցասնուլ. եթէ ցեն ուրեք ոմանք զեղխք կամ վավաշոտք, և ՚ի վերայ ձերոյդ իշխանութեան

շարժեսցեն լեզու. կամ թէ առնել ինչ կամեսցին յորոց արտաքոյ է՟նի եւ օրինաց. * Այսպէս եւ յա՟ծայինսն զքահանայագործօղս ա՟մ գովութ՟ե արժանի առնէ առ՚ի յա՟յ եւ՚ի հրեշտակաց՝ ո՛չ ներելն ումեք ՚ի վե՟ր ա՟ծայնոյն փառաց խօսողին ինչ անիրաւս. այլ մանաւանդ ո՟չ զթշնամի համ՟րել զնմա. զոր եւ եր՟նելին դաւիթ պ՚րծնս պայծռս ինքեան եղեւ զայս գոչէր. * Ո՞չ զատելիս քո տ՟ր ատեցի՝ եւ՚ի վե՟ր թշնամեաց քոց մաշեցայ. կատարեալ ատելութ՟բ ատեցի զն՟ս. եւ եղեն ինձ թշնամիք. * Արդ՝ թէ սիրեն զք՟ս որք հայհոյեն զք՟ս յիրաւի մեղանչեն. որք ո՛չ պատերազմին ը՟ նոսա. իսկ եթէ ատե՛ն յայտնապէս, որ եւ իւր իսկ եւ ո՛չ միով եղանակաւ է երկբայելի. զի՞արդ ոչ են արժանի պքանչանա

լոյ եւ ա՟ծասէրք. նոցա՛ որոշողութ՟ն զբարւոքն ա՟ծասէր սուսեր հանել ընդդէմ բան, է եւ այլ ազգ պիտանի եւ կարեւոր ձերոյ իշխանութեանդ՝ յա՟ծայնոյ սեղանոյն ՚ի բաց վարել զորս պղծեն զնա. եւ զինչ օրինակաւ՝ ասացից զորս յա՟ծաշունչ գրոց յառաջ բերեալ ՚ի հաւանութիւն. * ՚Նրւազեալք երբեմն յամէնի մաստին Մովսիսի օրինադրութ՟եցն որք յի՟էլէն, եւ ՚ի տրւեցելոյն նոցա՛ պատւիրանէն անքանաց՟ելք՝ լինէին ապստամբք յ՟այ. եւ երկիրպագին կըռոց եւ զօրութ՟եց երկնից. ո՟պ եւ գրեալէ. եւ եկին յայս ամպարշտութ՟ի թըշւառականքն. ո՟պ զի եւ զնոյն զա՟ծային տաճարն պղծել * Բարկանա՛յր նց՟ ա՟ծ առայս. եւ մատնեաց զն՟ս ա՟ծ ՚ի ձեռս թշնամեաց. իսկ վ՟ս զի թագաւորեաց եզեկիա՝ այր կա

բ՟ձղ՟ա տա

Եթէ յերկուց բնութեանց ասէ ժողովեցեալ Էմմանուէլ, և յետ միաւորութեան մի բնութիւն երևի բանին մարմնացելոյ, հետևի ամ̄ իրօք պարտ գոլ ասել ըզնա չարչարելի յիւր բնութիւնն.

Երանելի հարքն որք զպատուականն և ուղիղ հաւատոյ սահմանեցին մեզ նշանակ, զնոյն ինքն ասացին որ յա̄յ հօրէ բանն զոր յէութէ նորա զմիածինն՝ զոր որով ամ̄՝ մարմնանալ և մարդանալ. և ոչ ուրեք ասեմք անգիտանալ զսէն զայնոսիկ. Եթէ միաւորեալ ընդ նմա բանին մարմին անձնաւոր էր հոգւով իմանալեաւ. ուստի զի թէ ոք մարմնանալ ասէ զբանն՝ ոչ առանց հոգւոյ իմանալւոյ խոստովանի զմար

ք̄ճժե մինն

մինն զմիաւորեալն ընդ նմա. *Քանզի այսպէս որպէս վարկանիմ յաւէտ. զի որպէս է իսկ համարձակապէս ասել. և ամենիմաստն յովհաննէս աւետարանիչն զբանն ասաց լինիլ մարմին. և ոչ առանց հոգւոյ ընդ մարմին միաւորեալ՝ մի՛ լիցի. *Եւ այլ. և ոչ փոփոխումն կամ այլայլումն կրեալ. քանզի մնաց որ ինչ էրն. այսինքն բնութբ̃ ա̃ծ. առեալ և զգոյն մարդ. այսինքն լինիլ ըստ մեզ 'ի կնոջէ ըստ մարմնոյ. *Ինքն դարձեալ եկաց մնաց մի որդի. սակայն ոչ առանց մարմնոյ որպէս և յառաջագոյնն. այսինքն նախ քան զմարդանալոյն ժամանակս. և որպէս զարդարեալ և ըղմեր բնութիս. *Եւ այլ. Թէ և ոչ է համագոյ յա̃յ հօրէ ծնիցելոյն բանի միաւորելն ընդ նմա մարմին, և հոգւոյ ներդոյի ինմա իմանալոյ. Թէ և միտք տեսանեն զայլաբնութի միաւորեցելոյն, սակայն մի՛ խոստովանիմք որդի և քս̃ և տր̃՝ որպէս մարմին եղելոյ բանին. *Իսկ մարմին յորժամ ասեմք՝ մ̃րդ ասեմք. արդ՝ զի՞նչ հարկ որ նմա չարչարիլ յիւր բնութիս. Թէ և ասի յետ միաւորութեն մի բնութի բանին մարմնացելոյ. քանզի թէ ոչ էր 'ի բանս տնօրէնութե բնաւորեալն կրել զչարչարանսն, ուղղակի՝ արդեօք ասէին. զի ոչ գոլով բնաւորեալն չարչարիլ, հարկ էր ա̃մին բանին բնութե պատահիլ չարչարանաց. *Իսկ եթէ մարմնանալն ասել՝ հանդերձ ա̃մին մարմնով տնօրէնութե 'ի ներքս բերի բանք զի մարմնացու ոչ այլ ինչ՝ այլ զզաւակէն աբրահամու բուռն հարեալ. և նմանեալ ը̃ղ ա̃մի եղբարց. և ընկեր դ̃ձ̃ժ̃ղ̃

ծա

պարանս ծառայի առնել 'ի զուր դանդաղեցին որք առնեն հետեւիլ ըզպարուն գոլ ա̄մ իւրաքանչիւր բնութիւն չարչարելի են թակայեցելոյ մարմնոյ. յոր էրն վայելչաբար ի մնալ զպատահիլն չարչարել. անչարչարելի գոլով բանին. * Այլ ոչ դնեմք արտաքոյ վ̄ա այսորիկ զնա յասելոյն չարչարել. քանզի ապ Նր̄ իւր եղեւ մարմինն, այսպէս և ա̄մ ինչ մարմնոյքն Նր̄ ասին՝ բաց միայն 'ի մե̆ղաց, ըստ իւրութե̄ տնօրինականի.

Այլ ասեն հակառակորդքն. Եթէ մի բնութի̄ է բանին մարմնացելոյ, հարկէ ա̄մւ առել շփոթումն ունիլ և խառնակումն ա̄պ ծախեցելոյ 'ի ներքս գողացելոյ մ̄րդկայնոյն բնութեանց 'ի նմա. * Եւ անգիտացան դարձեալ որք զուղիղն թիւրեն եթէ ը̄ ճշմար

տուեալ է մի բնութի̄ բանին մարմնացելոյն. * Քանզի թէ մի որդի է բնութե̄ ճշմարտապէս յա̄յ հօր է բանն անճառապէս ծնեալ. և ապա ըստ առման մարմնոյ ոչ առանց հոգւոյ. այլ հոգւով իմանալեաւ յառաջ եկն մարդ 'ի կնոջէ. * Մէ յերկուս դէմս բաժանեմք և ոչ յերկուս որդիս. այլ մնաց մին, սակայն ոչ առանց մարմնոյ. և ոչ արտաքոյ մարմնոյն. այլ իւր ունելով զնա ըստ միաւորութե̄ անբաժանելոյ. * Եւ որ զայս ասէ. ոչ շփոթումն և ոչ խառնակումն և ոչ այլ ինչ յայսպիսեաց ամենեւին և ա̄մ իրօք յայտնէ. * Այլ և ոչ ա̄պ ի հարկաւոր բանէ՛ հետեւեսցի ուսուք. ք̄դի թէ և մի ասի առ ի մէնջ միածին որդին ա̄յ մարմնացեալ և մարդացեալ ոչ շփոթի վասն այսորիկ ըստ նոցա կարծեացն.

Դիոսքորու Սեւերի.

այլ և ոչ 'ի մարմնոյ բնութի փոխադրեցաւ բանին բնութին . և ոչ մարմնոյն 'ի նորայն . այլ յիւրում բնութե իւրաքանչիւր ուրուք մնացելոյ . ըստ այժմու առ 'ի մէնջ ասացելոց բանից . անճառելի և անապական միաւորութին՝ մի՛ եցոյց մեզ զորդւոյ բնութին ։ սակայն ոպ ասացի՝ մարմնացելոյ . * Քանզի ոչ միայն 'ի վր պարզիցն ըստ բնութե ասի մին ճշմարտապէս , այլ և 'ի վր այնոցիկ՝ որք ը շարադրութեցն են ժողովեալք . որպիսի ինչ իցէ և մարդն 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ . քանզի այլատեսք են այսոքիկ , և միմեանց ոչ համագոյք . սակայն միաւորեալք մի բնութի մարդոյն կատարեցին . թէ և շարադրութեն բանիւք է իներքս զանազանութի ըստ բնութե 'ի միաւորութի

Ըստ Աղեքսանդրու եկեղեցւոյն.

Արդ՝ աւետորդս խօսին որք ասենն . Եթէ մի բնութի բանին մարմնացելոյ՝ ամենևին և ամ իրօք հեռանեսցի շփոթումն լինել ոպ ծախեցելոյ և իներքս գողացելոյ մարդոյս բնութե ։ * Քանզի ոչ ծախի և ոչ ոպ ասենն գողացեալ լինի . քանզի բաւական է առ 'ի կատարեալ յայտնումն որոյ թէ եղև մրդ, ասելն թէ մարմնացաւ ։ քանզի թէ այս լռիւր առ 'ի մէնջ՝ ունէր ինչ արդեօք տեղի նոցայն զօպարտութի ։ իսկ վս զի կարևորապէս 'ի վր բերաք զմարմնացաւն , ո՞ւր է ծախելոյն կամ գողացեալ լինելոյ եղանակ.

Եթէ կատարեալ ած ասի քս և կատարեալ մարդ իմանի , նոյն ինքն և համագոյ է հօր ըստ ածութեն և ըը մարդկութե

դճժը համա

համագոյն մեզ, որ է կատարելութին. եթէ ոչ առանձնաւորեցաւ մարդոյս բնութի, որ է և համագոյութին. եթէ ոչ առանձնաւորեցաւ գոյութին՝ որ է բնութիւնս մեր.

Բաւական է և այսոցիկ ի հաւատութի նախակարգելոցն գլխոց լուծումն և պատասխանի. քանզի թէ մի բնութի ասացեալ բանին լեալ էաք, և ոչ բերեալ ի վե զմարմնացեալն. այլ ոչ արտաքս մղեալ զանօրէնութին. էր ուրեք արդեօք ոչ անհաւանելի բան պատճառեցելոցն. հարցանել թէ՝ որ է կատարելութին ի մարդկութեն. կամ զիարդ առանձնաւորեցաւ ըստ մեզ էութին. իսկ վս զի և ի մարդկութեն կատարելութին և ըստ մեզ էութեն յայտնումն ի ներքս մտանէ՝, ասելովն մարմնացեալ, լուեսցեն որք յեղեգնեայ գաւազանն են զինքեանս հաստատել. քանզի ի բաց հանողի զանօրէնութին, և ուրացողի զմարմնաւորութին, էր մեղադրելի ի բաւամբք մերժել զորդի ի կատարեալ մարդկութենէն.

Իսկ թէ ոչ ասացի ի մարմնացեալն ասելոյն զնա, հաւատալի է և աներկբայելի խոստովանութի, որոց թէ եղև մրդ՝ ոչ ինչ արգելու իմանալ թէ մի գոլով և միայն որդի քս, նոյն ինքն ած և մարդ. *Այլ յածութեն կատարել՝ այսպէս և ի մարդկութեն. ուղիղ և ամենևին հանճարեղաբար քո կատարելութիդ յաղագս փրկական չարչարանացն արտադրեսցէ բան. ոչ զնոյն զմիածինն այ որդին՝ ըստ որում իմանի և է ած՝ չարչարել յիւրն բնութի, զոր որ դձժթ ինչ

ինչ մարմնոյն են հաստատել, այլ չարչարեալ յաւէտ հողեղէն բնութ՟ն· *Քանզի պարտ էր հարկաւորապէս երկաքանչիւրոցն ամբողջ պահիլ 'ի միում ըստ ճշմարտութ՟ն որդւոյն. և ոչ չարչարիլ ա՟ծաբար. և ասել չարչարիլ մարդկօրէն. քանզի իւրն չարչարեցաւ մարմին. *Այլ վարկանին դարձեալ նոքա զկոչեցեալն առ 'ի նոցանէ, ա՟ծաչարչարութ՟ն մեզ 'ի ներքս բերեն. վ՟ն այսորիկ և ոչ ածեն զմտաւ զանօրէնութ՟ն. և չար ճնարիւք փորձին փոխադրել 'ի մարդ առանձնա՟պս զ չարչարանսն բարեպաշտութ՟ն փառակար անհանճարաբ՟ր խորհեալ. զի մի բանն ա՟յ խոստովանեսցի փրկիչ. ա՟պ զիւրն առեալ վ՟ն մեր արիւն. *Այլ զի յաւէտ մարդ առանձնապէս և ըստ ինքեան իմա

ցեալ որդի ասիցի կանգնեալ զայս. և չարժէ 'այսպէս խորհիլն՝ զա՟մ անօրէնութեան բան մարմնով. և զա՟ծայինն խորհուրդս մեր 'ի զօրութ՟ն մարդապաշտուե՟ն կացուցանէ՝ ոչ անյայտնաբար. *Այլ ոչ ածեն զմտաւ եթէ զոր 'ի հրէից ըստ մարմնոյ, այսինքն 'ի զաւակէն յեսսեայ և դաւթի և քա՟ն և ա՟ր փառաց և ա՟ծ օրհնեալ յաւիտեանս. և 'ի վ՟ր ամենեցունց ասէ Պօղոս. իւր ասացեալ զմարմինն բանին. զոր 'ի փայտին բեւեռեալ. և նմա հետևեցուցեալ զխաչն վասն այսորիկ.

Լսեմ առ այսոքիւք և այլում խնդիր. քանզի որ ասէ մարմնով չարչարեալ մերկ զտէր, անե՟ն և ակն՟յ առնէ զ չարչարանսն. իսկ եթէ ոք ասէ հոգւով իմանալեաւ չարչարեալ զնա՝ զի եղիցին դ՟ճի չարչա չարչարանքն կամաւոր, ոչ ինչ արգելու ասել մարդկայնով բնութ՟ չարչարեալ զնա՛. իսկ եթէ այս ճշմարիտ է՝ զիարդ ոչ զերկոսին բնութ՟ին առանձնաւորեալս տացուք յետ միաւորութ՟ն անանջատաբար. *Ո՟պ զի թէ ոք ասիցէ ք՟ս չարչարեալ վ՟ս մեր մարմնով, ոչ ինչ ասէ այլ. բայց միայն ք՟ի չարչարեալ մերով բնութ՟բ.

Մարտնչի դարձեալ ոչ ինչ փոքր առաջարկութ՟իս. ընդ որոց մի բնութ՟ի ասեն գոլ՝ որդւոյ մարմնացելոյ. *Ա՛ ո՟պ վայրապար ցուցանել կամեցեալ զայն՝ հակառակին ա՟մ ուրեք և երկուս բնութ՟իս առանձնաւորեալս ցուցանեն.

Այլ անգիտացան թէ որքան ինչ ըստ միայն տեսութ՟ես իւր է անջատել՝ այս ա՟մ իրք ոչէ այլութ՟ի իմն ը՟ն մասին. բա

ւրովիմք և առանձնա՟պս որոշէ՝ 'ի միմեանց. և եղեցի յարացոյց դարձ՟լ ըստ մեզ մարդ. *Վասն զի երկուս իմանամք բնութ՟իս և'ի վ՟ր ն՟ր. մի հոգւոյն և միւս ևս մարմնոյն: այլ սուղ զմտածութ՟ք բաժանեալ: և ո՟պ նուրբ տեսութ՟բ. այսինքն մտաց հայեցիւք ընկալեալ զտարբերութ՟ին ոչ ըստ մասին դընեմք զբնութ՟իսն. և ոչ բող՟վիմք հատմամբ հետևեցուցանեմք ն՟ց զմտածութ՟իսն՝ այլ միոյ իմանամք. ո՟պ զի զերկուսն ոչ գոլ երկուս, այլ երկո՟քումբքն մի կատարեալ կենդանի. *Ապա՛ ուրեմն թէ և ասի մարդկութ՟ն բնութ՟ի և ա՟ծութեան 'ի վ՟ր էմմանուէլի. Մ՟րդկութ՟ին եղև իւր ը՟նին, և մի որդի իմանի հանդերձ նովաւ. որ և ամենայնից գրոց ասացեալ մարմնով չարչարեալ զնա. լաւագոյն է մեզ այսպէս ասել. զի բնութեամբ մարդկութեան. մանաւանդ թէ և այս ոչ թիւրութիւն ինչ ասիցի առ ՚ի յումանց. ոչ ինչ վընասէ զխորհրդոյն բան. * Բանզի զի՞նչ է այլ մարդոյն բնութիւն, բայց միայն մարմին հոգևոր իմանալի, և չարչարեալ ասեմք մարմնով զորդին. * Որդ՝ չարաճնարութեամբ ասեն մարդկայնովն բնութեամբ չարչարիլ զնա. որպէս ՚ի բաց որոշեալ զմարմինն բանին և օտարոյ եդեալ առանձնապէս. զի երկուք իմասցին, և ոչ մի. մարմնացեալ և մարդացեալ յԱստուծոյ հօրէ բանն. * Իսկ անը

րոշապէս դնելն թըւի առ ՚ի մէնջ ուղիղ հաւատոյ նշանական. բայց նոքա ոչ այսպէս իմանան. քանզի զի անորոշելին առ ՚ի նո նոցանէ, ըստ Նեստորի ունայնաձայնութեանն՝ ըստ այլ եղանակի լինի առեալ. քանզի ասեն թէ հաւասարապատուութեամբ և նոյնախոհութեամբ և իշխանութեամբ անորոշելի է ՚ի բանէն Աստուծոյ՝ յորում բնակեցաւ մարդն. որպէս զի ոչ պարզաբար բերեն յառաջ ըղ բառսն.

այլ նենգութեամբ իմն
և չարաճնարութեամբ.

* Սրբոյն Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի Աղէքսանդրի առ Ակակիոս Մելիտինոյ եպիսկոպոսի. յորժամ գրեաց նմա թէ չիարք գրեայ յուրելեայ.

* Գլուխ · ԽԲ · *

ՍԱՌՕՍԱԹԻ՟Ն եղբարց՝ են բանք քաղցունք և հրաշալիք. և ա՟մ բանի արժանաւորք առ ՚ի ճըշմարտապէս ողջախոհացն պիտոյ գոլ ասեմք հաւաստակցաց և համանձանց անհատաբար ճեպիլ յայս գործ. զի և ոչ մի ինչ խափանեսցէ և ոչ հատցէ զոր յայս չերմ փափագումն և զյօժարու՟թն. * Այլ է երբեք զի արդելու և ոչ ՚ի կամաց զմեզ. ՚ի միջի հեռաւորութե՟ս երկայնութի՟. և գրոյ ՚ի բերողաց պակասութի՟. իսկ ի ժամանակի կարողութե՟ առ ՚ի յասել բերողին՝ դի՛ւահամարիլ պարտէ զիրն. և յայսպիսիս երեքփափագեանս խնդութ՟ յարձակիլ. արդ՝ ուրախ եղէ յոյժ ՚ի վե՟ր առաքելոյս ՚ի քոյոյդ կատարելութէ. և սքանչացեալ ընդ սէրդ՝ արժա՛ն համարեցայ զեկեղեցեաց խաղաղութ՟ն պատճառն զեկուցանել ձեզ. և զիւրաքանչիւր ինչ թէ զիա՛րդ է ասել.

* Բարեպաշտ և ք՟սասէր թա՟գւորս մեր յաղագս սրբոց եկեղեցե՟ց հոգաբարձութի՟ յոլովակի արարեալ՝ ոչ բերելի համարէր զայնոցիկ երկպառակութի՟ս. կոչեաց ըղմ՟բ և զառաքինին և ա՟ծապաշտ եպիսկոպոսն սրբոց եկեղեցեաց կոստանդինու պօլսի՝ զՄաքսիմիանոս. և զայլս բազումս յորոց անդն. խորհիլ թէ զի՛նչ օրինակաւ ՚ի միջոյ բարձցի եկեղե

դ՟ձիդ՟ ցեաց

ցեաց պատառումն. և կոչեսցին 'ի խաղաղութ՟ի սրբոցն խորհրդոց ք՟հանայագործողքն. * Իսկ նոքա ասեն, ո՛չ այլ ազգ եղիցի այս երբէք. և ո՛չ եկեսցեն առ միաձնութ՟ի առ միմեանս որք յաղագս որոց բանսէ, և թէ ո՛չ նախ 'ի ներքս մըտցէ հաւատոյս միաբանութ՟ե շաղկապ. * Իսկ ասէին եթէ անախոք՟ցուց ա՟ծապաշտ եպիսկոպոսին յովհաննու՝ պարտ է նըզովել զնեստորի աղանդն՝ եւ գըրով խոստովանիլ ըզլուծումն նորա յեպիսկոպոսութէն. և որով տրտմեցաւն աղէքսանդրացւոց եպ՟ն՝ մի՛ յիշեսցի վ՟ս սիրոյն ք՟ի. և առ ո՛չ ինչ համարեսցէ զթշնամանսն յեփեսոս. որ և ամենևին չար և դըժընդակէր. * Արդ՝ կամակից եղեալ և զըւարճացեալ յոյժ բարեպաշտ թագաւորն, առաքեաց յուղղութ՟ի այսորիկ զարիստողաւոս տրիբուն և դպիր. * Իսկ վ՟ս զի յարևելեայս զԹ՟դրականացուցանէին հրամանս, և ո՛չ կամակցութ՟ե եղեալ սրբոցն եպ՟սաց որոց 'ի մեծին կոստանդինուպօլիս, ո՛չ գիտեմ թէ զի՞արդ խորհեալ ժողովեցան առ ի՟ք և ա՟ծապաշտ եպիսկոպոսն բերիայւոց Ակակիոս. և գրեցին առ իս եթէ համակամութեն եղանակ՝ այսինքն խաղաղութեն սրբոց եկեղեցեաց ո՛չ է մարթ այլ ազգ լինել. և թէ ո՛չ ո՟պ իւրեանցն թըւեցաւ. * Իսկ էր խընդիրս այս ծանր և դժուարակիր. ք՟զի կամէին խափանել զա՟մ զառ 'ի յինէն գըրեալսն 'ի թուղթսն և 'ի մատեանս և 'ի գիրս. և խոստովանիլ ամենեցունց զոր 'ի Նիկիայն առ 'ի սրբոց հարց մերոց սահմանեցաւ մեզ

դ՟ձիդ՟ հա

հաւատ. * Իսկ ես առ այսոսիկ գրեցի թէ արտագրութեն հաւատոյ սահմանելոյն առ ՚ի մէջ հարցն մերոց ՚ի Նիկիացւոց քաղաքին՝ հետեւիմք ամենեքեան. ոչ ինչէ յամէ որ ի նմայն է՝ արհամարհել առ ի մէնջ. * Յանդգի է ա̄մուղղակի եւ անփկաս եւ առաւել քննութի̄ քան զայն՝ ոչէ զգուշագոյն. բայց զոր ինչ ուղղակի գրեցաք ը̄ դէմ նեստորի հայհոյութեն՝ ոչ միբան հաւանեցուցէ զմեզ ո̄ք ոչ բարուոք եղելոյ ասել ինչ. * Այլ պիտոյէ յաւէտ նոցա ըստ որում եւ թըւեցաւն պրկեշտ եւ քա̄ջ սէր թ̄դրին, եւ նոյն ինքն իսկ սրբոյ ժողովոյն որ յեփեսոս, հռչակելի առնել զմարտուցեալն ը̄ փրկչին մերոյ հաւատոյն. եւ նզովել զպիղծ նո̄ր հայհոյութին. եւ խոստովանիլ զուղղութի̄ նո̄ր յեպսութէն. եւ կամակից լինիլ

ձեռնադրութե ո̄ք եւ ա̄ծապաշտ եպ̄ոսին Մաքսիմիանոսի. * Այսոցիկ գրոյ ողջ̂եցիլս առ եւ̄՝ առաքեցին յաղէքսանդրիա ղաւաքինի եւ զա̄ծապաշտ եպ̄ոսն Պօղոս եմեսացւոց քղ̄քին. առ որ բազում եւ երկայնք եղեն առ մեզ բանք վ̄ս անվայելչաբար առասցելոցն եւ գրելոցն առ իս. Իսկ վ̄ս զի զայսոսիկ ոչ մէչելով՝ կարեւորացն յաւէտ ունիլ պէտս փութացմանց. հարցանէի ցնա թէ ունիցի ինչ արդեօք առ ի ղ̄ր յա̄ծապաշտ եպ̄ոսէն Յով̄հաննիսէ. եւ նո̄ր ողջ̂եալ մեզ զթուղթն յորում ո̄ղ պարտն էր գրել՝ ոչ էր գրեալ. այլ ըստորում ոչն էր արժան. ք̄ զի զկը ծեցուցանելոյ զօրու̄թ ունէր յաւէտ, եւ ոչ աղաչանաց. զոր և ոչ առի յանձն. * Յանդի ո̄րա էր ողոքանօք ցածուցանել զիմ արտմութի.

դ̄ժին զոր

զոր հաստեալ արար ինձ յեփեսացւոց քաղաքին. և բարւոք պատճառաւ ասէին զայրանալ 'ի վ̄ր իմ. վ̄ն նախանձու սրբազանից աւանդութեց. *Ռ.ՃԼ լսէի թէ ոչ նախանձ ա̄ծային շարժեաց զն̄ս, և վ̄ն ճշմարտութ̄են հաւատոյ մարտնչէին ընդ դիս, այլ մ̄րդկան փառաց շանաց հետևեալք են ընդ հզօրագունիցն սէր յինքեանս յափշտակել. *Սակայն ա̄ծապաշտ եպիսկոպոսին Պօղոսի ասացեալ, թէ՝ պատրաստ եմք 'ի նշովել զնեստորի հայհոյութիւն. և խոստովանիլ գրով ընդ լուծումն ն̄ր յեպսուէն, և զայս առնել փոխանակ ամենեցունց դիմաց որոց յարևելս եպիսկոպոսացն. *Պատ̄խան̄ի տուեալ ասէի թէ՝ առ ի քէն միայնոյ խոստ̄ովանութիդ յաղագս այսորիկ ոչէ բաւական հանդի

պիլ հաղորդութ̄են մեզ ամենեցունց. *Ռ.ՃԼ ասէի թէ ամենեքին և ա̄մ իրօք գրով խոստովանութ̄ի պարտէ յաղագս այսորիկ արտադրել. ա̄ծապաշտ եպիսկոպոսին յովհաննու անտիոքացւոց քաղաքին. որ և եղև իսկ. և բարձաւ կրճիմն և հեռանալն 'ի միմեանց եկեղեցեաց. *Ռ.ՃԼ էր ոչ ուստեք երկբայիլ, թէ զնեստորի հայհոյութեցն զինաւորս մաշելոց էր եկեղեցեաց խաղաղութ̄իւն. և ով ինձ թըւի այսպիսի ինչ կրել. *Սա մինչ դէպ եղեալ ոմանց որք լուղիլ ոչ գիտիցեն. և յանկարծակի հասեալ ինաւէ՝ անկանիցին. և վ̄ն զի հեղձանին՝ զոտս և զձեռս այր անդր ընկենլով զինչ և դիպիցի՝ բուռն հարկանեն թըշնաւականքն. *Կամ թէ ոչ իցէ ճշմարտութ̄ե ասել թէ՝ աղմկեալ յոյժ

դ̄ճի̄ղ վերջա

վերջացեալք և միայնացեալք և արտաքսեալք յեկեղեցեաց զորս կարծէին լինիլ առ 'ի յօգնութի ինքեանց. *Նա՛ կամ թէ ոչ վտանգին յայսոսիկ յուշ բերելի՝ 'ի բաց վաղեալ 'ինոցանէ տեսեալ զպատրեալսն, և լրջացեալս 'ի ճշմարտութի 'ինոցա պիղծ ունայնաձայնութէն որպէս արբեալս. *Ո՛ որ և ասելի է առ նս 'ի դէպ ժամանակի՝ զոր 'ի ձեռն մարգարէին ձայնի. ժողովեցարուք և կապեցարուք ազգք անխրատք՝ նախ քան զլինելն ձեր իբրև զծաղիկ անցեալ. *Սս զի էիւկ՝ զի բնաւին եղեն յօտարացն փրխածացն պարարեալք. և ոչ ամաչեցին յայլոցն տիղմ զիրեանցն պղծել սիրտ. *Խուլք լուարուք և կոյրք հայեցարուք տեսանել. խորհեցարուք զոչէ՝ ճշմարտութին և

պարզ սրտիւ խնդրեցէք զնա. *Ո՛ 'ինչ պէտք են ձեզ բազմամանուած գիւտից և բանից խոտորելոց. հի՞մ թշնամանել զուղիղ ճանապրհն՝ թիւրէք զշաւիղս ձեր. հերկեցէք ձեզ հերկս և մի սերմանէք 'ի փուշս. *Քանզի արամեալք ոչ ասացի 'ի վր խաղաղութեն սրբոց եկեղեցեց. և զոր ոչն աւին յանձն զհաւատար նց խորհիլ. չարախօսեն զնոցանէ. և դառնապէս բամբասեն զաղերսեն սրբոց եպիսկոպոսաց որք յարևելս. և քարշեալ զայն առ որ իւրեանցն քաղցր և սիրելի. և ոչ ուղղակի իմացեալ՝ ոչ անհետևօղ եղեալ ասեն [illegible] ունայնաձայնութեցն. *Ընդ նմին պարսաւեն և զմեզ՝ ոչ զի գրեցելոցն առ 'ի մէնջ զհակառակն խորհեալ. լսեմ թէ և զայն ասեն, թէ

դ ճլէ և հա

և հաւատայս արդարութի՟ սինքոյն, այսինքն որ յեկեղեցւոջն ասի՛ առաք յանձն նոր. նա՛ ուրեմն ըզնախնականն զայն և զպատուականն արհամարհեալ հաւատ.

*Նա՛ արդ՝ յիմարն յիմար խօսեսցի, և սիրտ նր՟ զնանրութի՟ խոկասցէ. սակայն զայս ասեմք. ոչ հաւատոյ արդարութի՟ եղև առ 'ի մէնջ, և ոչ զնորաձևութի՟ առ յամանց առաք յանձն.

*Իրաւականէ մեզ ա՟ծաշունչ գիր, և սրբոց հ՟րց դաւանութիւնն. և առ ա՟մ որ ինչ ևիցէ ուղղոյն ձախարակեցելոցն հաւատոյ նշանակ. Իսկ վ՟ս զի էին որք յարեւելք եպ՟ոսունք երկպառակե՟լք առ մեզ յեփեսոս և եղեն ոչ 'ի կարծիս՝ ըմբռնեալ 'ի հաղբս նեստորի հայհոյութեցն, այսուիկ և յոյժ խոհականապէս վըճարեալք

Ի.

զինքեանս յայտնեցին պատճառաց, անքիծ հաւատոյն առ փառաց հաւատարմ՟ցուցանել զինքեանս փութացեալ. եթէ 'ի նորայոցն հայհոյութեցան բաժք եմք. և ետուն խոստովանութի՟. և է իրն հեռի՛ յա՟մ արատոյ և 'ի պարսաւանաց.

Արդեօք թէ և նոյն ինքն նեստ՟րիոս յայնմ ժամանակի յորում ասիւրն առնո՛ 'ի մէնջ ամենեցունց թէ պարտ է քեզ 'ի բաց վճարել 'ի քոցդ իմացուածոց. և բուռն հարկանել զճշմարտութենէն. թէ էր արարեալ գրով խոստովանութի՟. արդեօք ասիցէ՛ ոք զնմանէ թէ հաւատոյ նորաձևութե՟ արար մեզ նշանակ. *Ի՞նչ դէ՞ր այժմ բամբասեն 'ի նանիր. արդարութի՟ հաւատոյ նոր անուանել զհանճարն որ 'ի փիւնիկէ ա՟ծապաշտից եպիսկո

դ՟ ա ի ը՟ պոսաց

պատաց · զոր առաջին ը̄ս պիտոյից և կարևորագ̄ս · աղերսեալ և ուրախ արարեալ զորս կարծէին զնոցանէ եթէ չեստորի ունայնաձայնութեցն են հետևողք · * Քանզի ս̄բ և տիեզերական ժողովն որ յեփեսացւոց քաղաքին ժողովեալ՝ նախախնամեաց կարևորապէս · ոչ գոլ պարտ եկեղեցեաց ա̄յ՝ այլ արտադրութի̄ հաւատոյ մուծանել ՚ի ներքս քան զոր էին · զոր երեքերանեան մեր հարք՝ սրբով հոգւովն ատացեալ սահմանեցին · * Իսկ որք միանգամ ոչ գիտեմ թէ զիա՞րդ երկպառակեցան առ այս եզեալք ՚ի կարծիս · իբր թէ ոչ ուղղակի կամեցան խորհիլ · և ոչ առաքելականաց և աւետարանականացն հետևիլ աւանդութեց · * Մի՛ արդեօք լուեալ ո՞չ ՚ի բաց վճարէին յայսմ չարափառութէ · թէ յաւէտ աղերսեալ և զիւրեանց հաւատոյն զօրութիւն յայտնեալ · * Ո՛ր և գրեաց ա̄ծային աշակերտն · պատրաստ լինիլ միշտ առ ՚ի պատասխանատուութի̄ ամ̄ որ խնդրէ ՚ի ձէնջ բան վ̄ն յուսոյն որ է ՚ի ձեզ · և որ զայս ոք առնէ՝ ոչ նոր ինչ և ոչ հաւատոյ արտադրութի̄ երևի նորաձևեալ · այլ յայտնի կացուցանէ որոց հարցանէին զնա ըղձաւան զոր ունի վ̄ն ք̄ի · * Լսէի առ այսոքիւք եթէ՝ իւրեայ ա̄ծապաշտ ե̄պսացն համաձայնուե ոչ ինչ փոքր տրտմին ճշմարտութեն թշնամիք յա̄մ ուրեք ամբոխեալ զա̄մ, և անդէպ գիւտից իւրեանց միաւորեալ ասէին զառ ՚ի նոցանէ եղելոցն պ̄տա·խանատուութեանց զօրութիւն ,

Դ̄ձի Թ̄ զոր

զոր առնէին ՚ի վերայ ուղիղ հաւատոյն. ոչ ինչ նորաձեւեալ ոք ասացին. ա՟պ վերաբերեալ յառաջագոյն սահմանելոցն ամենեւին և ոչ ինչ. այլ հետեւեալ յանէտ սբ՟ց հարցն ան աղարտելի աւանդութեցն. զի զոր տաբանոն այժմ յանդիմանեսցուք. * Ներանցուսցուք ՚ի մէնջ զՆեստորի զրախօսութիւնսն և ըզնոցայս ձայնս. քանզի այսպէս, և ոչ այլ ազգ ցուցցէ քննութիւն զճշմարտութիւն. * Լուրդ՝ Նեստորիոս ՚ի բաց բառնայ ամենեւին զա՟ծածին որդւոյն ա՟յ զոր ըստ մարմնոյ ծնունդն. քանզի ոչ ասէ զնա ծնեալ ՚ի կնոջէ ըստ գրոց. և ասէ այսպէս.

Օ անցանելն ա՟յ ընդ քո՟ածին կոյսն՝ ուսաք յա՟ծային գրոց. բայց ծնեալ զա՟ծ ՚ի նմանէ ոչ երբեք ուսաք. և դարձեալ ասէ. ոչ ուրեք ա՟ծային գիր՝ ա՟ծ ՚ի քո՟ածին կուսէ ասէ ծնեալ. այլ՝ քո՟ յո՟ որդի տ՟ր.

Եւ զայս ասելով յերկուս որդիս բաժանէ զմինն. և այլ առանձնապէս գոլ ասէ որդի. և քո՟ և տ՟ր զոր յա՟յ ծնեալն բան, և այլ դրոշմ առանձնապէս և ըստ մասին որդի և քո՟ և տ՟ր՝ զոր ՚ի սրբոյ կուսէն. զի մարդ ոք երկբայեսցի և զայս զնոյն հաւատաբար՝ գրեթէ աղաղակեալ նորա. * Իսկ ողքա՛ անուանեն ա՟ծածին զսբ՟ կոյսն. մի ասեն գոլ որդի և քո՟ և տ՟ր կատարեալ ա՟ծութե և մարդկութե զնոյն ինքն. ա՟պ գոլ մարմնոյն նորա հոգւով իմանալեաւ. և զի ոչ ասեն գոլ այլ որդի զոր յա՟յ հօրէ բանն, և այլ դարձեալ զոր ՚ի սրբոյ կուսէն. ա՟պ Նեստորի թըւեցաւ. այլ մի և նոյն. յայտնի է զի է և յոյժ հաւաստեաւ որով.ք զկնի սոցունց· *Բանզի 'ի վերայ բերեն, թէ զի՞նչ նշանակէ կատարեալն ո՟պ ա՟ծ և կատարեալն ո՟պ մարդ· զնախ քան զյաւիտեանս յա՟յ հօրէ ծնեալ ըստ ա՟ծութե՟ն· *Իսկ 'ի յետին ժամանակս վ՟ն մերոյ փրկութե՟ն 'ի Մարիամայ սըրբոյ կուսէ ըստ մարդկութե՟ն· համագոյ հօր ըզնոյն ինքն ըստ ա՟ծութե՟ն· և համագոյ մեզ ը՟ մարդկութե՟ն· *Ապա ուրեմն և ո՛չ բնաւ անջատեն յերկուս զմի որդին և ք՟ս և տ՟ր· զնոյն ինքն գոլ ասեն զնախ.քան ըզյաւիտեանսն· և զոր 'ի յետին ժամանակս· յայտ է թէ զոր յա՟յ հօրէ ո՟պ ա՟ծ, և 'ի կնոջէ ըստ մարմնոյ ո՟պ մարդ· *Բանզի զի՞արդ արդեօք իմացի մեզ համագոյ գոլ ըստ մարդկութե՟ն որ և ծնեալն 'ի հօրէ ը՟ ա՟ծութե՟ն· եթէ ոչ իմացի և ասացի ա՟ծ համանգամայն և մարդ·

*Այլ այսուքիկ ո՛չ այսպէս թուեսին գոլ Նեստորի· այլ յեղեալ դիտումն ն՟ր ը՟ն ա՟մ 'ի հակառակն· *Բանզի ասաց յեկեղեցւոջ պատմելով· Ս՟ այսորիկ և ք՟ս անուանի բանն ա՟ծ· վ՟ն զի ունի զյարակցութիւն որ առ ք՟ս մշտնջենաւոր· և դարձեալ անշփոթ պահեսցուք այժմ ըզգենութե՟ն յարակցութի՟· խոստովանեսցուք զ՟ր իմարդումն ա՟ծ· պ՟շտեսցուք յա՟ծ այնոջն յարակցութե՟ ամենակալին ա՟յ երկրպագակից մարդ·

Արդ՝ տեսանե՞ս թէ որքան ունի հայհոյութի բան ն՟ր և առաւել ամբարշտութե՟ լի· քանզի ք՟ս առանձնա՟պս անուանէ զբանն ա՟յ· և ունիլ զյարակցութի՟ն որ առ ք՟ս մշտնջենաւոր·

*Ո՞չ թէ արդեօք ո՞չ ասիցէ երկուս քնս յայտնապէս, և մարդ ընդ այ երկրպագանիցի. ո՞չ գիտեմ թէ զիա՞րդ խոստովանեաւ. արդ՝ այսոքիկ նորայո՞ցն նման տեսանիցին. ո՞չ ապաքէն հակառակ միաբանից ունիցի ուղմտածութեանցն զօրութ. * Քանզի նա երկուս ասէ յայտնապէս. իսկ մեք մի որդի և քս և ած և տէր խոստովանին երկրպագել. զնոյն ինքն ՚ի հօրէ ըստ ածութեն, և ՚ի սրբոյ կուսէն ըստ մարդկութեն. * Երկուց բնութեց միաւորութի լինել ասեն. սակայն մի որդի և քս և տր խոստովանին յայտնապէս. քանզի եղև բանն մարմին ըստ գրոց. և միաւորութի տնօրինական անճառելի ճշմարտապէս գործեալ. ասեմք աննմանից իրաց ՚ի միաւորութի անանջատելի. քանզի ոչ ըստ ո

մանց յառաջնոց հերձուածողացն՝ յիւրմէն բնութենէ առեալ. այսինքն յածութենէն կազմեալ իւր մարմին, բանին այ ածցուք զմտաւ, այլ հետեւեալ ամ իրօք ածայնոց գրոց. ՚ի սրբոյ կուսէն առեալ զնա հաստատեմք. * Արդ՝ այսուիկ յորոց են մի և միայն որդի և տր յս քս. ոչ մտածութեք ընկալեալ՝ յերկուց բնութեց միաւորեալ ասեմք, իսկ յետ միաւորութեն անդէն ՚ի բաց բարձելոյ ՚ի յերկուս հատմանն, մի գոլ հաւատամք զորդւոյն բնութին ոչ միոյ. սակայն ոչ մարդացելոյ և մարմնացելոյ, իսկ թէ ասիցի մրմնանալ և մրդնալ ած գոլ բանն, ՚ի բաց անկել հեռացի փոփոխմանն կարծիք. քանզի եկաց մնաց որինչ էրն. և խոստովանեսցի առ ՚ի մէնջ անշփոթ առնելին միա նորութին. * Այլ թերևս զայն ասիցեն հակառակորդքն. ահա հաւաստապէս որք ուղիղ հաւատոյ առնեն խոստովանութի. * Երկուս դաւանեն բնութիւնս և բաժանել զա̃ծաբանիցն ձայնսն յարձակին ըստ տարբերութեան նց̃. * Ապա զիա̃րդ ոչ են հակառակ այսոքիկ քոյոցդ. մի թէ ոչ ունի դիմաց երկուց կամ գոյութ̃եց բաժանեալ զձայնսն. * Այլ ո՞վ վեհդ, ասի ցէ ոք արդեօք. գրեցաք ՚ի գլուխսն. եթէ ոք երկուց դիմաց կամ գոյութ̃եց բ̃ժանէ ըզձայնսն. և է ինչ զոր ոպ̃ մարդոյ առանց ա̃յ բանին առանձնապէս հպեցուցանէ. իսկ զա̃ծավայելուչսն՝ միայնոյ յա̃յ հօրէ բանին՝ նմ̃ եղիցի դատա̃պարտեալ. * Քանզի զձայնից զանազանութի և ոչ ըստ միոյ եղանակի բարձաք. թէ և՚ի բաց ընկեցաք զբաժանելն զայնս. ոպ̃ որդւոյ առանձին յա̃յ և՚ի հօրէ բանին. և ոպ̃ մարդոյ դարձեալ առանձնապէս որդւոյ իմացելոյ որ ՚ի կնոջէ. քանզի մի է խոստովանելի զբանին բնութի. և գիտեմք զի մարմնացաւ և մ̃րդացաւ ոպ̃ և յառաջագոյն իսկ ասացաք. Իսկ թէ զի՞նչ օրինակաւ մարմնացաւ և մարդացաւ, եթէ ոք քննեսցէ՝ տեսցէ զաւ ՚ի յա̃յ հօրէ բանն. զծառայի առեալ ըզկերպարանս և՚ի նմանութիւն մարդկան եղեալ որպէս և գրեալ է. * Եւ ըստ այսմ նորին միայն իմասցի բնութեանցն. այս ինքն գոյացութեանցն զանազանութիւնն. քանզի ո՛չ է նոյն որպէս որակութեամբ բնաւորականաւ ա̃ծութիւն և մարդ

դ̃ ձլդ̃ կութ̃ի

կութի. ապա թէ ո՛չ զիա՞րդ ունայնացաւ բանն ա՟ծ գոլով. իջուցեալ զինքն ՚ի փոքրութիւն. այսինքն ՚ի մերս. * Արդ յորժամ մարմնաւորութեն քննի եղանակ՝ երկուս ՚ի միմեանս անձառապէս և անշփոթաբար ժողովեալ ըստ միաւորութե տեսանէ ամենայն իրօք մարդկայինս միտ. սակայն միաւորեալ՝ որոշէ՛ և ո՛չ բնաւ. այլ մի՛ յերկուցն. և ա՟ծ և որդի և ք՟ս և տ՟ր գոլով հաւատայ և ընդունի ստուգապէս.

Այլ է ա՟միւ քան զայս՝ Նեստորի չարափառութիւն. ք՟զի կեղծաւորի խոստովանիլ թէ մարմնացաւ և մարդացաւ ա՟ծ գոլով բանն. բայց ըզ մարմնանալոյն զօրութի ո՛չ գիտելով՝ երկուս անջանէ՛ բնութիս որոշելս ՚ի միմեանց. ա՟ծ առանձին եդեալ. նոյնպէս և

մարդ առանձին յարակցեալ յա՟ծ կալմամբ ըստ հաւ՟արապատուութե՝ կամ իշխանութե. * Քանզի ասաց այսպէս.

Անբաժանելի է յերեւելոյն ա՟ծ. վ՟ս այսորիկ ո՛չ բաժանեմք զպատիւն. բաժանեմք զբնութիւն. այլ միաւորեմք զերկրպագութիւն. * Իսկ որք յանտիոքայ եղբարքն. յորոց իմանի ք՟ս ո՟պ սուղ մտածութեք միայն ընդունին զբնութիւսն. զի ո՛չ էր նոյն ո՟պ ասացի որակութե բնաւորականաւ ա՟ծութի և մարդկութի. սակայն մի որդի և ք՟ս և տ՟ր. և ո՟պ մի գոլով ճշմարտապէս մի գոլ ասեն զդէմսն. բաժանեն և ո՛չ ըստ միոյ եղանակի զմիաւորեալսն. * Այլ և ո՛չ բնաւորական անջատումն ընդունին ըստ որում խորհին թըւեցաւն թշուառութեցն գիւտից ուսուց

դ՟ժլ՟դ չին.

չին. այլ որոշել յայտնակին միայն զձայնսն որ 'ի վ՟ր փրկչին. * Եւ ոչ թէ վայելուչ գոլ ասեն զայնս, է ինչ որ առանձնապէս որդւոյ յ՟այ հօրէ բանին. և է ինչ որ այլ դարձեալ որդւոյ որ 'ի կնոջէն, այլ է ինչ որ ա՟ծութ՟ն ն՟ր. և է ինչ որ մարդկութեան ն՟ր.

* Քանզի ա՟ծ է նոյն ինքն և մարդ գոլ ասեն. և այլ հասարակաց եղանակաւ իմն. և ո՞վ երկոքումբք տեսեալ ա՟ծութ՟ն և մարդկութ՟ն ասեմ. ո՞վ զի՞նչ ասացից. քանզի են ինչ 'ի ձայնիցն որք ա՟ծավայելուչք են. և են ինչ որք զմիջին կարգն ունին. որք ցուցանեն զորդի ա՟ծ գոլ և մարդ համանգամայն և 'ի նմին. * Քանզի յորժամ ասէն ցփիլիպպոս՝ թէ այսքան ժամանակս ընդ ձեզ եմ և ոչ ծանեար զիս փիլիպպէ. ոչ հաւատաս թէ ես 'ի հայր եւ հայր յիս է. Եւ որ ետես զիս՝ ետես զհայր իմ. և ես և հայր իմ մի՛ եմք. ա՟ծավայելուչ գոլ ստուգեմք զձայնսն. * Իսկ յորժամ հրէիցն ժողովրդեանն սաստէր զայս ասելով՝ թէ որդիք աբրահամու էիք՝ ըզգործսն աբրահամու գործէիք. բայց այժմ խնդրէք զիս սպանանել. ըզմարդ՝ որ զճշմարտութիւն խօսեցայ ձեզ. զայդ աբրահամ ոչ արար. մարդավայելչապէս ասել ասեմք զայսպիսիս. * Սակայն միոյ որդւոյ զա՟ծավայելուչսն և զմարդկօրէնսն. քանզի ա՟ծ գոլով եղև մարդ. ոչ ըզգոլն ա՟ծ թողեալ. այլ յառման եղեալ մարմնոյ և արեան. * Իսկ վ՟ն զի մի է ա՟ծ և որդի և ա՟ր, մի դէմ ասեմք գոլ զն՟ր եւ մեք և նոքա. իսկ զմիջակաձայնս զայսո՟կ ասեմք

դ՟ձն զորս

զորս յորժամ երանելին Պօղոս գրէ․ ք՟ս յ՟ս երէկ եւ այսօր նոյն եւ յաւիտեանս․ *Նոյն գրէ․ թէպէտ եւ իցեն աստուածք բ՟մք եւ տեարք բազումք յերկինս եւ յերկրի, այլ մեզ մի՛ է ա՟ծ հայր՝ յորմէ ա՟մ եւ մեք ՚ի նմանէ․ եւ մի տ՟ր յ՟ս ք՟ս որով ա՟մ եւ մեք նովաւ․ *Նոյն գրէ․ աղօթէի ես ասէ իսկ ինքնին նզով լինել ՚ի ք՟է վ՟ս եղբարց իմոց եւ ազգականաց ը՟ն մարմնոյ․ որք են իսրայելացիք․ որոց է որդեգրութին եւ օրինադրութին եւ կտակարանքն եւ փառքն, որոց հարքն, յորոց ք՟ս ըստ մարմնոյ․ որ է ՚ի վ՟ր ամ՟ցունց ա՟ծ օրհնեալ յաւիտեանս ամէն․ *Ահաւասիկ՝ ահա՛ ք՟ս անուանեալ․ երէկ եւ այսօր զնո՛յն գոլ եւ յաւիտեանս․ եւ նովաւ գոլ զա՟մ․ եւ զոր ըստ մարմնոյ ՚ի հրէից, ՚ի վ՟ր ամ՟ցունց անուանէ ա՟ծ․ այլ եւ օրհնեա՛լ գոլ ասէ յաւիտեանս․ այսուհետեւ մի՛ բաժաներ

ըստ այսորիկ զոր ՚ի վ՟ր ա՟ն զձայնսն․ ք՟ զի ունի ՚ի նմին զա՟ծավայելուչսն եւ զմ՟րդկօրէնսն․ այլ պատշաճեա՛ զայսոտ՟ ՚ի վ՟ր միոյ որդւոյ․ ց՟ ա՟յ բանին մարմնացելոյ․ *Ապա ո՛չ է այժմ անջատել զբնութիւնս․ եւ զայս յետ միաւորութեն․ եւ ը՟ն միայն հաւասարապատուութե յարակցեալ ասել մարդ յա՟ծ, եւ ո՛չ է տեսանել ըզձայնիցն զանազանութի․ *Արդ՝ ո՞ր լինիցին ընթացակիցք նոցայքն դեստորի ունայնաձայնութեն․ զի թէ եւ ոմանց թըւի բառիցն նշանագրութ՟ եւ բայիցն առաջարկութ՟, յայտնութք ՚ի ստուգաբանութեն նըւաղել ո՛չ ինչ է ըսքանչելի․ ք՟ զի յայտ դժուարաւ են ասելիքս այսպիսիքս․ այսուիկ եւ ա՟ծայինն պօղոս խնդրէր առ ՚ի յա՟յ բան ՚ի բանալ բերանոյ իւրոյ․ եւ զի ո՛չ բժնեն զմինն տ՟ր յ՟ս ք՟ս պարտ գոլ ասելով պ՟տշաճել զձայնսն ա՟ծութեն նր՟ դ՟ձլ՟ զա՟ծ զա՟ծավայելուչսն և մ՟րդկութեան ն՟ր զմարդկօրէնսն, զիա՞րդ ոչ է ամենեցունց յայտնի։

*Բանզի ստուգեն ո՟պ ասացի. եթէ նոյն որ յա՟յ հօրէ բանն՝ ծնեալ նախ քան զյաւիտեանս, և՚ի յետին ժամանակս ծընաւ ՚ի սրբոյ կուսէն. և ՚ի վ՟ր բերեն թէ վ՟ս անպատմելի և անշփոթ միաւորութ՟են, և ա՟ծածին գոլ հաւատան ըզս՟բ կոյսն, և մի որդի և ք՟ս և տ՟ր գոլ խոստովանին հաւատեաւ։

*Անհաւատալի՛ է ամենեւին և մի ասել և բաժանել յերկուս զմինն կարծել զն՟ա, ք՟ զի ոչ գոյին յայս խոցոտուածն. ո՟պ զի յանցաւորս կացուցանել զինքեանս. և զոր ինչ քակեցինն՝ ուղղակի շինել անախորժաբար, ք՟ զի թէ դեստորի թըւեցելոցն հետևին՝ զիա՞րդ նզովեն զայնս ո՟պ պիղծս և անարգս։ *Արկնին պա՛րտ գոլ և զպ՟տճառսն ասել վասն որոյ ՚ի յայս եկի ՚ի նուրբս առասպել. վ՟ս զի արիոսի անպարշտութ՟են զինաւորք ըզ ճշմարտութ՟են զօրութ յանպատեհսն հրա՟պուրէին. զառ ՚ի յա՟յ բանն ասեն լինել մարդ. սակայն անանձն առնուլ մարմին. և առնեն զայս՝ չար հնարիւք, զի զմարդկօրէնս ձայնսն հետևեցուցեալ նմա. ո՟պ փոքր գոլ ք՟ զհօր գերունակութին. իւրեանց մոլորութ՟եքն ցուցանեն. և այլաբուն ասեն գոլ քան զնա։

*Ս՟ յաւիտ երկուցեալ որևելեայքն. զի մի գուցէ ա՟յ բանին նուաստասցին փառքն և բնութիւն ՚ի մարդկօրէնս ասացելոցն, վ՟ս մարմնով տնօրէնութ՟են որոշեն ըզ ձայնսն. ոչ ՚ի յերկուս դէմս բաժանեալ ո՟պ ասացի զմինն որդի և տ՟ր, այլ են ինչ՝ զոր ած՟ուն նր՟ հետևեցուցեալ. և են ինչ՝ զոր մարդկուննորին. սակայն զամ՟ միոյ և նորին. *Լուայ թէ գըրեաց առ ոմանս ած՟ապաշտ եպսն՟ յովհաննէս ոչ թէ մինչ ի մ՟ հաւատեաւ ուսուցեալ և պայծառ ձայնիւ խոստովանեալ ըզբնութեցն զանազանութի. և բաժանեալ զձայնսն. նմանապէս բնութեցն. և վս՟ այսորիկ գայթակղին ոմանք. կարևոր էր մեզ և առ այս ասել: *Ոչ անգիտացան քո կատարելութիդ. քանզի զապօղինարի կարծեացն բիծ հեղեալ ի վե՟ իմոցն թըղթոց համարեցան, թէ անանձն ասեմ գոլ զսբ՟ մարմինն քի. և եթէ շփոթումն և խառնակումն և փոփոխումն եղեալ այ՟ բանին ՚ի մարմին. և կամ մարմնոյն փոխեալ յած՟ութեն բնութե. ոչ զի ոչ ինչ ևս պահեալ ամբողջ և մաքուր. և ոչ գոլ որ ինչ էն. Կարծեցին առ այսոքիւք և արիոսի հայհոյութեցն հետևիլ. և վս՟ այսորիկ ոչ կամին զզանազանութի տեսանել ձայնիցն. և է ինչ զոր ասէ ած՟ավայելուչս. և են ինչ զոր մարդկօրէնս. այլ վայելուչ գոլ յառէջ մարմնով տնօրէնութեն. *Խնդրես զի յայսպիսեացս ՚ի բաց եմ հեռացեալ, վկայեսցէ առ այս քո կատարելութիդ. սակայն գայթակղեցելոցն պարտէր պատասխանիս առնել: այսուիկ գրեցի առ նր՟ ած՟պաշտութին եթէ ոչ խորհեցայ ուրեք զարիոսին և ոչ զապօղինարին. և ոչ փոփոխեալ զբանն այ՟ ՚ի մարմինն ասեմ. այլ և ոչ ՚ի բնուի՟ ած՟ութեն փոփոխիլ ըզմարմինն վս՟ անփոփոխելի գոլոյն և անայլայելի ըղ բանն ած. *Անշմարին է եւ միւսն. եւ ոչ ՚ի բաց բարձցի ձայնիցն զանազանութի. այլ գիտեմ զքս ածավայելչաբար եւ մարդկօրէն խօսեցեալ. քանզի է ՚ի նմին ած եւ մարդ. *Արդ՝ զայս ըղ նոյն նըշանակել կամեցեալ գրեթէ՝ ուսոյց խոստովանիլ զբնութեանցն զանազանութի, եւ անջատել զձայնսն. նմանապս զբնութեանցն. *Իսկ այսպիսի բանքս՝ ոչ են իմ. այլ ՚ի նմանէ՝ ասացան. *Կարեւոր համարիմ եւ զայն բերել ՚ի վր ասացելոցն. քանզի եկեալ առիս ածապաշտ եպսն Պօղոս եմեսացւոց քաղաքին. եւ բանից շարժեցելոց յաղագս ուղիղ եւ անբիծ հաւատոյս հարցանէր ցիս յոյժ փոյթ յանձին ունելով, եթէ հաւանակի՞ց եմք գրեցելոցն առ յերեքերանեան հօրէն մերմէ Աթանա

սէ, առ Եպիկտիտոսն եպս կորնթացւոց. *Իսկ ես ասացի եթէ է՞ առ քեզ ոչ ապականեալ. քզի բազում ինչ փոխեցին ՚ի նըմանէ թշնամիքն ճշմարտուե. հաւանակից եմ եւ ամենեւին նմ իրօք. *Իսկ նա ասէ՝ ունիմ ես զթուղթն. բայց կամիմ ՚ի ձերոց օրինակաց ըստուգել եւ տեսանել թէ արդեօք փոխեցա՞ւ ինչ ՚ի գրոյս թէ ոչ. որ եւ առեալ իսկ օրինակ հին, եւ ընդ օրինակեալն՝ գտանէր ապականեալ զնա. եւ աղաչեալ առնուլ պատճէն ՚ի մերոցս գրոց, եւ առաքել եկեղեցւոյն անտիոքացւոց որ եւ եղեւ իսկ. *Ահա այս է զոր գըրեաց ածապաշտ եպսն Յոհաննէս առ կառինոս վս իմ. թէ գըրեաց առ մեզ վս մարդանալոյն տն. ընդ նմին առաքեալ առ մեզ եւ ըղ հայրենականն դաւանու

դ ճ, թ ժի

թ՟ի. և զի այսպէս սաստ ցից փոքր ինչ և՚ի մարդ կանէ վտանգեալ.

* Իսկ թէ բերիցեն ոմանք թուղթ ո՟չ գրեալ առ ՚ի փիլիկեայ սրբուհեր քահանայէն հռոմայեցւոց եկեղեցւոյն. ո՟չ թէ մինչ ա՟ծաւեր եպիսկոպոսին քուսեայ դըժնարացեալ վ՟ն ՚ի բաց ընկենլոյն զշխասարխս. և ընդ դիմացեալ նմա՛ մի՛ հաւատայցէ քո սրբութ՟իդ. * Բազի համաձայնս գրեաց սրբոյ ժողովոյն. և զա՟մ ինչ հաստատեաց զառ ՚ի նմանէ ստացեալ. և է՛ համախոհ մեր. * Իսկ ո՟չ թէ յինէն գրեալ բերցի առ ՚ի յոմանց թուղթ. ո՟չ թէ մինչ զղջացեալ եմ ՚ի վ՟ն եղելոցն յեփեսացւոց ժողովին. ծիծաղեսցիս և զայնու բիկ. քանզի եմք վ՟ն փրկչին շնորհի ՚ի բարւոք խոհականութ՟ն. և՚ի պատշաճ խոր

հըրդոյն ո՟չ եմք բերել արտաքս ասել ինչ: * Որք առ քեզ եղբարցդ՝ յորոց ընդ մեզ՝ ողջոյն.

⁂

Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրի. Գրութիւնն [illegible] առ Յօհաննէս եպիսկոպոսն Անտիոքա[illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] հետ Յոհաննէս.

⁂

* Գլուխ. * ԽԳ.

ՏԵԱՌՆ ԻՄ սիրելի եղբօր եւ պաշտօնակցի մերոյ յոհաննու, Կիւրղոս ՚ի տէր խնդալ. * Ուրախ լիցին երկինք և ցնծասցէ երկիր. քանզի լուծաւ միջնորմ ցանկոյն. դադարեցաւ տրտմութ՟ին. և ա՟մ երկպառակութ՟ն ՚ի բաց բարձաւ պատճառ. * Ամենեցուն փրկչին մերոյ ք՟ի, եկե

դ՟ձի ղեցեաց

ղեցեաց իւրոց ըղխաղաղութ̄ի պարգևեալ. կոչեալ առայս զմեզ և բարեպաշտ և ա̄ծասէր թագաւորացն՝ որք հայրենական բարեպաշտուբ̄ն նախանձաւորք եղեալք զգուշուբ̄ և անշարժապէս պահեն յանձինս իւրեանց զուղիղն հաւատ. և առաւելապէս առնեն ըղհոգաբարձութ̄ի յաղագս սր̄ց եկեղեցեաց. զի և հռչակելի ունիցին յաւիտեան զպատիւն. և փառաւոր երևեցուսցեն զիւրեանց թագաւորութիւն. *Որոց և ինքն զօրութե̄ցն տ̄ր, հարուստ ձեռամբ բաշխէ բարութի̄ս. և տայ տիրել հակա̄կորդաց. և շնորհէ՝ յաղթու̄ի. քանզի ոչ ուրեք ստէ որ ասէն՝ կենդանի եմ ես ասէ տ̄ր. զի զփառաւորիչս իմ փառաւորեցից. *Արդ՝ եկեսցուք այժմ յաղեքսանդրիա տեառն և ա̄ծպ̄շտ պ̄շտ̄նակցի եղբօր իմոյ պ̄ղսի, խնդուբ̄ս լցե̄լ լինէաք. և յոյժ վայելչաբար. ո̄զի առն այսպիսւոյ միջնորդ եղելս. և ի վեր քան ըղզօրութ̄ի հանդիսցելս 'ի բանս. զի յաղթեսցէ և բանսարկուին նախանձու, և ժողովեսցէ զանջատեալսն. և զոր 'ի միջոյ գայթակղութիւն 'ի բաց բարձեալ համամըտութ̄բ. և խաղաղութ̄բ պսակեսցէ զմեզ և ըղձերդ եկեղեցի. քանզի թէ զի՞նչ եղանակի՝ անջատեցաւ՝ անհելորդ է ասել. այլ պիտոյ գոլ հմարիմ ըղխաղաղութեան ժմանակիս զվայելուչսն խորհիլ և ասել. *Ուրախ եղաք այժմ ե̄ խօսս ա̄ծպաշտ առնս զոր յիշեցաքս. որ և ոչ փոքունս ինչ հանդիսացեալս 'ի հաւանեցուցանել ըղմեզ. թէ պարտ է 'ի խաղաղութ̄ի ժողովել զե կեղեցիսս. և զայլափառիցն ապականել զծաղը· բըլթել առ այսոքիւք զբանսարկուին չարահնարութե խայթոցս. և այսպէս պատրաստաբար ունօղս էհաս յայս. ո՟պ զի ոչ ինչ աշխատութի՟ս կրել ամենևին, * Բան զի յիշեմք զասելն փրկչին. զխաղաղութի՟ զիմ տամ ձեզ. և զխաղաղութի՟ զիմ թողում ձեզ. * Ուսաք և յաղօթս մեր ասել. տ՟ր ած՟ մեր ըզխաղաղութի՟ քո տուր մեզ: ո՟պ զի թէ ոք եղիցի առ ՛ի յայ՟ բաշխեցելոյն խաղաղութի՟, անկարօտ եղիցի ամ՟ բարութե. և զի աւելորդ ամենևին և ոչ բարւոք պատճառ եղև եկեղեցեաց երկպառակութի՟ն. այժմ հաւանել եմք տեառն իմոյ ած՟ապաշտի Պօղոսի եպիսկոպոսի բերեալ առ մեզ մատեան անաղարտելի ունօղ ըզհաւատոյս խոստովանութիւնն, և զայս գրե՟լ առաջի քոյոյդ սրբութե և որոց այդր ած՟ապաշտից եպիսկոպոսացդ. և ունի այսպէս զշարադրութի՟ս. և այսոքիւք բառիւքէ եդեալ ՛ի թղթիս. * Յաղագս ած՟ածին կուսին մարիամայ, թէ զիարդ խորհիմք և ասեմք. և մարդանալոյն եղանակի միածնի որդւոյն այ՟ կարևորապ՟ս ոչ յաւելուածոյ մասամբ, այլ հաւատարմութե՟ տեսակաւ ո՟պէս անդստին յած՟այնոյն գրց՟ և աւանդութե՟ սրբոց հարցն առեալ ունիմք ՛ի ձեռն. * Դուզնաքեայ ասասցուք, ոչ ինչ ամենևին յաւելել ՛ի սրբոց հարցն որք ՛ի Նիկիա արտադրեալն հաւատ, քանզի որպէս հասաքն ասել առ ամ՟ բաւական է և ՛ի բարեպաշտութե՟ գիտութի՟. և ամ՟ հերձուածողական չարափառութե՟ կործա նումն. եւ ասեմք ոչ յանդըգնելոյ յանհասանելեան. այլ խոստովանութբ մերոյս տկարութե 'ի բաց փակելով, զոր 'ի վր յարձակելոյն կամեցեալ. զորոց 'ի վեր քան զմարդկային չափս նկատեմք.

Արդ՝ խոստովանիմք զտր մեր յս քս զորդին այ միածին ած կատարեալ եւ մարդ կատարեալ 'ի հոգւոյ բանականէ՝ եւ 'ի մարմնոյ. նախ քան զյաւիտեանս 'ի հօրէ ծնեալ ըստ ածութեն. իսկ 'ի յետին ժամանակս զնոյն ինքն վս մեր եւ վս մերոյ փրկութե 'ի Մարիամայ սրբոյ կուսէ ըստ մարդկութե. համագոյ հօր ըստ նոյն ինքն ածութեն, եւ համագոյ մեզ ըստ մարդկութեն. քանզի երկուցըն նութեց եղեւ միաւորութի վս որոյ մի քս մի որդի մի տր խոստովանիմք. Աւ զսբ կոյսն ածածին վս բանին այ մարմնանալոյն եւ մարդանալոյն 'ի նմանէ. եւ անդստին իսկ 'ի յղութենէն միաւորել ը իւր զառ 'ի նմանէ առեալ մարմինն. իսկ զաւետարանականս եւ զառաքելականսն յաղագս տեառն ձայնս՝ գիտեմք զածաբանս արս. է ինչ զոր հասարակաց արարեալ որպ 'ի վր միոյ դիմի. եւ է ինչ զոր 'ի վր երկուց բնութեց. եւ զածավայելուչսն ըստ ածութեն քի. իսկ զմարդկօրէնս ըստ մարդկութեան նորին աւանդեալ.

Օ այսոսիկ զձեր սրբազանս զձայնս ընթերցեալ. այսպէս դտանեմք խորհեալ եւ զմեզ. քանզի մի՛ է տր. մի՛ հաւա մի՛ մկրտութի. փառաւորեմք զեղորիցս փրկիչն ած. միմեանց խնդակիցք եղեալք. զի ածաշունչ գրոց եւ ա-

դ ճխ դ   ւան

ւանդութ՟ի սրբոց հարցն մերոց զհամաձայնն ունին հաւատ մերքս և ձեր եկեղեցիք ·

Իսկ վս՟ զի լռեալ զպարսաւաւորաց ոմանց զի ծակաց վայրենեաց՝ ջնջեցուցանել դաժանս ըղդայռելով իմն բանս · *Ոչ ՛ի յերկնից բերել և ոչ ՛ի սրբոյ կուսէն ասացեալ ըզս՟բ մարմինն Քի · պարտ համարեցայ փոքր ինչ ասել առ նս՟ · *Ով անմիտք և միայն գիտօղք զըպարտել · զի ո՞րդ եկիք յայս մտածութի և յայս քան ախտացայք հիւանդութ՟ի · քան զի պարտէր ՛իմաստուն ինչ ածել զմտաւ · Օ ՛ի գրեթէ՝ ա՟մ ջանս մեր որ յաղագս հաւատոց՝ ժողովի և հաստատէ թէ ա՟ծածին է ս՟բ կոյսն Մարիամ · *Իսկ եթէ յերկնից՝ և ոչ ինմանէ ասեմք ծնեալ զս՟բ մարմինն ամենեցուն փրկչին մերոյ

Քի · զիա՞րդ տակաւին ի մտացի ա՟ծածին · զո՞ր ոք տակաւին ծնաւ եթէ ոչ է ճշմարիտ · եթէ ծընաւ ըստ մարմնոյ զէմմանուէլ · ծաղր եղիցին այժմ որք զայսպիսի դանդաչեն վս՟ իմ · *Բան զի ոչ սուտէ երանելի մարգարէն եսայեա · ահա՛ կոյսն յղասցի և ծնցի որդի · և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ · որ թարգմանի ը՟ մեզ ա՟ծ · ճշմարտ է՛ ա՟մ իրք և ս՟բն գաբրիէլ առ երանելի կոյսն ասելով · մի՛ երկնչիր մարիամ · քան զի գտեր շնորհս յա՟յ · և ահա՛ յղասցիս և ծըցես որդի · և կոչեսցեն զանուն նր՟ յս՟ · նա՛ փըրկեսցէ զժողովուրդ իւր ՛ի մեղաց իւրենց · *Իսկ յորժամ ասեմք ՛ի յերկնից ՛ի վերուստ զտ՟ր մեր յս՟ քս՟ · ոչ ոպ՟ յերկնից իջելոյ սրբոյ մարմնոյ նր՟ ասեմք զայսպիսիս · այլ հետևելով յաւէտ ա͞ծայնոյն Պօղոսի գոչողին հաւաստեաւ · առաջին մարդն յերկրէ հողեղէն. իսկ երկրորդն 'ի յերկնից · * Յիշեմք և զնորին իսկ փրկչին զասելն · ոչ ոք ել յերկինս՝ եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ · որ և ծընաւն ըստ մարմնոյ ո͞պ և ասացի իսկ այժմ՝ 'ի սըրբոյ կուսէն · * Իսկ վ͞ս զի որ 'ի վերուստ 'ի յերկնից իջեալ ա͞ծն բան ունայնացոյց զինքն զկերպարանս ծառայի առեալ՝ և երևեցաւ որդի մարդոյ յետ գոլոյն որ ինչ էրն. այսինքն ա͞ծ · * Քանզի անփոփոխելի է և անայլայլելի ըստ բնութ͞ն · ո͞պ մի՛ իմացե͞լ իւրովն մարմնովն յերկնից իջեալ ասի· անուանի և մարդ 'ի յերկնից · կատարեալ գոլով ա͞ծութեամբն · կատարեալ նոյն ինքն եւ մարդկութեամբ · * Եւ ո͞պ միով դիմով իմացե͞լ· քանզի մի՛ է ո͞ր յ͞ս ք͞ս · թէ և բնութե͞ցն տարբերութ͞ի ո՛չ լինի անգիտացեալ · յորոց զանձառելի միաւորութին առեմք եղեալ · իսկ որք ասենն եթէ խառնակումն կամ շփոթումն եղև բանին ա͞յ առ մարմինն , արժանաւորեսցէ քո սրբութ͞դ տասել · քանզի սմանց թերևս զայսոսիկ յաղագս իմ ասել · կամ ո͞պ խորհիլն կամ ասացեալ · իսկ ես այս քան հեռի եմ 'ի խորհելոյ զայսպիսի ինչ · որպէս զի և մոլեգնիլ կարծել զորս համարին բնաւին եթէ փոփոխման ըստուեր յա͞ծայինն բընութիւն բանին է կարողութիւն պատահիլ · * Քանզի մնաց որ ինչ էրն միշտ և ոչ այլայլի · այլ և ոչ ևս այլայլեսցի երբ͞էք ուրեք և փոխադրութե͞

դ͞ձխե եղիցի

եղիցի ընդունակ. այլ անախտ առ այս խոստովանիմք զբանն ա՟յ գոլ ամենեքեան. եթէ և ամէն իմաստաբար ինքն անօրինապէս ըզխորհուրդն յինքեան հետևեցուցել երևի զիւրոյն մարմնոյն պատահեալսն կիրս.

*Ըստ այսմիկ և ամէն ի մասին Պետրոս. ք՟ի չարչարեալ մարմնով վ՟ն մեր. և ոչ բնութե՟ անճառելոյ ածուեն. և զինքն բոլորից փրկիչն ըստ իւրում անօրինականի ո՟պ և ասացի յինքն վերաբերեալ գոլ հաւատասցի զիւրոյն մարմնոյ զչարչարանս՝ որպիսի ինչ էն ի ձեռն մարգարէին ձայնի յառաջագոյն ասացել ո՟պ ի նմանէ՝. զթիկունս իմ ետու ՚ի հարուածս, և զծնօտս իմ յապտակս՝ և զերեսս իմ ո՛չ դարձուցի յամօթոյ ընդ երեսս իմ թքանելոյ. իսկ վ՟ն զի որ՟ց հարցն թլ՟եցելոց

հետևիմք յա՟մ ուրեք, մանաւանդ երանելոյն և ամենահռչակելի հօրն մերոյ Աթանասի, որ եւ ըստ իրօք բնաւին յարտաքս ելանելոյ ՚ի բաց հրաժարեալք, հաւատասցէ քո սրբութի՟դ. և մի՛ ոք երկբայեսցի յայլոց. *Քանզի եդեալ էր արդեօք բազում ինչ բանս զիմն հաւատարմացուցանելով ՚ի նորայոցն. եթէ ո՛չ էր երկուցեալ յերկայնութե՟ գըրոյս. զի մի՛ դուցէ եղիցի վ՟ն այսորիկ առ յագուրդ. և ո՛չ ըստ միոյ եղանակի շարժել առ՚ի յոմանց առնումք յանձն զմիաւորեալն հաւատ. այսինքն զհաւատոյս նըշանակն զոր առ ՚ի սրբո՟ցն մերոց հարց ՚ի նիկիայ ժողովեցելոցն ՚ի ժամանակին յայնմիկ. *Այլ և ո՛չ հրամայեմք մեզ ինքեանց կամ այլոց՝ բառ ինչ փոխել յորոց անդն.

և կամ անցանել զմիով սողոբայիւն. յիշելով զառաքելոյն. մի փոխել ըզսահմանս յաւիտենական զոր եդին հարքն քո.

* Քանզի ոչ էին նոքա որք խօսէինն, այլ հոգին ա՟յ և հօր որ ելանէ 'ի նմանէ. և ոչ օտար յորդւոյ ըստ էութե՟ն բանի. և առ այս զմեզ սրբոյն խորհրդածուք ե՟նք հաւատարմացուցանեն. զի 'ի գործս առաքելոցն է գրեալ թէ, եկեալք 'ի միւսիա՝ կամէին երթալ 'ի բիւթանիա. և ոչ ետ նոցա թոյլ հոգին ս՟բ. գրէ և ա՟ծայինն Պօղոս. իսկ որք ըստ մր՟մոյ են ա՟յ հաճոյ լինիլ ոչ կարեն. այլ դուք ոչ մարմնով, այլ հոգւով. եթէ հոգի ա՟յ է իձեզ բնակեալ. իսկ եթէ ոք ըզհոգին ք՟ի ոչ ունի՝ սա չէ ն՟ր.

* Իսկ եթէ ոմանք որք զուղիղսն թիւրելն են սովորեալք, և զիմս փոխեն զձայնս, մի զարմասցի ընդ այս քո սըրբութիդ. գիտելով թէ որք յա՟մ հերձուածոց յա՟ծաշունչ գրոց զխորեսնոցն մոլորու՟ե պատճառս զորս 'ի ձեռն հոգւոյն սրբոյ ուղղակին են ասացեալք, իւրեանց չար իմացիւքն ապականեն. և ի լ՟ի իւրայնոցն գլխոց զանշէջն կուտեն հուր. իսկ մե՟ զի լուաք թէ և զոր առ երանելին Եպիկտիմոն թուղթն ամենահռչակին հօր մերոյ աթանասի զուղղակի գրեալսն՝ ապականել ոմանց ետուն. որպէս զի յայսմանէ վնասիլ ամենց զպիտանի և զկարեւորն հոգատարեալ եղբարց յօրինակաց հընոց որ առ մեզ անմոլար ունելով առաքեցաք զպատճէն քոյդ սրբութեան.

դ՟ ծիւէ վկայ

*Միաւորութեան .

⁂

Միաւորութին 'ի սրբոց հարցն
Եպիսկոպոսաց .

*Զոր ծաղկեաց 'ի յոլովից ճառից մեծ եպիսկոպոսն Կիւրեղ աղեքսանդրացի . Սա 'ի յանդիմանութին ամբարշտութեանն նեստորի

Գլուխ . ԽԳ .

⁂

*Սրբոյն Պետրոսի Եպիսկոպոսապետին աղեքսանդրի եւ նահատակի . Յորմէ որ յաղագս ածութեան գրոյ .

ՎԱՍՆ ԶԻ ՆԱ ճըշմարտապէս շնորհն եւ ճըշմարտութին 'ի ձեռն յի քի եղեն, ուստի շնորհիւ եմք ապրեալք' ըստ առաքելականն բանին . եւ այս ոչ 'ի մէնջ . այլ յայ պրգեւ է . ոչ 'ի գրծոց . զի մի ոք պարծեսցի կամելով աստուծոյ բանն մարմին եղեալ . եւ ձեւով գտեալ ոպ զմրդ . ոչ նուաղել յածութէն քանզի եւ ոչ 'ի զօրութէն

ԻՒ

*Սրբոյ Հոգւոյն .

խորհէ կամ 'ի փառացն 'ի քեզ կացցէ . աղքատացեալ Յիսուսն եղեւ այս . այլ զի եւ զմահն վս մեր մեղաւորացս յանձն առցէ . արդարն վս անարդարոցս . ոպ զի զմեզ մատուսցէ այ մեռեալ մարմնովն եւ կենդանացեալ հոգւովն .

⁂

*Եւ յետ այլոյ :

Ուստի եւ անճառաբանելին զոր չմարթէ' ասելովն, բանն մարմին եղեւ եւ բնակեցաւ 'ի մեզ . յայտ է' թէ յայնժամ յորժամ հետէ հրեշտակին ետ ողջոյն կուսին ասելով . ուրախ լեր բերկրեցեալ . տէր ընդ քեզ . այժմէ լսել գաբրիէլի փոխանակ թէ ածն բան ընդ քեզ . *Քանզի նըշանակէ' զնա եղեալ յարգանդի . եւ մարմին եղեւ ըստ որում գրեալն է . հոգին սբ եկեսցէ 'ի քեզ եւ զօրութիւն բարձրելոյն

դձխը հո

*Ս [illegible]·

Հովանի եղիցի 'ի վ՟ր քոյ· վ՟որոյ և ծնեալն ս՟բ է և որդի ա՟յ կոչեսցի·

* * *

*Ա [illegible]·

Իսկ ա՟ծն բան, առանց առն, ը՟ կամացն զա՟մ կարողին ա՟յ գործեալ· եղև յարգանդի կուսին մարմին· ոչ եղեալ կարօտ առն ներգործութե՟ կամ մերձաւորութե՟· ք՟զի ներգործողագոյն քան զայր արար զօրութե՟ն ա՟յ հովանի եղեալ կուսին հանդերձ եկելովն ս՟բ հոգւոյն·

* * *

*Տ [illegible]· Յորդ [illegible] գրոց·

ԲԱԶՈՒՄՔ եղեն ս՟բք յա՟մ մեղաց· երեմիամ՝ 'ի յարգանդէ իսկ սրբեցաւ· և յովհաննէս տակաւին յորովայնին խայտաց ցնծալով 'ի ձայնէ ա՟ծածնին Մարիամու· և սա

[illegible]

*ՍՐԲՈՑ ՀԱՐՑՆ·

կայն թ՟գ՟րեց մահ յդ՟մյ մինչև ցմովսէս և 'ի վ՟ր չմեղուցելոցն ը՟ նմանութե՟ յանցուածոցն ադամայ· և այսպէս մնացին մարդիկ ոչ ինչ սակաւս մահկանացուք և ապականացուք ը՟ ունակ բնութե՟ն իւրեանց ախտից· *Իսկ այժմ բանին եղեալ մարդ և իւրացուցեալ զմարմնոյն· ոչ ևս հպին այսոքիկ 'ի մարմինն վ՟ 'ինըմն եղելոյ բանին· այլ 'ի նմանէն 'ի բաց բարձեալ լինին· *Այնուհետև և մարդիկ ոչ ևս ը՟ իւրեանց ախտիցն մնան մեղաւորք և մեռեալք· այլ ըստ բանին զօրութե՟ յարուցեալք անմահք և անապականք մնացեն·

*Ո՞ւստի եղեալ մարմնոյն յա՟ծածնէն Մարիամայ, ինքն ասի ծնեալ՝ որ այլոցն պարգևէ ծնունդ 'ի գոյութի՟· զի զմերս ծնունդ յինքն փոխադրեսցէ· և ոչ ևս

դ՟ձխթ մի

միայն ոչ հողեղէնք ՚ի հող դարձցուք, այլ ոչ ընդ երկնից բանին միաւորեալք ՚ի յերկինս համբարձցուք առ ՚ի նմանէ։ *Ապա ուրեմն այսպէս և զայլ կերպն մարմնոյ՝ ոչ փոխադրեսց վայրապար յինքն՝ զի մի՛ ևս ոչ մարդիկ. այլ որ պիտիք բանին յաւիտենից կենացն հաղորդիցուք։ *Քանզի և ոչ ևս ըստ առաջին ծննդեանն յադամայ մեռանիմք. այլ այնուհետև ծննդեանս մերոյ և ա՟մ մարմնականիս ապականու՟թ փոխադրեցելոցս ՚ի բանն՝ յարիցուք յերկրէ. ընծիցելոյ վ՟ս մեղացն անիծից, ՚ի մեզ վ՟ս մեր եղելոյ անէծքն։

⁂

*Յուլիոսի եպ՟ի Հռօմայ ի Թղթոյն որ առ Պրօսդօկիոս։

ՔԱՐՈԶԵԼԸ

րումն հաւատոցս և մարմնացեալ ՚ի կուսէն

Մարիամայ որդին ա՟յ և բնակեալ ՚ի մարդիկ՝ ոչ մարմնով ներգործեալ. քանզի այս ՚ի վ՟ր մրգ՟րէից և առաքելոց է. այլ կատարեալ ա՟ծ մարմնով և մարդ կատարեալ հոգւով. ոչ երկու որդիք միոյն բնութ՟ե առեալ մարդ՝ իսկ միւսն մահկանացու մարդ առեալ յա՟յ. այլ միածին ՚ի յերկինս միածին ՚ի յերկրիս ա՟ծ։

⁂

*Սրբոյն Փիլիքսեայ Եպ՟ի Հռօմայ և վկայի ՚ի Թղթոյն որ առ Մաքսիմոս եպ՟ս Աղեքսանդրի Եւ ՚ի նորին Թղթին։

⁂

ԻՍԿ ՎԱՍՆ

մարմնաւորութ՟ե բանին և հաւատոյ.

*Հաւատամք ՚ի տ՟ր մեր յ՟ս ք՟ս ՚ի սրբոյ կուսէն Մարիամայ ծնեալ. զի սա է ա՟յ մշտնջենաւոր դ՟ձիդ՟ որ որդի և բան. և ոչ մ̅րդ յա̅յ առեալ. զի այլ ոք իցէ քան զնա, *Բանն զի ոչ մարդ էառ որդին ա̅յ զի իցէ այլ ոք քան զնա, այլ՝ ա̅ծ գոլով կատարեալ՝ եղև համանգամայն և մարդ կատարե̅լ՝ մարմնացեալ ՚ի կուսէ,

* * *

*ԹԷՈՓԻԼԵԱՅ ԵՊ̅ՍԻ ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՚Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՕՆԱԿԱՆԷՆ,

* * *

ՔԱՆ, Օ, ԻՆ՞ է՝ յանժամ սքանչելեացն նշխար, մի՝ անհաւատ լիցին և թէ զօրութի̅ն ա̅յ կարօղ է առնել կուսի ծնանիլ. յորում եղեալ կենդանին ա̅յ բանն վ̅ս առ մեզ նմանութե̅ն. ք̅ զի այլ ազգ լինիլ առ մեզ մերձաւորութե̅ն ն̅ր ոչ էր մարթ. զի մի՝ ՚ի ցանկութէ̅ և ՚ի քընոյ ա̅պ ՚ի վ̅ր այլոց ունի ընկալցի զմարմինն. այլ ըստ նմանութե̅ այսորիկ առնուս՚ի կուսէ ծնեալ մարդ երևեալ իբրև ըզմեզ ՚ի ծառայի կերպի. բայց ՚ի գործոցն ցուցանի ամ̅ցնց արարչագործ և տ̅ր՝ գործելով զգործս ա̅յ.

* * *

ՙՆՈՐԻՆ ՚Ի ՏՕՆԱԿԱՆԱՅ ԸՂԸՆՈՅՆ

ՙԲանզի ո̅պ արուեստաւորացն ճարտարք ոչ միայն ՚ի պատուականաց նիւթոց երևեցուցեալ զարուեստն սքանչելի, այլ և յանարգ հողոյ և ՚ի մոմոյ՝ լուծելոյ յորվակի առեալ՝ զհանճարոյն իւրեանց ցուցանեն զզօրութի̅, յոյժ առաւել գովելին. *Ապաքէն և ք̅ զամենեսեան գեղեցիկ արուեստաւորն կենդանի և ներգործօղ բանն ա̅յ՝ կարգի յօդաւորութե̅ զարդարեալ զա̅մ. ոչ ՚ի պատուականն և յերկնային նիւթոյ առեալ մարմին եկն առ մեզ. այլ ՚ի կաւոյ դ̅ ճ ծ ա̅ ցու-

Մ[illegible]

ցուցանէ զմեծութիւն իւրոյ արուեստին զ՚ի կաւոյ ըստեղծելն կանգնել մարդ. ինքն ՚ի կուսէ նոր վայելչութեամբ յառաջ եկեալ մարդ. զեղանակ ծննդեանն փոխեալ. *Իսկ ըստ ամենայնի յառ մեզ նմանութենէս առանց մեղաց ՚ի ծննդենէն ոչ փախուցեալ. *Խանձարրօք պատեալ. կաթնաբուծեալ. մանուկ ՚ի մսուր եդեալ. զբնութեանս մերոյ տկարութիւն ընկալեալ վասն առաջին յանցանացն. այլ տակաւին մանուկ գոլով, համանգամայն ըզթշնամին և զնորային փաղանս խռովեցուցանէր. զմոգսն քարշեալ յա̃շխարութ̃. և հարկաւորեալ արհամարհել զթագաւորն զառաքիչն նոցա.

⁂

*Սրբոյն Կիպրիանոսի Կարթա-
գինեցւոց հայրապետին [illegible]
[illegible] և կուսին.
*Ցուցէ որ յաղագս

Սրբոյ Հոգւոյն.

ողորմածութեան ճաշու.

⁂

ԲԱԶՈՒՄ և մեծամեծք են եղբարք սիրելիք՝ աստուածայինն բարեգործութիւնք. յորոց զմերս փրկութիւն Աստուծոյ հօր և Քրիստոսի առատ և հարուստ մարդասիրութիւն գործեաց և մինչ գործէ. *Արդ՝ պահել զմեզ և կենդանացուցանել առաքեաց Հայր զՈրդի. զի զմեզ նորոգեսցէ. և առաքեցեալ Որդի կամեցեալ որդի մարդոյ լինել, որպէս զի զմեզ որդիս Աստուծոյ յօրինեսցէ. *Խոնարհեցոյց զինքն՝ զի զժողովուրդն ապարասանել՝ վերստին ստասցի. զի զմեր վէրս բժշկեսցէ. ծառայեաց՝ զի զծառայս յազատութիւն ածցէ. զմահ կոխեաց՝ զի զանմահութիւն մահկանացուացս տացէ.

Գձծէ Ա

Վերջաւորութիւն.

* * *

Մեկնութեան Լուսոյ Գրոց Նորոյ.

* * *

ԵԹԷ ԻՆՉ ՈՉ հաւատան՝ հաւատասցեն առաքելոյ որ ասէն. թէ յորժամ եկն լրումն ժամանակի, առաքեաց ա՟ծ զորդի իւր որ եղև ՚ի կնոջէ, և եմուտ ընդ օրինօք. զորդին իւր ասէ. ոչ մի ՚ի բազմաց. ոչ հասարակաց. այլ յինքենէ մշտնջենաւոր ծնընդեանն իւրում նշանակեաց. զսա յետ այսորիկ եղանիլ ի կնոջէ կազմէ. ոչ զի զլինելն ոչ ա՟ծութեն, այլ առեցելոյն մարմնոյ պարագրեսցէ. եղեալ ՚ի կնոջէ առեցելովն մարմնով. մըտեալ ընդ օրինօք վասն օրինացն պահպանութե. քանզի ա՟ծային նր ծնունդ նախ քան զօրէնսն. իսկ այս՝ յետ

*Սիրոյ Հարցն օրինացն.

* * *

Նորին Մեկնութեան

